



2000

ՄԻԱԿՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ՝  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԿՎԱՍՎԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎԱԾ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿՎԱՆ  
ՓՂԱՏՎԹՂԹԵՐ

UNESCO Cultural Heritage Laws Database  
(Copyright and Disclaimer and Acknowledgements)

ԵՐԵՎԱՆ 2000



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄՆԱԿՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ◆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1960 թ. ԴԵԿՏԵΜԲԵՐԻ 14)
- ◆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1989 թ. Ապրիլի 10)
- ◆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԶԻՆՎԱԾ ԸՆԴԱՐՄԱՆ ԴԵՊՐՈՒՄ ՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1954 թ. մայիսի 14)
- ◆ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵԲԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ, ԱՐՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՅԹ ՓՈԽՎԱՑՈՒՄ ԱՊԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԿԱՌԽԵԼՈՒ ՄԻՋՈՑԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1970 թ. մայիսի 14)
- ◆ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՁԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1972 թ. մայիսի 16)

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՂՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԿՆՔՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՓԱՍՏԱԹԵՐ

INTERNATIONAL LEGAL INSTRUMENTS  
ADOPTED  
WITHIN THE FRAMEWORK OF THE UNITED NATIONS  
EDUCATIONAL, SCIENTIFIC AND CULTURAL  
ORGANIZATION

Յրատարակության է պատրաստվել  
ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի  
Ազգային հանձնաժողովի  
և  
Միջազգային իրավունքի հայկական  
ընկերակցության կողմից

Prepared for the publication by the  
Armenian National Commission for UNESCO  
and  
Armenian Association of International Law

Տ Ի Գ Ր Ա Ն Մ Ե Ծ  
Յ Ր Ա Մ Ա Ր Ա Կ Յ Ա Տ ՈՒ Ն

## ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՉԱՐԻ ՄԱՍԻՆ (1960 թ. դեկտեմբերի 14)

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսը 1960թ. նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 15-ը Փարիզում հրավիրված իր տասնմեկրորդ նստաշրջանում՝

**հիշեցնելով**, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է խորականության անթույլատրելիության սկզբունքը և հռչակում յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը,

**ուշադրության առնելով**, որ կրթության բնագավառում խորականությունը համարվում է այդ հռչակագրում շարադրված իրավունքների խախտում,

**ուշադրության առնելով**, որ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը, իր Կանոնադրության համաձայն, նպատակ ունի համագործակցություն հաստատել ազգերի միջև, որպեսզի ապահովի մարդու իրավունքների համընդհանուր հարգումը և բոլորի համար կրթություն ստանալու հնարավորության հավասարությունը,

**ճանաչելով**, հետևաբար, որ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը, հաշվի առնելով ազգային կրթական համակարգերի բազմազանությունը, պարտականություն ունի ոչ միայն վերացնելու կրթության բնագավառում խորականության ցանկացած ծեր, այլև խրախուսելու այդ բնագավառում բոլորի համար հավասար հնարավորություն ու վերաբերմունք,

**իր տրամադրության մեջու ունենալով** կրթության բնագավառում խորականության տարբեր առումների վերաբերյալ առաջարկություններ, որոնք կազմում են նստաշրջանի օրակարգի 17.1.4 կետը,

**որոշած լինելով** իր տասներորդ նստաշրջանի ժամանակ, որ այդ հարցը միջազգային կոնվենցիայի, ինչպես նաև անդամ պետությունների հանձնարականների առարկա է,

**ընդունում է** 1960 թ. դեկտեմբերի 14-ին սույն Կոնվենցիան:

### Հ Պ Դ Վ Ա Ճ 1

1. Սույն Կոնվենցիայի նպատակի համար «խորականություն» արտահայտությունը ներառում է ցանկացած տարբերություն, բացառություն, սահմանափակում կամ նախապատվություն ռասայի, մաշկի գույնի, սեղի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համընդունքների, ազգային կամ սոցիալական պատկանելության, տնտեսական դրության կամ ժննդի հիմքով, ինչի նպատակը կամ հետևանքն է կրթության բնագավառում հավասար վերաբերմունքի վերացումը կամ խախտումը, մասնավորապես.

- որևէ անծի կամ անծանց խմբի ցանկացած տեսակի կամ մակարդակով կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը,
- որևէ անծի կամ անծանց խմբի կրթությունը ցածր ստանդարտով սահմանափակելը,
- որևէ անծի կամ անծանց խմբի համար կրթական առանձին համակարգեր կամ ուսումնական հաստատություններ ստեղծելը կամ պահպանելը, բացի այն դեպքերից, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 2 հոդվածի դրույթներով,
- որևէ անծի կամ անծանց խմբի համար մարդկային արժանապատվությանը անհարի պայմաններ ստեղծելը:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «կրթություն» արտահայտությունը վերաբերում է կրթության բոլոր տեսակներին ու մակարդակներին և ներառում է կրթություն ստանալու հնարավորությունը, կրթության ստանդարտն ու որակը, ինչպես նաև կրթություն տալու պայմանները:

### Հ Պ Դ Վ Ա Ճ 2

Հետևյալ իրավիճակները չեն դիտվում որպես խորականություն սկզբանական կոնվենցիայի 1 հոդվածում ամրագրված իմաստով, եթե դրանք բույասորվում են առանձին պետություններում

- կրթական առանձին համակարգերի կամ ուսումնական հաստատությունների ստեղծումը կամ պահպանումը տարբեր սեղի սովորողների համար այն դեպքերում, երբ այդ համակարգերը կամ հաստատություններն առաջարկում են կրթության համարժեք մատչելիություն, ապահովում են միևնույն ստանարդի որակավորում ունեցող դասավանդող անձնակազմ, ինչպես նաև միևնույն որակի դադոցական շենքեր ու սարքավորում, և տրամադրում են միևնույն կամ համարժեք ուսումնական դասընթացների հնարավորություն,

- կրօնական կամ լեզվական պատճառներով կրթական առանձին համակարգերի կամ ուսումնական հաստատությունների

ստեղծումը կամ պահպանումը, որոնք տախս են սովորողների ծնողների կամ խնամակալների ցանկությանը համապատասխանող կրթություն, եթե մասնակցությունն այդ համակարգերին կամ այդ հաստատություններ հաճախելը կանավոր է և եթե դրանց կողմից տրվող կրթությունը համապատասխանում է իրավասու իշխանությունների սահմանաձ կամ հաստատած ստանդարտներին, մասնավորապես, միևնույն մակարդակի կրթության համար,

- c) մասնավոր ուսումնական հաստատությունների ստեղծումը կամ պահպանումը այն դեպքերում, եթե դրանց նպատակը ոչ թե որևէ խմբի բացառումն է, այլ կրթության հնարավորությունների տրամադրումն ի լրումն պետական մարմինների տրամադրածի, եթե այդ հաստատությունները գործում են վերոհիշյալ նպատակին համապատասխան և եթե տրամադրվող կրթությունը համապատասխանում է իրավասու իշխանությունների սահմանաձ կամ հաստատած ստանդարտներին, մասնավորապես, միևնույն մակարդակի կրթության համար:

### Հոդված 3

Սույն Կոնվենցիայում տեղ գտած իմաստով, խտրականությունը վերացնելու և կանխարգելելու նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են.

- a) չեղյալ հայտարարել ցանկացած նորմատիվ ակտ ու վարչական կարգադրություն և դադարեցնել վարչական ցանկացած պրակտիկա, որոնք ներառում են խտրականություն կրթության բնագավառը,
- b) երաշխավորել, անհրաժեշտության դեպքում օրենսդրական կարգով, խտրականության բացարձիւ ուսումնական հաստատություններ սովորողների ընդունելության հարցում,
- c) չթույլադրել պետական մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ որևէ տարբերակված վերաբերնելունք, բացառությամբ ընդունակության կամ կարիքավորության հիմքով, կապված ուսման վարձի, կրթաբոշակների կամ սովորողներին աջակցության այլ ձևերի, ինչպես նաև կրթությունը օտարերկրյա պետություններում շարունակելու համար անհրաժեշտ թույլադրության և հնարավորությունների հետ,
- d) պետական մարմինների կողմից ուսումնական հաստատություններին այս կամ այն տեսակի օգնություն ցուցաբերելիս թույլ չտալ որևէ սահմանափակում կամ նախապատվություն, որը բացառապես հիմնված լինի սովորողների որևէ խմբի պատկանելության վրա,

e) իրենց տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիներին տրամադրել կրթություն ստանալու նույն հնարավորությունները, ինչ որ սեփական քաղաքացիներին:

### Հոդված 4

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, բացի այդ, պարտավորվում են մշակել, զարգացնել և վարել այնպիսի պետական քաղաքականություն, որն ազգային պայմաններին ու սովորություններին համապատասխանող մերողներով միշտված լինի նպաստելու կրթության բնագավառում հավասար հնարավորություն և վերաբերմունք ապահովելուն, մասնավորապես.

- a) տարրական կրթությունը դարձնել անվճար և պարտադիր, միջնակարգ կրթությունը իր տարբեր ձևերով դարձնել բոլորի համար հնարավոր և նատչելի, բարձրագույն կրթությունը դարձնել բոլորի համար հավասարապես նատչելի՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, ապահովել դպրոց հաճախելու՝ օրենքով սահմանված պարտականության կատարումը բոլորի կողմից,
- b) միևնույն մակարդակի բոլոր պետական ուսումնական հաստատություններում ապահովել կրթական ստանդարտների, ինչպես նաև տրամադրվող կրթության որակի հետ կապված պայմանների համարժեքությունը,
- c) համապատասխան մերողներով խրախուսել և զարգացնել տարրական կրթություն չստացած կամ այն չավարտած անձանց կրթությունը, նրանց կողմից կրթությունը շարունակելը՝ յուրաքանչյուրի ընդունակություններին հանձնապատասխան,
- d) դասավանդման մասնագիտության համար ապահովել վերապատրաստում առանց խտրականության:

### Հոդված 5

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները համաձայնում են, որ-
- a) կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու իիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի անրապնդմանը. այն պետք է նպաստի բոլոր ազգերի և ուսայական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխընթացանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության խաղաղության պահպանման ուղղված գործունեության զարգացմանը,
- b) էական նշանակություն ունի, առաջին հերթին, ծնողների և,

համապատասխան դեպքերում, խնամակալների՝ իրենց երեխաններին, պետական մարմնների կողմից պահվող ուսումնական հաստատություններից բացի, այլ ուսումնական հաստատություններ սովորելու ուղարկելու ազատության հարգումը, սակայն, եթե այդ ուսումնական հաստատությունները համապատասխանուն են իրավասու իշխանությունների սահմանած նվազագույն կրթական ստանդարտներին, և երկրորդ, տվյալ երկրում օրենսդրության իրացման համար կիրառվող ընթացակարգին համապատասխան կարգով, երեխանների համար, իրենց դաշնանքին համապատասխան, կրոնական և քարոյական կրթության ապահովումը, և ոչ մի անձի կամ անձանց խմբի չի կարելի պարտադրել սունալու կրոնական ցուցումների հակառակ իր կամ իրենց դաշնանքի,

- c) կարևոր է ճանաչել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սեփական կրթական գործունեություն ծավալելու իրավունքը, ներառյալ միջոցներ պահելը, և, պայմանավորված յուրաքանչյուր պետության կրթական քաղաքականությամբ, սեփական լեզուն օգտագործելու կամ դասավանդելու իրավունքը, սակայն պայմանով, որ
- i) այդ իրավունքի իրականացումը չի խոչընդունում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հասկանալու ողջ համայնքի մշակույթը ու լեզուն և մասնակցելու նրա գործունեությանը կամ դա չի վտանգում ազգային ինքնիշխանությունը,
  - ii) կրթության ստանդարտը ցածր չէ իրավասու իշխանությունների սահմանած կամ հաստատած միջիանուր ստանդարտից,
  - iii) այդպիսի դպրոցներ հաճախելը ֆակուլտատիվ է:

2. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են ծեռարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սույն հոդվածի 1 կետում շարադրված սկզբունքների կատարումն ապահովելու համար:

## Հոդված 6

Սույն Կոնվենցիան կիրառելիս մասնակից պետությունները պարտավորվում են մեծապես ուշադրության առնել հետագայում Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի կողմից ընդունվելիք հանձնարարականները, որոնք կսահմաննեն կրթության բնագավառում խորականության տարրեր ծևերի դեմ պայքարի միջոցառումներ և նպատակ կունենան ապահովելու հավասար հնարավորություն ու վերաբերմունք կրթության բնագավառում:

## Հոդված 7

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսին, վերջինիս սահմանած ժամկետում ու կարգով ներկայացվող իրենց պարբերական գեկույցներով, տեղեկատվություն են հաղորդում իրենց ընդունած օրենսդրական ու վարչական դրույթների՝ և այն միջոցառումների մասին, որ ծեռնարկել են սույն Կոնվենցիայի կատարման համար, ներառյալ այն միջոցառումները, որոնք ծեռնարկվել են 4 հոդվածում հիշատակված պետական քաղաքականության մշակման և զարգացման համար, ինչպես նաև տեղեկատվություն այդ քաղաքականության իրագործման արդյունքների և խոչընդուների մասին:

## Հոդված 8

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ Կոնվենցիայի երկու կամ ավելի մասնակից պետությունների միջև ծագած ցանկացած վեճ, որը չի լուծվել բանակցությունների միջոցով, վեճի կողմերի խնդրանքով հանձնվում է Միջազգային դատարանին, եթե վեճի լուծման այլ միջոցներն արդյունք չեն տալիս:

## Հոդված 9

Սույն Կոնվենցիային որևէ վերապահում չի թույլատրվում:

## Հոդված 10

Սույն Կոնվենցիան չի սահմանափակում այն իրավունքները, որոնցից անհատները կամ խմբերը կարող են օգտվել երկու կամ ավելի պետությունների միջև կնքված համաձայնագրերի ուժով, եթե այդ իրավունքները չեն հակասում Կոնվենցիայի տարին կամ ոգուն:

## Հոդված 11

Սույն Կոնվենցիան կազմված է անզերեն, իսպաներեն, ռուսերեն և ֆրանսերեն, բոլոր չորս տեքստերն էլ հավասարազոր են:

## Հոդված 12

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման կամ ընդունման Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետությունների կողմից՝ իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան:

2. Կավերագրերը կամ ընդունման փաստաթղթերն ի պահ են տրվում

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին:

Հոդված 13

1. Սույն Կոնվենցիային կարող է միանալ Միավորված ազգերի կրթության, գիտության և նշակալույթի կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետություն, որը Կազմակերպության Գործադիր Խորհրդի կողմից կստանա Կոնվենցիային միանալու հրավեր:

2. Միանալը կատարվում է Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին միանալու մասին փաստաթուղթը, ի ասի տակու միջոցով:

Задание 14

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Երրորդ Վակերագիրը կամ ընդունման կամ միանալու փաստաթուղթն ի պահ տալու օրվանից Երեք ամիս անց, բայց միայն այն պետությունների համար, որոնք իրենց վակերացման, ընդունման կամ միանալու փաստաթուղթն ի պահ են տվել նշված օրը կամ ավելի վաղ: Ցանկացած այլ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վակերացման, ընդունման կամ միանալու փաստաթուղթն ի պահ տալու օրը:

Задание 15

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ճանաչում են, որ այն կիրառելի է ոչ միայն իրենց մետրոպոլիտայի տարածքի, այլև ոչ ինքնավար, խնամարկյալ, գաղութային և այլ տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար իրենք պատահանասուու են. Երանք պարտավորվում են խորհրդակցել, եթե անհրաժեշտ է, օշված տարածքների կառավարությունների կամ այլ իրավասու իշխանությունների հետ վավերացնան, ընդունման կամ միանալու պահին կամ ավելի վաղ, որպեսզի ապահովեն Կոնվենցիայի կատարում այդ տարածքներում, ինչպես նաև Սիամի ուրված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին ծանուցել այն տարածքների վերաբերյալ, որտեղ Կոնվենցիան կատարվելու է: Այդ ծանուցումն ուժի մեջ է մտնում այն ստանալուց երեք ամիս անց:

Задание 16

1. Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է այն չեղյալ հայտարարել իր անունից կամ գանձկացած տարածքի անունից, որի արուաքին հարաբերությունների համար ապահանագործ է:

2. Եթեալ հայութաբեր ծանուցվում է գրավոր փաստաթղթով, որը ի սակ է լուրիսմ (Միակողմանական լուրության, օրինության և մշակույթի

Այսօնակերպության Գլխավոր տնօրենին:

3. Զենյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման փաստաթուղթը ստանալուց 12 ամիս անց:

Հոդված 17

Միավորված պազերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը Կազմակերպության անդամ պետություններին, 13 հոդվածում նշված, Կազմակերպության անդամ չհամույսացող պետություններին, ինչպես նաև Միավորված պազերի կազմակերպությանը հայտնում է 12 և 13 հոդվածներով նախատեսված վավերացման, ընդունման կամ միանալու բոլոր փաստարդերի ի պահ տալու, ինչպես նաև, համապատասխանաբար, 15 և 16 հոդվածներում նշված ժամուցումների ու չեղալ հայտարարությունների ճամանակ:

Հոդված 18

1. Սույն Կոնվենցիան կարող է վերանայվել Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի կողմից: Ցանկացած ննան վերանայված տեքստը, սակայն, կպարտավորեցնի միայն այն պետություններին, որոնք կդառնան մերժանալիք կոնվենցիաի մասնակիցները:

2. Եթե Գլխավոր կոնֆերանսը սույն Կոնվենցիայի ամբողջական կամ մասնակի վերանայման արդյունքում ընդունի նոր կոնվենցիա և, եթե նոր կոնվենցիան չնախատեսի այլ կարգ, սույն Կոնվենցիան կղաղաքի բաց լինել վավերացման, ընդունման կամ միանալու համար նոր, վերանայված լում կնշանակի ուժի մեջ մտնելու օրվանից:

Հոդված 19

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածի համաձայն սույն Կոնվենցիան Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի հսկորանքով գրանցվելու և Միավորված ազգերի կազմակերպության Քաղաքացիությունում:

Կատարված է Փարիզում, 1960թ. դեկտեմբերի 15-ին, Գլխավոր կոնֆերանսի 11-րդ նստաշրջանի Նախագահի և Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի ստորագրությունները կրող երկու հավասարազոր բնօրինակներով, որոնք ի պահ են տրվում Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արյուիլ և որոնց պատշաճ կերպով վավերացված պատճեններն ուղարկվում են 12 և 13 հոդվածներում նշված բոլոր պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության:

**ԿՈՆՎԵՆՑԻԱ**  
**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ**  
**(1989 թ. նոյեմբերի 10)**

**Նախաբան**

Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսը 1989 թ. հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 16-ը Փարիզում հրավիրված իր 25-րդ նստաշրջանում՝

**հիշեցնելով**, որ Կազմակերպությունը, Կանոնադրությանը համապատասխան, պարտավորություն ունի խրախուսել և զարգացնել կրթությունը.

**հիշեցնելով նաև** Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23 և 26 հոդվածներում շարադրված սկզբունքների մասին, որոնք վերաբերում են աշխատանքի իրավունքին ու կրթության իրավունքին, ինչպես նաև 1960 թ. դեկտեմբերի 14-ին Փարիզում ընդունված Կրթության բնագավառում խորականության դեմ պայքարի մասին կոնվենցիայում, 1966 թ. դեկտեմբերի 16-ին Նյու-Յորքում ընդունված Տնտեսական, սոցիալական և նշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև 1979 թ. դեկտեմբերի 18-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում ամրագրված սկզբունքների մասին,

**ընդունելով**, որ տեխնիկական ու մասնագիտական կրթության զարգացումը պետք է նպաստի խաղաղության պահպանման և տարբեր երկրների միջև բարեկանական փոխըմբռնմանը,

**նշելով** Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին վերանյալված հանձնարարականի և Միջազգային փոխըմբռնման, համագործակցության ու խաղաղության ոգով և նաև իրավունքների ու հիմնական ազատությունների հարգման ոգով դաստիարակության մասին հանձնարարականի դրույթները, որոնց ընդունվել են Գլխավոր կոնֆերանսի 1974 թ. 18-րդ նստաշրջանում,

**նշելով նաև** 1976 թ. Գլխավոր կոնֆերանսի ընդունած Մեծահասակների կրթության զարգացման մասին հանձնարարականի և 1966 թ. Միջկառավարական հատուկ կոնֆերանսի ընդունած Ուսուցիչների մասին հանձնարարականի դրույթները,

**հաշվի առնելով** Կրթության հարցերով միջազգային կոնֆերանսի համապատասխան հանձնարարականները,

**հիշատակելով** Մարդկային ռեսուրսների զարգացման մասին կոնվենցիայի (N 142) և հանձնարարականի (N 150) դրույթների մասին, որոնք ընդունվել են 1975 թ. Աշխատանքի միջազգային կոնֆերանսի 60-րդ նստաշրջանի կողմից.

**նշելով ապա** Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության և Աշխատանքի միջազգային կազմակերպության միջև սերտ համագործակցությունը՝ իրենց համապատասխան փաստարդերը մշակելիս այնպես, որպեսզի նրանք հետագա արդյունավետ համաձայնեցված խնդիրները՝ հետագա արդյունավետ համագործակցության նպատակներով,

**հաշվի առնելով** ի շահ կանանց ու աղջիկների մասնագիտական և տեխնիկական պարտավորության հատուկ ջանքեր ձեռնարկելու անհրաժեշտությունը,

**հատուկ ուղադրության առնելով** կրթության համակարգերի, սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանների բազմազանությունը, հատկապես զարգացող երկրների պայմանները, որոնք հատուկ քննարկում և հատուկ միջոցներ են պահանջում,

**համարելով**, որ, չնայած այդ բազմազանությանը, տեխնիկական և մասնագիտական կրթության զարգացումն ամենուրեք հետապնդում է նոյն նպատակները և առաջարրում է համամանան խնդիրներ և որ, հետևաբար, անհրաժեշտ են ընդհանուր նորմեր,

**ընդունելով**, որ տեխնիկական, սոցիալական և տնտեսական զարգացման արագ տեմպերն էապես սրել են ինչպես երիտասարդությանը, այնպես էլ մեծահասակներին տրամադրվող տեխնիկական և նաև նագիտական կրթության ընդլայնման ու բարելավման անհրաժեշտությունը,

**ընդունելով**, որ տեխնիկական և մասնագիտական կրթությունը համապատասխանում է ինչպես առանձին անձանց, այնպես էլ հասարակությունների զարգացման զլրաբանակին,

**համոզված լինելով** տեխնիկական և մասնագիտական կրթության զարգացման գործում փորձի ու տեխնիկատվության փոխանակման անհրաժեշտության, ինչպես նաև այդ բնագավառում միջազգային համագործակցության ամրապնդման ցանկալիության մեջ,

**համոզված լինելով** տեխնիկական և մասնագիտական կրթության զարգացման գործում միջազգային համագործակցության ամրապնդման համար միջազգային իրավական փաստաթղթի օգտակարության մեջ,

**ընդունում է** սույն Կոնվենցիան 1989 թ. նոյեմբերի 10-ին:

**Հ ո դ վ ա ծ 1**

Պայմանավորվող պետությունները համաձայնվում են հետևյալում.

- սույն Կոնվենցիայի նպատակների համար «տեխնիկական և մասնագիտական կրթությունը» ընդգրկում է կրթության գործումներացի բոլոր ձևերն ու մակարդակները, ներառյալ, ի լրումն ընդհանուր գիտելիքների, տեխնիկականի և նրան առնչվող

ուսումնական առարկաների ուսումնաայիտյունը. գործնական հմտությունների, «նոու-հաու»-ի ձեռքբերումը. սոցիալական ու տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում մասնագիտության հետ կապված հարաբերությունների ծևակորումը և հարցերի ընկալումը,

- b) սույն Կոնվենցիան Վերաբերում է տեխնիկական և մասնագիտական կրթության բոլոր ձևերին ու մակարդակներին, որոնք իրականացվում են ուսումնական հաստատություններում կամ ինչպես, մի կողմից, ուսումնական հաստատությունների, այնպես էլ, մյուս կողմից, արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտորի կամ աշխատանքի ոլորտի հետ կապված ցանկացած այլ ձեռնարկության կողմից իրագործվող համատեղ ժրագրերի շրջանակներում,

c) սույն Կոնվենցիան կատարվում է յուրաքանչյուր Պայմանավորվող պետության սահմանադրության դրույթներին և օրենսդրությանը համապատասխան:

3 n t v a s 2

2. Παιχνίδια που προβλέπεται να γίνονται στην περιοχή της Καστοριάς σε περιόδους που διαρκούν μεγάλης περιόδου και σε περιόδους που διαρκούν μεγάλης περιόδου.

- a) տեխնիկական և մասնագիտական կրթության ոլորտում հետապնդվող նպատակները՝ հաշվի առնելով տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման կոնկրետ պահանջնունքները, ինչպես նաև անձի անհատական ինքնարտահայտումը,

- b) փոխադարձ կապը, մի կողմից, տեխնիկական և մասնագիտական կրթության և, մյուս կողմից, կրթության այլ տիպերի միջև հատուկ ուշադրություն հատկացնելով ծրագրերի հորիզոնական և ուղղակիաց փոխադարձ կապամանը,

c) պատասխանատու մարմինների կողմից սահմանվող տեխնիկական և մասնագիտական կրթության վարչական կազմակերպման կառուցվածքները,

d) սոցիալ-տնտեսական ծրագրավորման և տնտեսության տարբեր սեկտորների զարգացման ծրագրավորման համար պատասխանատու պետական մարմինների, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, արհեստակցական ընկերակցությունների, բանվորների, ծառայողների և այլ շահագրգիռ կողմերի դեր:

3. Παραπάνω αναφέρεται στην παραπάνω παραγράφο της συνταγής για την επίλογη της δικαιοδότησης της απόφασης της Δικαιοσύνης στην περίπτωση που η απόφαση της Δικαιοσύνης δεν είναι συμβατική με την Κανονική ή την Εθνική Δικαιοδότηση. Η παραπάνω παραγράφος δεν ισχύει σε περιπτώσεις που η απόφαση της Δικαιοσύνης δεν είναι συμβατική με την Κανονική ή την Εθνική Δικαιοδότηση.

4. Πωλήσαντας την περιουσία της στην Ελλάδα, ο Καραϊσκάκης αποφάσισε να μεταναστεύει στην Αγγλία. Τον Ιούνιο του 1828, έφυγε από την Αθήνα με την οικογένειά του και έπλευσε στην Αγγλία. Στην Αγγλία, ο Καραϊσκάκης άρχισε να διατηρεί επαγγελματικές σχέσεις με την Βρετανική Αυτοκρατορία, και στη συνέχεια άρχισε να διατηρεί επαγγελματικές σχέσεις με την Ελλάδα.

Հոդված 3

1. Պայմանավորվող պետությունները հաճածայնվում են նշակել ու իրականացնել տեխնիկական և մասնագիտական կրթության այնպիսի ծովագրեր, որոնք հաշվի են առնելուն.

- ա) բնակչության հաճապատճախան խմբերի վիճակը կրթության, մշակույթի և սոցիալական ոլորտներում, ինչպես նաև նրանց մասնագիտական ձգութունները,

- b) տմտեսության տարբեր ճյուղերում անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական հմտությունները, գիտելիքներն ու որակավորման մակարդակները, ինչպես նաև նախատեսվող տեխնոլոգիական և կառուցվածքային հնարավոր փոփոխությունները,
- c) ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով գրադարանային ապահովման հնարավորությունները և գարգարման հեռանկարները,
- d) շրջակա միջավայրի պահպանությունը և մարդկության ընդիանուր ժառանգության սկզբունքը,
- e) առողջության պահպանությունը, անվտանգության տեխնիկան և աշխատանքի պայմանները:
2. Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է կառուցվի բաց ու ճկուն համակարգերի հիմն վրա՝ հաշվի առնելով ընդհատվող կրթության սկզբունքը, և պետք է ապահովի:
- a) բոլոր երիտասարդներին տեխնիկային և աշխատանքի աշխարհին հաղորդակից դարձնելով՝ ընդհանուր կրթության համատեքստում,
- b) մասնագիտական և տեխնիկական կողմնորոշումը, մասնագիտական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն ու խորհրդատվությունը,
- c) այնպիսի կրթության գարգացումը, որի նպատակն է որակյալ աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքների և «մոռու-հառ»-ի ձեռքբերումը,
- d) այնպիսի կրթության և մասնագիտական պատրաստության հիմքը, ուր անհրաժեշտ է հաշվի առնել միջնասնագիտական շարժումության պահանջները, մասնագիտական որակավորման բարձրացումը և գիտելիքների, հմտությունների ու ընկալման նորացումը,
- e) լրացրցիչ ընդհանուր կրթություն այն անձանց համար, որոնք տարրական տեխնիկական և մասնագիտական պատրաստություն են ստանում աշխատանքում կամ այլ կերպ, ինչպես տեխնիկական ու մասնագիտական ուսումնական հաստատություններում, այնպես էլ դրանցից դուրս,

f) ընդհատվող կրթություն և պատրաստման դասընթացներ մեծահասակների համար, մասնավորապես, այն անձանց վերապատրաստման, ինչպես նաև որակավորման լրացման և բարձրացման նպատակով, որոնց գիտելիքները հնացել են գիտատեխնիկական առաջընթացի կամ գրադարանային կառուցվածքի կամ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխման բերումով, ինչպես նաև այն անձանց համար, որոնք գտնվում են հատուկ պայմաններում:

3. Տեխնիկական և մասնագիտական կրթության ծրագրերը ոչ միայն պետք է համապատասխանեն արտադրության համապատասխան ճյուղերի տեխնիկական պահանջներին, այլև պետք է ապահովեն անձի անհատական մշակութային զարգացմանն անհրաժեշտ ընդհանուր պատրաստությունը, ինչպես նաև պետք է ներառեն, տվյալ մասնագիտության առնելով, մասնավորապես, սոցիալական, տնտեսական և էկոլոգիական բնույթի հայեցակարգեր:

4. Պայմանավորվող պետությունները համաձայնվում են, ուսումնական հաստատություններից բացի, աջակցություն և խորհրդատվական օգնություն ցուցաբերել այն ծերնարկություններին, որոնք մասնակցում են տեխնիկական և մասնագիտական կրթության համատեղ ծրագրերին:

5. Մասնագիտական յուրաքանչյուր մակարդակով որակավորումը պետք է սահմանվի հնարավորինս հստակ, իսկ ուսումնական ծրագիրը պետք է անբնիտ նորացվի նոր գիտելիքներ և տեխնիկական մեթոդներ ներառելու միջոցով:

6. Մասնագիտական պարտականությունների իրագործման ունակությունը գնահատելիս և տեխնիկական ու մասնագիտական կրթությունը հաստատող համապատասխան դիպլոմները սահմանելիս պետք է միաժամանակ հաշվի առնվեն տեխնիկական գիտելիքների համապատասխան բնագավառի գործնական ու տեսական առումները. այս սկզբունքը պետք է տարածվի ինչպես պատրաստություն ստացած, այնպես էլ աշխատանքի ընթացքում մասնագիտական փորձ ծեռած անձանց վրա:

#### Հ ո դ Վ ա ծ 4

Պայմանավորվող պետությունները համաձայնվում են պարբերաբար վերանյել տեխնիկական և մասնագիտական կրթության կառուցվածքները, ուսումնական ծրագրերը, ուսուցման մեթոդներն ու ուսումնական նյութերը, ինչպես նաև դպրոցական համակարգի և աշխատանքի միջև համագործակցության ձևերը, որպեսզի ապահովվի դրանց նշանական կապը գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների և մշակույթի զարգացման, ինչպես նաև տնտեսության տարրեր սեկտորներում գրադարանային պահանջմունքների փոփոխության հետ, և որպեսզի հաշվի առնվեն կրթության բնագավառի

գիտական նվաճումներն ու նորամուծությունները՝ առավել արդյունավետ մանկավարժական մեթոդների ներմուծման նպատակով:

### Հոդված 5

1. Պայմանագրովող պետությունները համաձայնվում են, որ տեխնիկական և մասնագիտական կրթության բնագավառում դասավանդող բոլոր անձններ, անկախ լրիվ կամ ոչ լրիվ աշխատաժամով քոլոր անձններ, անկախ լրիվ կամ ոչ լրիվ աշխատաժամով զբաղվածությունից, պետք է տիրապետեն իրենց մասնագիտական իրավասության բնագավառներին վերաբերող տեսական ու գործնական համապատասխան գիտելիքների, ինչպես նաև դասավանդման համապատասխան հմտությունների, որոնք համապատասխանում են համապատասխան կողմից անցկացվող պարապմունքների տեսակին և մակարդակին: Իրենց կողմից անցկացվող պարապմունքների տեսակին և մակարդակին:

2. Տեխնիկական և մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդող անձնաց պետք է հնարավորություն ընձեռվի կատարելագործելու իրենց ունեցած տեխնիկական ընթեկատվությունը, մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները տեղեկատվությունը, մասնագիտացված դասընթացների, ձեռնարկություններում գործնական պատրաստության և գործունեության ցանկացած այլ կազմակերպված պարագաներությունը և աշխատանքի ծների միջոցով, որոնք նախատեսում են մասնակցություն աշխատանքի ոլորտին: Բացի դրանց, նրանց համար պետք է ապահովվի մանկավարժական նորամուծությունների բնագավառում առկա տեղեկատվության և պատրաստության մատչելիությունը, որոնք նրանք կարող են օգտագործել իրենց կրնկերտ առարկան դասավանդելիս: Նրանք պետք է հնարավորություն ունենան մասնակցելու համապատասխան գիտական հետազոտությունների և մշակումների:

3. Մանկավարժները և տեխնիկական ու մասնագիտական կրթության բնագավառի մյուս մասնագետները աշխատանքի վարձինելիս պետք է ունենան հակասար հնարավորություններ՝ առանց խորականության, և նրանց վարձելու պայմանները պետք է նպաստեն իրենց բնագավառներում որակյալ կաղըների հավաքագրմանը, ներգրավմանը և աշխատելու հնարավորությունը:

### Հոդված 6

Միջազգային համագործակցությանն աջակցելու նպատակով Պայմանագրովող կողմները համաձայնվում են.

a) օժանդակել տեխնիկական և մասնագիտական կրթության 11

- բնագավառոի նորամուծություններին, գաղափարներին և փորձին վերաբերող տեղեկատվության կուտակմանն ու տարածմանը, ակտիվորեն մասնակցել տեխնիկական և մասնագիտական կրթության բնագավառում ուսումնական ծրագրերի և մանկավարժական կաղըների պատրաստության ծրագրերի, մեթոդների, սարքավորման ստանդարտների և դպրոցական դասագրքերի մասին տեղեկատվության միջազգային փոխանակմանը,
- b) Խրախուսել արդյունաբերության, առևտուրի և տնտեսության այլ սեկտորներում կիրավող միջազգային տեխնիկական նորմերի օգտագործումը տեխնիկական և մասնագիտական կրթության բնագավառում,
- c) աջակցել այն մոտեցումների մշակմանը, որոնք ուղղված են տեխնիկական և մասնագիտական կրթության շրջանակներում ծեղոք բերված որակավորման համարժեքության ճանաչման պահանջմանը,
- d) աջակցել տեխնիկական և մասնագիտական կրթության բնագավառում մանկավարժների, վարչարարների և այլ մասնագետների միջազգային փոխանակմանը,
- e) այլ, նախևառաջ գարգացող, երկրների ուսանողներին ընձեռել իրենց ուսումնական հաստատություններում տեխնիկական և մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն, մասնավորապես, տեխնոլոգիայի ուսումնասիրման, ծեղոք բերման, հարմարեցման, փոխանցման և կիրառման գործընթացի պարզեցման նպատակով,
- f) աջակցել տեխնիկական և մասնագիտական կրթության բնագավառում համագործակցության զարգացմանը բոլոր, հատկապես, զարգացած արդյունաբերական և զարգացող երկրների միջև՝ այդ երկրների տեխնոլոգիաների զարգացումը խրախուսելու նպատակով:
- g) մորիլիզմացմել միջոցները՝ տեխնիկական և մասնագիտական կրթության բնագավառում միջազգային համագործակցություն ամրապնդելու նպատակով:

### Հոդված 7

Պայմանագրովող պետությունները պետք է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոմիտեանսին, նրա սահմանած ժամկետներում և ծնով, ներկայացվող

պարբերական գեկուցներով տեղեկացնեն սույն Կոնվենցիայի իրականացման համար իրենց ընդունած օրենսդրական, նորմատիվ և այլ միջոցների մասին:

#### Հոդված 8

Սույն Կոնվենցիայի մասնակից այն պետությունների նկատմամբ, որտեղ գործում է ոչ ունիտար սահմանադրական համակարգ, կիրառվում են հետևյալ դրույթները.

- սույն Կոնվենցիայի այն դրույթների առնչությամբ, որոնց իրականացումը դաշնային կամ կենտրոնական օրենսդրական իշխանությունների իրավասության խնդիրն է, դաշնային կամ իշխանությունների կառավարության պարտավորությունները նույն կենտրոնական կառավարության պարտավորությունները նույն են, ինչ և կենտրոնացված համակարգով մասնակից պետություններինը,
- սույն Կոնվենցիայի այն դրույթների առնչությամբ, որոնց իրականացումը դաշնության կազմի մեջ նտնող նահանգների, երկրների, գավառների, ինքնակար համայնքների կամ կանտոնների իրավասության խնդիրն է, որոնք ընդհանուր կամ հիմնական դաշնային սահմանադրական համակարգի համաձայն, պարտավոր չեն ընդունել օրենսդրական միջոցներ, կենտրոնական կառավարությունը տեղեկացնում է նման նահանգների, երկրների, գավառների, ինքնակար համայնքների կամ կանտոնների իրավասու իշխանություններին վերոհիշյալ դրույթների մասին դրանց ընդունման մասին հանձնարարականով:

#### Հոդված 9

Սույն Կոնվենցիայի մասնակիցներ կարող են դառնալ Միավորված պետության և մշակույթի կազմակերպության անդամ ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետությունները, ինչպես նաև նրա անդամ չիանդիսացող այն պետությունները, որոնք Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և պետությունները, որոնք Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գործադիր խորհրդի կողմից հրավիրված են մշակույթի կազմակերպության Գործադիր խորհրդի կողմից հրավիրված են դառնալու Կոնվենցիայի մասնակիցներ՝ Միավորված ազգերի՝ եղել դառնալու գիտության և մշակույթի կազմակերպության Գիխավոր կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գիխավոր կոնֆերանսի կոնվենցիայի վավերացման, ընդունման, միանալու կամ նրա տնօրենին Կոնվենցիայի վավերացման, ընդունման, միանալու կամ նրա հետ համաձայնության մասին փաստաթուղթն ի պահ տալու միջոցով:

#### Հոդված 10

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 9 հոդվածում հիշատակված երրորդ փաստաթուղթն ի պահ տալու օրվանից 3 ամիս անց, բայց միայն այն պետությունների համար, որոնք իրենց համապատասխան փաստաթուղթն ի պահ են տվել նշված օրը կամ ավելի վաղ: Տանկացած այլ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր փաստաթուղթն ի պահ տալու օրվանից 3 ամիս անց:

#### Հոդված 11

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան պաշտոնական ծանուցման միջոցով. որը գրավոր ձևով ուղարկվում է Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գիխավոր տնօրենին:

2. Չեղյալ հայտարարելու ուժի մեջ է մտնում այդ ծանուցումն ստանալուց 12 ամիս անց:

#### Հոդված 12

Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր տնօրենը տեղեկացնում է կազմակերպության անդամ պետություններին, 9 հոդվածում հիշատակված՝ անդամ չիանդիսացող պետություններին. ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ 9 հոդվածում նշված բոլոր փաստաթուղթն ի պահ տալու, ինչպես նաև 11 հոդվածում նշված չեղյալ հայտարարելու մասին:

#### Հոդված 13

1. Սույն Կոնվենցիան կարող է վերանայվել Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գիխավոր կոնֆերանսի կողմից: Նման վերանայումը կապարտավորեցնի միայն այն պետություններին, որոնք կրառնան վերանայված Կոնվենցիայի մասնակիցներ:

2. Այն դեպքում, եթե Գիխավոր կոնֆերանսը սույն Կոնվենցիայի լրիվ կամ մասնակի վերանայման արդյունքում ընդունի նոր կոնվենցիա և եթե նոր կոնվենցիան չի բովանդակի այլ դրույթներ, սույն Կոնվենցիան նոր մասնակից պետությունների համար փակ կլինի վերանայված նոր կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից:

#### Հոդված 14

Սույն Կոնվենցիան կազմված է անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն. ընդ որում բոլոր վեց տեքստերն են հավասարազոր են:

### Հոդված 15

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածի համաձայն, սույն Կոնվենցիան Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի խնդրանքով կարանցվի Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում:

Կատարված է Փարիզում, 1989 թ. նոյեմբերի 10-ին, երկու հավասարազոր օրինակով. ստորագրել են 25-րդ նստաշրջան անցկացնող Գլխավոր կոնֆերանսի Նախագահը և Միավորված ազգերի գիտության, կրթության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը: Այդ օրինակները կապիկեն Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արխիվներում, և դրանց վավերացված պատճենները կուղածում նշված բոլոր պետություններին. ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը:

### ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԶԻՆԿԱԾ ԸՆԴՀԱՐՄԱՆ ԴԵՊԲՈՒՄ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՐԺԵԲՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
(14 մայիսի 1954թ.)<sup>1</sup>

#### Նախարան

Բարձր պայմանավորվող կողմերը՝

ՂԻԱՍՏԵԼՈՎ, որ Վերջին գինված ընդհարումների ընթացքում լուրջ վնաս է հասցվել մշակութային արժեքներին և որ ուազմական տեխնիկայի զարգացման հետևանքով դրանք գնալով ավելի ու ավելի են ենթարկվում ոչնչացման վտանգի,

ՀԱՄՈՂՎԱԾ ԼԻՆԵԼՈՎ, որ յուրաքանչյուր ժողովորդի մշակութային արժեքներին հասցվող վնասը վճառում է նաև ողջ մարդկության մշակութային ժառանգությանը, քանզի յուրաքանչյուր ժողովորդ իր ավանդն է ներդնում համաշխարհային մշակույթի մեջ,

ԳՄԵՆԵԼՈՎ, որ մշակութային ժառանգության պահպանումը մեծ նշանակություն ունի աշխարհի բոլոր ժողովուրդների համար և որ կարևոր է այդ ժառանգության միջազգային պաշտպանությունն ապահովելը,

ԱԽՈԶՉՈՐԴՎԵԼՈՎ գինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության այն սկզբունքներով, որոնք հաստատվել են 1899 և 1907 թվականների Դասգայի Կոնվենցիաներով և 1935թ. ապրիլի 15-ի Վաշինգտոնի դաշնագրով,

ԸՆԴՀՈՒՅԵԼՈՎ, որ այդ պաշտպանությունը չի կարող արդյունավետ լինել, քանի դեռ դրան ուղղված ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային միջոցառումները չեն կազմակերպվել խաղաղ ժամանակ,

ՈՐՈՇԵԼՈՎ ծերնարկել մշակութային արժեքների պաշտպանության բոլոր հնարավոր միջոցները,

ՀԱՄԱՁԱՅՄԵՏՋԻ ներքոի հյալին.

#### ԳԼՈՒԽ I. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

##### Հոդված 1

Մշակութային արժեքների սահմանումը

Սույն Կոնվենցիայի նպատակների համար, մշակութային արժեքներ, անկան դրանց ժագումից ու սեփականատիրոջից, համարվում են.

ա) յուրաքանչյուր ժողովորդի մշակութային ժառանգության համար

1 Դայաստանի Դարրապետությունը Կոնվենցիային միացել է 1993 թ. հունիսի 22-ին, Կոնվենցիային կից առաջին Արծանադրությունը չի ստորագրել. իսկ երկրորդ Արծանադրությունը ստորագրել է, սակայն առ 20 հունիսի 2000թ. դրույթյամբ չի վավերացրել:

մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ արժեքները, ինչպիսիք են ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները, կրոնական կամ աշխարհիկ, հնագիտական տեղակայքերը, ճարտարավետական համալիրները, որոնք իրու այդպիսին ներկայացնում են պատմական կամ գեղարվեստական հետաքրքրություն, արվեստի ստեղծագործությունները, ձեռագրերը, գրքերը, գեղարվեստական պատմական կամ հնագիտական նշանակության այլ առարկաներ, ինչպես նաև գիտական հավաքածուներ կամ գրքերի, արիմանյան նյութերի կամ վերը նշված արժեքների վերարտադրությունների կարևոր հավաքածուները,

- b) այս շենքերը, որոնց գլխավոր և իրական նպատակը (ա) ենթակետում նշված շարժական մշակութային արժեքների պահպանումն է կամ ցուցադրությունը, ինչպիսիք են թանգարանները, խոչոր գրադարանները, արխիվների պահոցները, ինչպես նաև այն պատմապարանները, որոնք նախատեսված են գինված ընդհարման դեպքում (ա) ենթակետում նշված շարժական մշակութային արժեքների պահպանության համար,
- c) այն կենտրոնները, որոնք ընդգրկում են (ա) և (բ) ենթակետերում նշված մշակութային արժեքների գգալի քանակություն, այսպես կոչված «հուշարձաններ ընդգրկող կենտրոններ»:

## Հոդված 2

### Մշակութային արժեքների պաշտպանությունը

Սույն Կոնվենցիայի նպատակների համար, մշակութային արժեքների պաշտպանությունը ներառում է այդ արժեքների պահպանությունն ու հարգումը:

## Հոդված 3

### Մշակութային արժեքների պահպանությունը

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց սեփական տարածքում գտնվող մշակութային արժեքների պահպանությունը գինված ընդհարման հնարավոր հետևանքներից նախապատրաստել դեռևս խաղաղ ժամանակ՝ ձեռնարկելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են անհրաժեշտ համագործակցությունը և անհրաժեշտ համագործակցությունը:

## Հոդված 4

### Մշակութային արժեքների հարգումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել իրենց սեփական, ինչպես նաև մյուս կողմերի տարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց ամփոփանորեն հարակից տեղամասերի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք գինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերնանը կամ վնասվելուն, և ձեռնպահ մնալով այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից:

2. Սույն հոդվածի 1 կետում նշված պարտավորությունները կարող են խախտվել միայն այն դեպքում, եթե նաև խախտում ստիպողաբար պահանջվում է ուազմական անհրաժեշտությամբ:

3. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են, դրանց գատ, արգելել, կանխել և, եթե անհրաժեշտ է, խափանել մշակութային արժեքների գործության, կողոպուտի կամ ապօրինի յուրացման, ինչպես նաև դրանց նկատմամբ վանդալիզմի ցանկացած գործողություն: Նրանք արգելում են մեկ ուրիշ Բարձր պայմանավորվող կողմի տարածքում գտնվող շարժական մշակութային արժեքների բռնագրավումը:

4. Նրանք ձեռնպահ են մնում մշակութային արժեքների դեմ ուղղված ցանկացած ճնշչի միջոցներ ձեռնարկելուց:

5. Բարձր պայմանավորվող կողմը մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմի նկատմամբ սույն հոդվածով նախատեսված պարտավորություններից չի կարող ազատվել այն հիմնավորմամբ, թե վերջինս չի ձեռնարկել 3 հոդվածով նախատեսված պահպանության միջոցները:

## Հոդված 5

### Գրավումը

1. Այն Բարձր պայմանավորվող կողմերը, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն գրավել են մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմի տարածքը, հնարավորինս աջակցում են գրավյալ տարածքի ազգային իրավասու իշխանություններին՝ նրա մշակութային արժեքների պահպանությունն ապահովելով գործում:

2. Այն դեպքում, եթե գրավյալ տարածքում գտնվող և ուազմական գործողությունների ընթացքում վնասված մշակութային արժեքների պահպանման համար անհրաժեշտ է հրատապ միջամտություն, և եթե ազգային իրավասու իշխանությունները չեն կարող այդ ապահովել, գրավող պետությունը ձեռնարկում է, հնարավորության սահմաններում, այդ արժեքների պահպանության ամենաանհրաժեշտ միջոցները՝ սերտորեն համագործակցելով նշված իշխանությունների հետ:

3. Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, որի

կառավարությունը դիմադրության շարժման անդամների կողմից դիտվում է իրենց օրինական կառավարություն, հնարավորության դեպքում նրանց ուշադրությունը հրավիրում է Կոնվենցիայի մշակութային արժեքների հարգմանը վերաբերող դրույթների պահպանման պարտավորություններին:

### Հ ո դ վ ա ծ 6

#### Մշակութային արժեքների նշումը

Մշակութային արժեքների ճանաչումը հեշտացնելու նպատակով դրանք կարող են նշվել տարբերանշաններով՝ 16 հոդվածի դրույթներին համապատասխան:

### Հ ո դ վ ա ծ 7

#### Ռազմական կարգի միջոցներ

1. Բարձր պայմանագրովող կողմերը պարտավորվում են իրենց գինվորական կանոնադրություններում ու հրահանգներում դեռևս խաղաղ ժամանակ նախատեսել այնպիսի դրույթներ, որոնք ընդունակ են ապահովելու սույն Կոնվենցիայի պահպանումը, և իրենց գինված ուժերի անձնակազմին դաստիարակել բոլոր ժողովուրդների մշակույթի ու մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի ոգով:

2. Բարձր պայմանագրովող կողմերը պարտավորվում են իրենց գինված ուժերում դեռևս խաղաղ ժամանակ նախապատրաստել և ստեղծել այնպիսի ծառայություններ կամ հատուկ անձնակազմ, որոնց նպատակը կլինի մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի ապահովումը և համագործակցությունը այդ արժեքների պահպանության համար պատասխանատու քաղաքացիական իշխանությունների հետ:

### Գ լ ու Խ Ա Զ Տ ՈՒ Կ Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

### Հ ո դ վ ա ծ 8

#### Հատուկ պաշտպանության տրամադրումը

1. Հատուկ պաշտպանության ներքո կարող են վերցվել, սահմանափակ քանակությամբ գինված ընդհարման դեպքում շարժական մշակութային արժեքների պահպանման համար նախատեսված պատսպարանները, հուշարձաններ ընդգրկող կենտրոնները և շատ մեծ նշանակություն ունեցող այլ անշարժ մշակութային արժեքներ, պայմանով, որ

a) դրանք բավականաչափ հեռու են գտնվում ցանկացած արդյունաբերական խոշոր կենտրոնից կամ խոցելի կետ հանդիսացող ռազմական ցանկացած կարևոր օբյեկտից, օրինակ, օդանավակայանից, ռադիոկայանից, ազգային պաշտպանության համար աշխատող ծեռնարկությունից, նավահանգստից, երկարութային խոշոր կայարանից կամ հաղորդակցության կարևոր գծից,

b) դրանք չեն օգտագործվում ռազմական նպատակներով:

2. Շարժական մշակութային արժեքների ապաստարանը, որտեղ է այն գտնվելիս լինի, նույնպես կարող է վերցվել հատուկ պաշտպանության ներքո, եթե կառուցվել է այնպես, որ, ամենայն հավանականությամբ, ռմբակոծությունը նրան վնասել չի կարող:

3. Քուշարձանները ընդգրկող կենտրոնը համարվում է ռազմական նպատակներով օգտագործելի, եթե այն օգտագործվում է ռազմական անձնակազմի կամ նյութական մասի տեղափոխության համար, նույնիսկ տարանցումով: Այդ կենտրոնը ռազմական նպատակներով օգտագործելի է համարվում նաև, եթե այնտեղ իրականացվում է այնպիսի գործունեություն, որն անմիջականորեն առնչվում է ռազմական գործողություններին, ռազմական անձնակազմի տեղաբաշխմամբ կամ ռազմանյութերի արտադրությանը:

4. 1 կետում թվարկված մշակութային արժեքները ռազմական նպատակներով օգտագործելի չեն համարվում, եթե դրանք պահպանվում են դրա համար հատուկ նշանակված գինված պահպանով կամ եթե դրանց կողքին կան սույնական ուժեր, որոնց էլ սովորաբար հանձնարարվում է հասարակական կարգի ապահովումը:

5. Եթե սույն հոդվածի 1 կետում թվարկված մշակութային արժեքներից որևէ մեկը տեղափոխված է նոյն կետում նշված ռազմական կարևոր օբյեկտի մերձակայքում, այն այդուհանդերձ կարող է վերցվել հատուկ պաշտպանության ներքո, եթե այդ մասին խնդրով Բարձր պայմանագրովով կողմը պարտավորվում է գինված ընդհարման դեպքում այդ օբյեկտն ամենակին չօգտագործել և, մասնավորապես, եթե խոսքը նավահանգստի, կայարանի կամ օդանավակայանի մասին է, ցանկացած շարժում իրականացնել շրջանցումով: Նման դեպքում շրջանցումով շարժումը նախապատսպվում է դեռևս խաղաղ ժամանակ:

6. Մշակութային արժեքներին հատուկ պաշտպանություն տրամադրվում է դրանք «Հատուկ պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների միջազգային գրանցամատյանում» գրանցելու միջոցով: Այդ գրանցումը կատարվում է միայն սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով նախատեսված պայմաններով:

### Հոդված 9

Հատուկ պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների անձեռնմխելիությունը

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ապահովել հատուկ պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների անձեռնմխելիությունը՝ միջազգային գրանցանատյանում դրանց գրանցման պահից սկսած ծեռապահ մնալով դրանց դեմ ուղղված ցանկացած թշնամական գործողությունից, ինչպես նաև նման արժեքներն ու հարակից տեղամասերը ուազմական նպատակներով օգտագործելուց, բացառությամբ 8 հոդվածի 5 կետում նախատեսված դեպքերի:

### Հոդված 10

Նշումը և վերահսկողությունը

Հատուկ պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքները գինված ընդհարման ժամանակ պետք է նշվեն 16 հոդվածով նախատեսված տարբերանշանով և մատչելի լինեն միջազգային վերահսկողության համար, ինչպես սահմանված է Կոնվենցիայի գործադրման կանոնակարգում:

### Հոդված 11

Անձեռնմխելիությունից գրկումը

1. Եթե Բարձր պայմանավորվող կողմերից մեկը հատուկ պաշտպանության ներքո գտնվող արժեքի նկատմամբ թույլ է տալիս 9 հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունների խախտում, հակառակ կողմն ազատվում է տվյալ արժեքի անձեռնմխելիությունն ապահովելու իր պարտավորությունից այնքան ժամանակ, քանի որ այդ խախտումը տեղի ունի: Սակայն ամեն անգամ, եթե դա հնարավոր է, վերջին կանխավ պահանջում է խելամիտ ժամկետում տվյալ խախտմանը վերջ տալ:

2. Սույն հոդվածի 1 կետում նախատեսված դեպքից բացի, հատուկ պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքի անձեռնմխելիությունը կարող է դադարեցվել ուազմական անխոսափելի անհրաժեշտության բացահայտված դիացը և այնքան ժամանակ, քանի որ գոյություն ունի այդ անհրաժեշտությունը: Նման անհրաժեշտությունը կարող է հավաստվել գինվորական հրամանատարների կողմից սկսած միայն դիվիզիայի կամ դիվիզիային համապատասխանող մասի հրամանատարից և ավելի բարձր: Բոլոր այն դեպքերում, երբ հանգամանքները թույլ են տալիս, անձեռնմխելիության դադարեցման մասին որոշումը հակառակ կողմին ծանուցվում է նախապես խելամիտ ժամկետում:

3. Անձեռնմխելիությունը դադարեցնող կողմը հնարավորինս կարծ ժամկետում, գրավոր և նշելով պատճառները, այդ մասին տեղեկացնում է Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով նախատեսված մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարին:

### Գլուխ III. ՄշԱԿՈՒԹԱՎԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

#### Հոդված 12

Հատուկ պաշտպանության ներքո գտնվող փոխադրամիջոցները

1. Բացառապես մշակութային արժեքների փոխադրության համար օգտագործվող փոխադրամիջոցները, լինի փոխադրումը տարածի ներսում, թե մի տարածքից մյուսը, շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմի խնդրանքով կարող են վերցվել հատուկ պաշտպանության ներքո այն պայմաններով, որոնք նախատեսված են Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով:

2. Հատուկ պաշտպանությունից օգտվող փոխադրամիջոցները գտնվում են Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով նախատեսված միջազգային վերահսկողության ներքո և նշվում են 16 հոդվածում նկարագրված տարբերանշանով:

3. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ծեռապահ մնալ թշնամական որևէ գործողությունից հատուկ պաշտպանության ներքո գտնվող փոխադրամիջոցների նկատմանը:

#### Հոդված 13

Փոխադրումը հրատապ դեպքում

1. Եթե Բարձր պայմանավորվող կողմը գտնում է, որ մշակութային որոշ արժեքների անվտանգությունը պահանջում է դրանք փոխադրել և որ փոխադրումն այնքան հրատապ է, որ 12 հոդվածով նախատեսված ընթացակարգ հնարավոր չէ պահպանել, հատկապես գինված ընդհարման սկզբում, փոխադրամիջոցը կարող է նշվել 16 հոդվածում նկարագրված տարբերանշանով, եթե միայն այդ փոխադրամիջոցին 12 հոդվածի համաձայն անձեռնմխելիությունը վերապահելու մասին խնդրանքն ավելի վաղ արդեն չի ներկայացվել ու մերժվել: Եթե հնարավոր է, փոխադրման մասին հակառակ կողմները ծանուցվում են: Մեկ այլ երկրի տարածքը մշակութային արժեքների տեղափոխող փոխադրամիջոցը ոչ մի դեպքում չի կարող նշվել տարբերանշանով, եթե հատուկ կերպով նրան անձեռնմխելիություն չի հատկացվել:

2. Բարձր պայմանավորվող կողմերը հնարավորության սահմաններում ծեռնարկում են նախագրուշական անհրաժեշտ միջոցներ, որպեսզի սույն

հոդվածի 1 կետում նախատեսված և տարբերանշաններ կրող փոխադրամիջոցները պաշտպանված լինեն իրենց դեմ ուղղված թշնամական գործողություններից:

#### Հոդված 14

Անձեռնմխնդիրությունը բռնագրավումից, իբրև պարգև վերցվելուց կամ զավթումից

1. Բռնագրավումից, իբրև պարգև վերցվելուց կամ զավթումից անձեռնմխնդիրությամբ կարող են օգտվել

- 12 հոդվածով նախատեսված պաշտպանության կամ 13 հոդվածով նախատեսված պաշտպանության ներք գտնվող մշակութային արժեքները,
- բացառապես այդ մշակութային արժեքների փոխադրությամբ գրադարձ փոխադրամիջոցները:

2. Սույն հոդվածում ոչինչ չի սահմանափակում այցելության և ուսումնաժողության իրավունքը:

#### Գլուխ IV. ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

#### Հոդված 15

Անձնակազմը

Մշակութային արժեքների պաշտպանության համար նախատեսված անձնակազմը պետք է, որքանով թույլատրում են անվտանգության պահանջները, վայելի հարգանք՝ ի շահ այդ արժեքների պահպանամ, և, եթե այդ անձնակազմն ընկնում է հակառակորդի ծերթը, նրան հնարավորություն է ընծեռվում իրականացնելու իր գործառությունները, եթե հակառակորդի ծեռքը են ընկնում նաև մշակութային այն արժեքները, որոնց պահպանությունը հանձնարարվել է այդ անձնակազմին:

#### Գլուխ V. ՏԱՐԲԵՐԱՆՇԱԾՄԸ

#### Հոդված 16

Կոնվենցիայի նշանը

1. Կոնվենցիայի նշանը ստորին մասում սուր վահան է բաժանված կապույտ և սպիտակ գույնի չորս մասերի (վահանը բաղկացած է կապույտ քառակուսուց, որի անկյուններից մեկը ներգծված է վահանի սուր մասին, և

քառակուսու վերևում գծված կապույտ եռանկյունուց, քառակուսին և եռանկյունին երկու կողմից սահմանագատվում են սպիտակ եռանկյուններով):

2. Նշանը գործածվում է միապատիկ կամ եռապատիկ՝ եռանկյան տեսքով (մեկ նշանը ներքեւում), 17 հոդվածում նշված պայմաններին համապատասխան:

#### Հոդված 17

Նշանի օգտագործումը

1. Տարբերանշանը եռապատիկ կիրառվում է ճանաչելու համար միայն

- հատուկ պաշտպանության ներք գտնվող անշարժ մշակութային արժեքները,
- մշակութային արժեքներ փոխադրող փոխադրամիջոցները՝ 12 և 13 հոդվածներով նախատեսված պայմաններին համապատասխան,
- հանպատրաստից ստեղծված պատուարանները՝ Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով նախատեսված պայմաններին համապատասխան:

2. Տարբերանշանը միապատիկ կարող է կիրավել ճանաչելու համար միայն՝

- հատուկ պաշտպանության ներք չգտնվող մշակութային արժեքները,
- այն անձանց, որոնք պատասխանատու են վերահսկողության գործառությունների համար Կոնվենցիայի գործադրման կանոնակարգին համապատասխան,
- մշակութային արժեքների պահպանության համար նախատեսված անձնակազմը,
- Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով նախատեսված անձը հաստատող վկայականները:

3. Զինված ընդհարման ժամանակ արգելվում է տարբերանշանը կիրառել մնացյալ բոլոր դեպքերում, բացի նրանցից, որոնք հիշատակված են սույն հոդվածի նախորդ կետերում, կամ որևէ նպատակով կիրառել Կոնվենցիայի տարբերանշանին նմանվող այլ նշան:

4. Տարբերանշանով չի կարող նշվել որևէ անշարժ մշակութային արժեք՝ առանց միաժամանակ Բարձր պայմանավորվող կողմի իրավասու իշխանությունների՝ պատշաճորեն թվագրած և ստորագրած համապատասխան թույլտվություն փակցնելու:

## Գ լ ու խ VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՊՈՒՄԸ

### Յ ո դ վ ա ծ 18

#### Կոնվենցիայի կիրառումը

1. Բացի այն դրույթներից, որոնք գործում են խաղաղ ժամանակ, սույն Կոնվենցիան կիրառվում է հայտարարված պատերազմի կամ որևէ այլ զինված ընդհարման դեպքում, որը կարող է ծագել Բարձր պայմանավորվող կողմերից երկուսի կամ մի քանիսի միջև, անզամ, եթե պատերազմական դրույթում չի ճանաչվել նրանցից մեկի կամ մի քանիսի կողմից:

2. Կոնվենցիան կիրառվում է նաև Բարձր պայմանավորվող կողմի ողջ տարածքի կամ նրա մի մասի գրավման բոլոր դեպքերում, անզամ, եթե այդ գրավումը ռազմական որևէ դիմադրության չի հանդիպում:

3. Եթե ընդհարման մեջ գտնվող պետություններից մեկը սույն Կոնվենցիային չի մասնակցում, նրա կողմ հանդիսացող պետությունները, այնուամենայնիվ, իրենց փոխարարերություններում միջյանց հետ կապված են մնում Կոնվենցիայով: Նրանք Կոնվենցիայով կապված կլինեն նշյալ պետության նկատմամբ, եթե վերջինս հայտարարել է Կոնվենցիայի դրույթներն ընդունելու նախին և քանի դեռ կատարում է դրանք:

### Յ ո դ վ ա ծ 19

#### Միջազգային բնույթ չունեցող ընդհարումները

1. Միջազգային բնույթ չունեցող և Բարձր պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ծագող զինված ընդհարման դեպքում ընդհարմանը մասնակից յուրաքանչյուր կողմ պարտավոր է կիրառել սույն Կոնվենցիայի առնվազն մշակութային արժեքների հարգմանը վերաբերող դրույթները:

2. Ընդհարման մեջ գտնվող կողմերը կգործադրեն բոլոր քանձերը, որպեսզի հասուն համաձայնագրերի միջոցով գործողության մեջ դրվեն սույն Կոնվենցիայի բոլոր դրույթները կամ դրանց մի մասը:

3. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի հրավերով կամ սեփական նախաձեռնությամբ ընդհարման մեջ գտնվող կողմերին առաջարկել հրավիրել վերջինների ներկայացուցիչների, մասնավորապես, մշակութային արժեքների պաշտպանության համար պատասխանատու ներկայացուցիչների հանդիպում, ըստ հնարավորին պատշաճութեան ընտրված չեզոք տարածքում: Ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր են ընթացք տալ հանդիպում հրավիրելու նախին նրանց արված առաջարկությանը: Այդ հանդիպմանը իբրև նախագահ մասնակցելու հանար Յովանալիր պետությունները ընդհարման մեջ գտնվող կողմերի հավանությանը են ներկայացնում այնպիսի անձին, որը չեզոք պետության քաղաքացի է կամ առաջարկվել է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից:

## Գ լ ու խ VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

### Յ ո դ վ ա ծ 20

#### Կոնվենցիայի գործադրման կանոնակարգը

Սույն Կոնվենցիայի կիրառման կարգը սահմանվում է նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով:

### Յ ո դ վ ա ծ 21

#### Յովանավոր պետությունները

Սույն Կոնվենցիան և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգը կիրառվում են Յովանավոր պետությունների աջակցությամբ, որոնք պատասխանատու են ընդհարման մեջ գտնվող կողմերի շահերի պաշտպանության համար:

### Յ ո դ վ ա ծ 22

#### Հաշտարար ընթացակարգը

1. Յովանավոր պետություններն իրենց բարի ծառայություններն են մասուցում բոլոր այն դեպքերում, եթե դա օգտական են համարում ի շահ մշակության արժեքների պաշտպանության, առանձնապես, եթե ընդհարման մեջ գտնվող կողմերի միջև տարածայնություններ կան սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի դրույթների կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ:

2. Այդ նպատակով Յովանավոր պետություններից յուրաքանչյուրը կարող է կողմերից մեկի, Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի հրավերով կամ սեփական նախաձեռնությամբ ընդհարման մեջ գտնվող կողմերին առաջարկել հրավիրել վերջինների ներկայացուցիչների, մասնավորապես, մշակութային արժեքների պաշտպանության համար պատասխանատու ներկայացուցիչների հանդիպում, ըստ հնարավորին պատշաճութեան ընտրված չեզոք տարածքում: Ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր են ընթացք տալ հանդիպում հրավիրելու նախին նրանց արված առաջարկությանը: Այդ հանդիպմանը իբրև նախագահ մասնակցելու հանար Յովանալիր պետությունները ընդհարման մեջ գտնվող կողմերի հավանությանը են ներկայացնում այնպիսի անձին, որը չեզոք պետության քաղաքացի է կամ առաջարկվել է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից:

### Հոդված 23

#### ՅՈՒՆԵՍԿՕ-ի օգնությունը

1. Բարձր պայմանավորվող կողմերը կարող են դիմել Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը՝ խնդրելով տեխնիկական օգնություն իրենց մշակութային արժեքների պահպանությունը կազմակերպելու համար, կամ սույն Կոնվենցիայի և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի կիրառումից բխող ցանկացած այլ հարցով։ Կազմակերպությունը այդ օգնությունը տրամադրում է իր ծրագրի ու հնարավորությունների սահմաններում։

2. Կազմակերպությունն իրավունք ունի Բարձր պայմանավորվող կողմերին տվյալ հարցով առաջարկություններ անել իր նախաձեռնությամբ։

### Հոդված 24

#### Հատուկ համաձայնագրերը

1. Բարձր պայմանավորվող կողմերը կարող են կնքել հատուկ համաձայնագրեր բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք ըստ իրենց պետք է կարգավորվեն։

2. Չի կարող կնքել որևէ հատուկ համաձայնագիր, որը կնվազեցնի սույն Կոնվենցիայի համաձայն մշակութային արժեքներին և նրանց պահպանությամբ գրաղվող անձնակազմին տրամադրվող պահպանությունը։

### Հոդված 25

#### Կոնվենցիայի տարածումը

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ինչպես խաղաղ, այնպես էլ զինված զնդիարումների ժամանակ իրենց երկրներում ըստ հնարավորին լայնորեն տարածել սույն Կոնվենցիայի և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի տեքստը։ Նրանք պարտավորվում են, մասնավորապես, դրանց ուսումնասիրությունը ներառել ռազմական և, հնարավորության դեպքում, քաղաքացիական ուսուցման ծրագրերում, որպեսզի Կոնվենցիայի և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի սկզբունքները հայտնի լինեն ողջ բնակչությանը, առանձնապես, զինված ուժերին և մշակութային արժեքների պահպանության համար նախատեսված անձնակազմին։

### Հոդված 26

#### Թարգմանությունները և գենույցները

1. Բարձր պայմանավորվող կողմերը Միավորված ազգերի կրթության,

գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի միջոցով միջմանց փոխանցում են սույն Կոնվենցիայի և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի թարգմանությունների պաշտոնական տեքստերը։

2. Դրանից զատ, առնվազն չորս տարին մեկ նրանք Գլխավոր տնօրենին ուղարկում են զեկույց, որը պարունակում է սույն Կոնվենցիան և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի իրագործելու համար իրենց վարչությունների կողմից ձեռնարկվող, նախապատրաստվող կամ ուսումնասիրվող միջոցառումների վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք հաղորդելով իրենք նպատակահարմար են գտնում։

### Հոդված 27

#### Հանդիպումներ

1. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը կարող է, Գործադիր խորհրդի համաձայնությամբ, հրավիրել Բարձր պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների հանդիպումներ։ Նման հանդիպմանը նա իրավիրվում է, եթե այդ մասին խնդրանք է ներկայացրել Բարձր պայմանավորվող կողմերի թաղանակը թվի ոչ պակաս, քան մեկ հինգերորդ մասը։

2. Սույն Կոնվենցիայով և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգով հանդիպմանը վերապահված այլ գործառույթներից զատ, նրա խնդիրն է նաև ուսումնասիրել Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի կիրառման հետ կապված հիմնահարցերը և այդ կապակցությամբ տալ համձարարապականներ։

3. Դրանից բացի, հանդիպումը կարող է, 39 հոդվածի դրույթներին համապատասխան, վերանայել Կոնվենցիան ու Կոնվենցիայի գործադրման կանոնակարգը, եթե այնտեղ ներկայացված է Բարձր պայմանավորվող կողմերի մեծանանությունը։

### Հոդված 28

#### Պատժամիջոցները

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց քրեական իրավագործության շրջանակներում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հետապնդվեն և քրեական կամ կարգապահական պատժի ենթարկվեն սույն Կոնվենցիան խախտող կամ խախտելու հրաման տվող անձինք՝ անկախ նրանց քաղաքացիությունից։

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 29

LtqnlGtpp

1. Սույն Կոնվենցիան կազմվել է անգլերեն, իսպաներեն, ռուսերեն ու ֆրանսերեն. բոլոր չորս տեքստերը հավասարագոր են:

2. Սիահպոված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունն ապահովում է Կոնֆենցիայի թարգմանությունը մնացյալ այն լեզուներով, որոնք նրա Գլխավոր կոնֆերանսի պաշտոնական լեզուներն են:

Հոդված 30

Սահմանադրություն

Սույն Կոնվենցիան թվագրվելու է 1954 թ. մայիսի 14-ի ամսաթվով և մինչև 1954 թ. դեկտեմբերի 31-ը քաղ կլինի ստորագրության համար բոլոր այն պետությունների կողմից, որոնք հրավիրվել են 1954 թ. ապրիլի 21-ից մինչև մայիսի 14-ը Համագումար անգնապալսած լուսներանին:

Annex 31

Վամինալում

1. Սույն Կոնվենջիան ենթակա է վավերացման այն ստորագրած պետությունների կողմից՝ նրանց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան:

2. Կամկերդիքն ի պահ են տրվութ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրինչները:

ପୃଷ୍ଠା ୩୨

Միանալու

Ուժի մեջ մտնելու իսկ օրից սույն Կոնվենցիան միանալու համար բաց կլինի 30 հոդվածում նշված բոլոր այն պետությունների համար, որոնք Կոնվենցիան չեն ստորագրել, ինչպես նաև ցանկացած այլ պետության համար, որը միանալու կիրավիրվի Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գործադիր խորհրդի կողմից: Միանալը իրականացվում է միանալու մասին փաստաթուղթը հիշյալ Կազմակերպության Գլխավոր տնօրեննին ի պահ տարու միջոցով:

36

Հոդված 33

Աւժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի հիմք վավերագրերի ի պահ տումբութ երեք ամիս անց:

2. Քետագայում Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի համար այն ուժի մեջ կմտնի երեք ամիս անց այն օրից, եթե այդ կողմն ի պահ է տալիս իր վասերագիրը ևսան միանալու մասին փաստաթուղթը:

3. 18 և 19 հոդվածներում նախատեսված դեպքերում ընդհանարար մեջ գտնվող այն կողմերի համար, որոնք կավերացնան կամ միանալու փաստարդերն ի պահ են տվել ռազմական գործողություններից կամ գրավումից առաջ կամ հետո, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի անմիջապես: Նման դեպքերուն Միավորված ազգերի կորության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը 38 հոդվածով նախատեսված հաղորդումները կատարում է արագացված կարգով:

Հոդված 34

Գործողության մեջ դնելը

1. Կոնվենցիայի՝ ուժի մեջ մտնելու օրը նրա մասնակից յուրաքանչյուր կողմ վեցամյա ժամկետում ծեռնարկվում է այն գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ միջոզգառումնեո:

2. Այս ժամկետը, Վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ի պահ հանձնած պետության համար, 6 ամիս է՝ հաշված Վավերագրի կամ միանալու մասին փաստաթուղթի ասիս ուսուր օրինակ:

Вариант 35

Կոնվենցիայի գործողությունը լրացրածության մեջ

8. Յանկացած Քարծոր պայմանավորվող կողմ կարող է վավերացման կամ միահանդիս պահին կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Միավորված պազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր նորոգենին հղած ծանուցման միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիան լուսաբար ցանկացած տարածքի կամ այնպիսի տարածքի վրա, որի տարածքը միջազգային հարաբերություններում ինքը պատասխանատու է: Այլ ծանուցումն ուժի մեջ է մտնում այն ստանագուց եղեք այնին ամեն:

Բոդված 36

Հարաբերակցությունը նախորդ կոնվենցիաներից

1. Այն պետությունների հարաբերություններում, որոնք կապված են 899 թ. հուլիսի 29-ի Յամարային պատերազմի օրենքների և

սովորութեների մասին (IV) և Պատերազմի ժամանակ ծովային ուժերով ռմբակոնքության մասին (IX) կամ 1907 թ. հոկտեմբերի 18-ի Դադայի կողմեր կոնվենցիայի կողմեր են, այս վերջին Կոնվենցիան կրացնի Վերօնչյալ (IX) Կոնվենցիային և Վերօնչյալ (IV) Կոնվենցիայի հավելվածը կազմող Կանոնակարգը և Վերօնչյալ (IX) Կոնվենցիայի 5 հոդվածում նկարագրված նշանը կիոփիսարիին սույն երբ սույն Կոնվենցիան ու Կոնվենցիայի գործադրման կանոնակարգը նախատեսում են այդ տարբերանշանի գործածությունը:

2. Այն պետությունների հարաբերություններում, որոնք կապված են Գիտության ու արվեստի հիմնարկների պաշտպանության մասին Կաշինգտոնի 1935 թ. ապրիլի 15-ի դաշնագրով (Ոյորիխի դաշնագիր) և որոնք սույն Կոնվենցիայի կողմեր են, վերջին Կոնվենցիան կրացնի Ռոյրիխի դաշնագիրը և նրա 3 հոդվածում նկարագրված տարրերադրոշը կիոփիսարիին սույն Կոնվենցիայի 16 հոդվածում նկարագրված նշանը այն դեպքի համար, երբ սույն Կոնվենցիան ու Կոնվենցիայի գործադրման կանոնակարգը նախատեսում են այդ տարբերանշանի գործածությունը:

### Հոդված 37

#### Կոնվենցիան չեղյալ հայտարարելը

1. Բարձր պայմանագործող կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր անունից կամ միջազգային հարաբերություններում իր կողմից ներկայացվող ցանկացած տարածքի անունից չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

2. Չեղյալ հայտարարելու մասին պետք է հայտարարվի գրավոր՝ սրագրության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին:

3. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու մասին փաստաթղթի ստացվելուց մեկ տարի հետո: Սակայն, եթե այդ տարվա ավարտին չեղյալ հայտարարող կողմը ներքաշված է գինված ընդհարման մեջ, չեղյալ հայտարարումն ուժի մեջ չի մտնում մինչև ընդհարման ավարտը կամ այնքան ժամանակ, քանի դեռ չեն ավարտվել մշակութային արժեքներն այն երկիրը վերադարձնելու գործողությունները, որտեղից դուրս են բերվել:

### Հոդված 38

#### Ծանուցումը

Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը 30 և 32 հոդվածներում նշված պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը տեղեկացնում է Կոնվենցիայի վավերացման, նրան միանալու կամ

փոփոխությունների ու լրացումների ընդունման մասին, 31, 32 և 39 հոդվածներով նախատեսված բոլոր փաստաթղթերի հանձնման, ինչպես նաև, համապատասխանաբար 35, 37 և 39 հոդվածներով նախատեսված ծանուցումների ու չեղյալ հայտարարելու մասին:

### Հոդված 39

#### Կոնվենցիայի և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի վերանայումը

1. Բարձր պայմանագործող կողմերից յուրաքանչյուրը կարող է առաջարկել սույն Կոնվենցիայի և Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի փոփոխություններ ու լրացումներ: Առաջարկված ամեն մի փոփոխությունը կամ լրացում հաղորդվում է Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին, որն այն ուղարկում է Բարձր պայմանագործող կողմերից յուրաքանչյուրին՝ խնդրանքով, որպեսզի այդ կողմը չորս ամսվա ընթացքում տեղեկացնի:

a) ցանկանում է նա արդյոք, որպեսզի առաջարկված փոփոխությունը կամ լրացումը քննարկելու համար հրավիրվի կոնֆերանս,

b) համաձայն է նա արդյոք, որպեսզի առաջարկված փոփոխությունը կամ լրացումն ընդունվի առանց կոնֆերանս հրավիրելու,

c) համաձայն է նա արդյոք, որպեսզի առաջարկված փոփոխությունը կամ լրացումը մերժվի առանց կոնֆերանս հրավիրելու:

2. Գլխավոր տնօրենը սույն հոդվածի 1 կետին համապատասխան ստացված պատասխանները հաղորդում է բոլոր Բարձր պայմանագործող կողմերին:

3. Եթե Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին իրենց կարծիքը նախատեսված ժամկետում հաղորդած բոլոր Բարձր պայմանագործող կողմերը, ի կատարում սույն հոդվածի 1 (b) կետի, Գլխավոր տնօրենին ծանուցում են, թե իրենց համաձայն են փոփոխությունը կամ լրացումն առանց կոնֆերանս հրավիրելու ընդունելու, ապա Գլխավոր տնօրենը նրանց որոշման ծանուցման մասին հաղորդում է 38 հոդվածին համապատասխան: Փոփոխությունը կամ լրացումն ուժի մեջ է մտնում բոլոր Բարձր պայմանագործող կողմերի համար այդ ծանուցումից 90 օր անց:

4. Առաջարկված փոփոխությունը կամ լրացումը քննարկելու համար Գլխավոր տնօրենը Բարձր պայմանագործող կողմերի կոնֆերանս է հրավիրում այն դեպքում, եթե այդ մասին խնդրում է կողմերի ընդհանուր քվի մեկ երրորդից ավելին:

5. Կոնվենցիայի կամ Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի այն փոփոխությունը ու լրացումները, որոնք քննարկվում են նախորդ կետով

սահմանված ընթացակարգին համապատասխան, ուժի մեջ են մտնում, միայն այն բանից հետո, եթե արժանանում են կոնֆերանսին ներկայացված Բարձր պայմանավորվող կողմերի միաձայն հավանությանը և այն բանից հետո, եթե դրանք ընդունել է Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը:

6. Բարձր պայմանավորվող կողմերը կոնվենցիայի կամ կոնվենցիայի գործադրման կանոնակարգի փորձադրման կանոնակարգի՝ 4 և 5 կետերում հիշատակված կոնֆերանսի հավանությանն արժանացած փոփոխություններն ու լրացումներն ընդունում են Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին պաշտոնական փաստաթուղթ ներկայացնելու միջոցով:

7. Սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի փոփոխությունների ու լրացումների՝ ուժի մեջ մտնելուց հետո Կոնվենցիայի կամ Կոնվենցիայի գործադրման կանոնակարգի՝ այդ կերպ ուղղված տեքստն է միայն, որ բաց է մնում վավերացման կամ միանալու համար:

#### Հոդված 40

##### Գրանցումը

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածին համապատասխան, սույն Կոնվենցիան գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում՝ Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից:

Ի հավաստիացումն որի՝ պատշաճորեն լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է 1954 թ. մայիսի 14-ին, Շաազյալմ, մեկ օրինակով, որը պահպանվում է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արխիվներում և որի վավերացված պատճեններն ուղարկվելու են 30 և 32 հոդվածներում նշված բոլոր պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը:

#### ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՂԵՊՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

#### Գ Լ Խ Խ Լ. ՎԵՐԱԿՄԱՆ ՂԵՊՈՒՄ

##### Հոդված 1

###### Անձանց միջազգային ցուցակը

Կոնվենցիայի՝ ուժի մեջ մտնելու պահից իսկ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենն կազմում է այն անձանց միջազգային ցուցակը, ում Բարձր պայմանավորվող կողմերն առաջադրում են մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարի գործառույթներն իրականացնելու համար: Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի նախաձեռնությամբ այդ ցուցակը պարբերաբար վերանայվելու է հիմք ընդունելով Բարձր պայմանավորվող կողմերի պահանջները:

##### Հոդված 2

###### Վերահսկողության կազմակերպումը

Հենց որ Բարձր պայմանավորվող կողմը ներքաշվում է գինված ընդհարման մեջ, որի նկատմամբ կիրառելի է Կոնվենցիայի 18 հոդվածը.

- Աա նշանակում է իր տարածքում գտնվող մշակութային արժեքների գծով ներկայացուցիչ, եթե այդ կողմը գրավել է այլ տարածք, ապա նշանակում է այդտեղ գտնվող մշակութային արժեքների գծով ներկայացուցիչ:
- Այդ Բարձր պայմանավորվող կողմի հետ գինված ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմի Հովանավոր պետությունը նշանակում է առաջինին առընթեր պատվիրակներ՝ ներքոի հիշյալ 3 հոդվածին համապատասխան,
- Այդ Բարձր պայմանավորվող կողմին առընթեր, ներքոի հիշյալ 4 հոդվածին համապատասխան, նշանակում է մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատար:

### Հոդված 3

#### Հովանավոր պետությունների պատվիրակների նշանակումը

Հովանավոր պետությունն իր պատվիրակներին նշանակում է իր դիվանագիտական կամ հյուպատոսական անձնակազմի ամդամներից կամ, այն կողմի համաձայնությամբ, որին առընթեր նրանք կատարում են իրենց գործառույթները՝ այլ անձանցից:

### Հոդված 4

#### Գլխավոր հանձնակատարի նշանակումը

1. Մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարը նշանակում է անձանց միջազգային ցուցակից ինչպես այն կողմի, որին առընթեր նա կատարում է իր գործառույթները, այնպես էլ զինված ընդհարման մեջ գտնվող կողմի Հովանավոր պետությունների համատեղ համաձայնությամբ:

2. Եթե կողմերն այդ հարցի շուրջ իրենց բանակցությունները սկսելուց հետո եթե շարաբվա ընթացքում համաձայնության չեն գալիս, նրանց խնդրում են Միջազգային դատարանի նախագահին նշանակելու Գլխավոր հանձնակատար, որն իր պարտականությունների կատարումը ստանձնում է այն կողմի համաձայնության ստացումից հետո միայն, որին առընթեր նա պետք է իրականացնի իր գործառույթները:

### Հոդված 5

#### Պատվիրականների գործառույթները

Հովանավոր պետությունների պատվիրակներն արձանագրում են Կոնվենցիայի խախտումները, այն կողմի համաձայնությամբ, որոնց առընթեր նրանք կատարում են իրենց գործառույթները, քննում են հանգամանքները, որոնց դադարեցնելու նպատակով տեղում ծերնարկում են դեմքարշներ, և, անհրաժեշտության դեպքում, որանց մասին ծանուցում են Գլխավոր հանձնակատարին: Նրան տեղեկություններ են հաղորդում իրենց գործումներում վերաբերյալ:

### Հոդված 6

#### Գլխավոր հանձնակատարի գործառույթները

1. Մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարն այս կողմի ներկայացուցչի, որին առընթեր կատարում է իր գործառույթները, և շահագրգիռ պատվիրակների հետ ըննարկում է իրեն փոխանցվող բոլոր այն հարցերը, որոնք ծագում են Կոնվենցիայի կիրառման կապակցությամբ:

2. Սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում նա կարող է որոշումներ ընդունել և նշանակումներ կատարել:

3. Այն կողմի համաձայնությամբ, որին առընթեր Գլխավոր հանձնակատարն իրականացնում է իր գործառույթները, նա իրավունք ունի հրամայել կատարելու քննություն կամ այդ քննությունը վարել անձանք:

4. Նա զինված ընդհարման մեջ գտնվող Կողմերի կամ դրանց Հովանավոր պետությունների առջև ծերնարկում է բոլոր այն դեմքարշները, որոնք ինքը Կոնվենցիայի կիրառման համար համարում է օգտակար:

5. Նա կազմում է զեկույցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կոնվենցիայի կիրառման համար և դրանք հաղորդում է շահագրգիռ կողմերին, ինչպես նաև նրանց Հովանավոր պետություններին: Այդ զեկույցների պատճենները նա ուղարկում է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին, որը կարող է օգտագործել միայն դրանցում պարունակվող տեխնիկական տվյալները:

6. Այն դեպքում, եթե Հովանավոր պետություն չկա, Գլխավոր հանձնակատարն իրականացնում է Հովանավոր պետության Կոնվենցիայի 21 և 22 հոդվածներով սահմանված գործառույթները:

### Հոդված 7

#### Տեսուչները և փորձագետները

1. Եթե մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարը անհրաժեշտ է գտնում, կամ շահագրգիռ պատվիրակների խնդրանքի հիման վրա, կամ նրանց հետ խորհրդակցելուց հետո, այն պետության հաստատմանը, որին առընթեր հավատարմագրված է, ներկայացնում է մշակութային արժեքների գծով տեսուչի թեկնածությունը, որի վրա դրվում է որոշակի առաջելություն: Տեսուչը պատասխանատու է միայն Գլխավոր հանձնակատարի աջակ:

2. Գլխավոր հանձնակատարը, պատվիրակներն ու տեսուչը կարող են դիմել փորձագետների ծառայություններին, որոնց թեկնածությունը ևս ներկայացվում է նախորդ կետում նշված կողմի հավանությանը:

### Հոդված 8

#### Վերահսկողության գործառույթների իրականացումը

Մշակութային արժեքների գծով հանձնակատարները, Հովանավոր պետությունների պատվիրակները, տեսուչներն ու փորձագետները ոչ մի դեպքում չափություն է դուրս գան իրենց գործառույթների շրջանակներից: Նրանք պետք է հատկապես ուշադրության առնեն այն Բարձր պայմանավորվող կողմի անվտանգության շահերը, որոնց առընթեր կատարում են իրենց գործառույթները, և բոլոր հանգամանքներում պետք է գործեն այն ռազմական իրավիճակի պահանջներին համապատասխան, որի մասին նրանց տեղեկացնում է Բարձր պայմանավորվող կողմը:

Հոդված 9

Հովանավոր պետությունների փոխառինումը

Եթե ընդհարման մեջ գտնվող կողմը չի օգտվում կամ դադարել է օգտվել Հովանավոր պետության ծառայություններից, կարելի է խնդրել չեզոք պետությանը, որպեսի նա, հանձնային 4 հոդվածով նախատեսված ընթացակարգի, ստանձնի նշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատար նշանակելու Հովանավոր պետության գործառությը։ Այդ կերպ նշանակված Գլխավոր հանձնակատարը Հովանավոր պետությունների պատվիրակների սույն Կանոնակարգով սահմանված գործառույթները հարկ եղած ղեպերում հանձնարարում է տեսար մերին։

Հոդված 10  
Ծախսերը

Մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարի, տեսուչների և փորձագետների վարձատրությունն ու նրանց ծախսերի վճարումը կատարում է այն կողմը, որին առընթեր նրանք իրականացնում են իրենց գործառույթները. Դուքանավոր պետությունների պատվիրակների վարձատրությունն ու ծախսերը ենթակա են համաձայնեցման այդ պետությունների և այն պետությունների միջև, որոնց շահերը նրանք պաշտամունք են:

Задание 11

### Հանդատրախոիզ լաւագաղաքացիութեա

1. Եթե Բարձր պայմանավորվող կողմը գինված ընդհարման ընթացքում չնախատեսված հանգամանքների բերումով պետք է ստեղծի հանգստրաստից պատսպարան, և եթե ցանկանում է, որ այդ պատսպարանը վերցվի հասուկ պաշտպանության մերքո, նա այդ մասին անհապաղ տեղեկացնում է իրեն առօնքեր գործառություններ իրականացնող Գլխավոր հանձնակառապահն:

2. Եթե Գլխավոր հանձնակատարը գտնում է, որ հանգամանքներու ու այդ հանպատրաստից պատսպարանում պահիող մշակութային արժեքների կարևորությունն արդարացնում են նորան միջոցները, նա կարող է Բարձր պայմանագրով կողմին բռնվարդել՝ պատսպարանը նշելու կոնվենցիայի 16 հոդվածով սահմանված տարրերանշանով։ Իր որոշման մասին նա անհապաղ տեղեկացնում է շահագրգիռ Հովաննավոր

պետությունների պատվիրակներին, որոնցից յուրաքանչյուրը կարող է երեսնօրյա ժամկետում պահանջել՝ անծիփազես ինձնելու այս մասին:

3. Հենց որ այդ պատվիրակները հայտնում են իրենց համաձայնությունը, կամ եթե երեսնօրյա ժամկետի լրանալուց հետո շահագրգիռ պատվիրակներից ոչ չի հայտնում իր առարկության նախին, և եթե հանպատրաստից պատսպարանը, Գլխավոր հանձնակատարի կարծիքով, համապատասխանում է Կոնվենցիայի 8 հոդվածով նախատեսված պայմաններին, Գլխավոր հանձնակատարը Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին խնդրում է պատսպարանը գրանցել հատուկ պաշտպանության մերք գտնվող մշակութային արժեքների գործադրանություն:

Հոդված 12

Հատուկ պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների միջազգային գրանցամատանը

1. Կազմվում է հասուլք պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների միջազգային գրանցանալուան:

2. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրեններ վարուս է այդ գրանցամատյանը: Նա որևէ պատճենները հանձնում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, ինչպես նաև Բարձր պայմանականություն լրացնեն:

պայմանագրով կլուստիրվի:

3. Գրանցամատությունը բաժանվում է բաժինների, յուրաքանչյուրը՝ բարձր պայմանագրով կողմերից մեկի անունով: Ամեն մի բաժին ստորաբաժանվում է երեք մասի՝ պատսպարաններ, հուշարձաններ ընդգրկող կենտրոններ և այլ անշարժ նշակութային արժեքներ: Գլխավոր տնօրենը որոշում է, թե յուրաքանչյուր բաժին ինչ մանրամասներ է ունիում:

Занятие 13

Գրանցամատյանում գրանցելու համար ոկտոբերի

1. Բարձր պայամնավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գիշավոր տնօրենին՝ իր տարածքում գտնվող որոշ պատսպարաններ, հուշաքաններ ընդգրկող կենտրոններ կամ այլ անշարժ մշակութային արժեքներ գրանցամատյանում գրանցելու նաևին: Դիմումի մեջ կողմը տեղեկություններ է հաղորդում այդ արժեքների գտնվելու վայրի մասին և հավաստիացնում, որ դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 8 հոդվածով նախատեսված այսպահանջերին:

2. Գրամշնան դեպքում նման դիմում ներկայացնելու իրավունք ունի գրավող պետությունը:

3. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենն անմիջապես Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրին է ուղարկում մշակութային արժեքները գրանցամատյանում գրանցելու մասին դիմումների պատճենները:

Հոդված 14

Առարկաներ

1. Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է Սիհավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրեննին ուղղված նամակով առարկություն ներկայացնել մշակութային արժեքը գրանցամատյանում գրանցելու դեմ: Գլխավոր տնօրենն այդ նամակը պետք է ստանա չորսամյա ժամկետում՝ հաշված այն օրից, երբ ինքն ուղարկել է տվյալ մշակութային արժեքը գրանցամատյանում գրանցելու մասին խնդրանքի պատճենները:

2. Նման առարկությունն պետք է ինի պատճառաբանված: Դրա համար կարող են բերվել միայն հետևյալ պատճառաբանությունները՝

ա) որ արժեքը մշակութային արժեք չէ,

б) որ սովետ չի բավարարութ Կոնվենցիայի 8 հոդվածի պայմաններին:

3. Գլխավոր տնօրենն առարկությունը բովանդակող նամակի պատճենն անմիջապես ուղարկում է Բարձր պայմանավորվող կողմերին: ԱՆԻՐԱԺԵՑՈՒԹՅԱՆ դեպքում նա հարցնում է Գեղարվեստական ու պատմական հետաքրքրություն ներկայացնող հուշարձանների, վայրերի և հնագիտական պեղավայրերի պաշտպանության միջազգային կոմիտեի, ինչպես և ցանկացած այլ իրավասու կազմակերպության կամ անձի կառուցիրո:

4. Գիշակոր տնօրենը կամ մշակութային արժեքը գրանցամատյանում գրանցելու մասին դիմած Բարձր պայմանավորվող կողմը կարող էն իրենց առարկությունների մասին հայտարարած Բարձր պայմանավորվող կողմերի նկատմամբ ծեռնարկել ցանկացած դեմք, որն անհրաժեշտ և սահմանափակ ուսումնական աշխատավորություններից:

5. Εթο Ρωμαρ պայմանակիրով կողմը, որը հայալ ժամանակ դիմե է մշակութային արժեքը գրանցամատյանում գրանցելու համար, դառնում է զինված ընդհարման նախքանից նախքան գրանցամատյանում այդ մշակութային արժեքը գրանցելու վերաբերյալ դիմումն ուժի մեջ մտնելը, ապա Գլխավոր տնօրենը տվյալ մշակութային արժեքն անմիջապես ժամանակակիրապես ներառում է գրանցամատյանում մինչև ցանկացած առարկության հաստատվելը, հաճվելը կամ չեղյալ հայտարարվելը, որը կարող է կան կարող էր արկել:

6. Եթե 6 ամիս անց այն բանից հետո, եթե Գլխավոր տնօրինք ստանում է որևէ արժեք գրանցածառայանում գրանցելու դեմ առարկություն ըստիւմունքու նամակ, այդ առանության մասին հայտարարած Բարձր

պայմանավորվող կողմից տեղեկություն չի ստանում առարկությունից դրաժամարկելու մասին, արժեքը գրանցանալուց հետո հաջար պայմանավորվող կողմը կարող է դիմել արբիտրաժ հաջորդ շրջանակությունում առաջարկելու համապատասխան:

8. Յանձնակացած ժամանակ, երբ ժագում է վեճ, որի կողմը Բարօր պայմանավորվող կողմն է, վերջինս կարող է հայտարարել, որ ինքը չի ցանկանում կիրառել նախորդ կետերում նախատեսված արքիտրաֆի ընթացակարգը: Այդ դեպքում Գլխավոր տնօրենը գրանցամատյանում գրանցելու դեմ առարկությունն ուղարկում է Բարձր պայմանավորվող կողմերին: Այդ առարկությունն ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ հաստատվում է քվեարկող Բարձր պայմանավորվող կողմերի երկու երրորդի կողմից: Քվեարկությունը կարող է կատարվել հեռակա կարգով, եթե միայն Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը անհրաժեշտ չի համարում Կոնվենցիայի 27 հոդվածով իրեն տրված լիազորությունների հիման վրա խորհրդակցություն հրավիրել: Եթե Գլխավոր տնօրենը որոշում է քվեարկությունն անցկացնել հեռակա կարգով, Բարձր պայմանավորվող կողմերին խնդրում է վեցամյա ժամկետում, հաշված խնդրանքը հղելու օրից մերժումը նախանդ իրեն ուղարկել իրենց քվեները:

Вопрос 15

ԳՐԱՆԳՈՒՄԸ

1. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենք, համարակալելով գրանցանատյանում գրանցում է մշակութային յուրաքանչյուր արժեք, որի վերաբերյալ գրանցանատյանում գրանցելու խնդրանք է արվել, եթե 14 հոդվածի 1 կետով նախատեսված ժամկետում առաջարկություններ չեն ստացել:

5-րդ կետում նշված դեպքերի, Գլխավոր տնօրինում մշակութային արժեքը գրանցամատյանում գրանցում է միայն այն դեպքում, եթե առարկությունը հանկել է կամ հավանության չի արժանացել 14 հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 8 կետով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

3. Սույն Կանոնակարգի 11 հոդվածի 3-րդ կետում նախատեսված դեպքերում Գլխավոր տնօրինում արժեքը գրանցում է գրանցամատյանում մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարի խնդրանքով:

4. Գլխավոր տնօրինում գրանցամատյանում կատարված յուրաքանչյուր գրանցման վավերացված պատճենն անմիջապես ուղարկում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, Բարձր պայմանավորվող կողմերին և, գրանցամատյանում ընդգրկելու մասին դիմած կողմի խնդրանքով, Կոնվենցիայի 30 և 32 հոդվածներում նշված բոլոր պետություններին:

Գրանցամատյանում արված գրանցումն ուժի մեջ է մտնում նշված պատճեններն ուղարկելուց երեսուն օր հետո:

#### 3 ո դ վ ա ծ 16

#### Գրանցամատյանից հանելը

1. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակութի կազմակերպության Գլխավոր տնօրինում մշակութային արժեքները գրանցմատյանից հանում է

ա) այն Բարձր պայմանավորվող կողմի խնդրանքով, որի տարածում գտնվում է մշակութային արժեքը,

բ) եթե որևէ արժեք գրանցամատյանում գրանցելու մասին դիմած Բարձր պայմանավորվող կողմը չեղյալ է հայտարարել Կոնվենցիան և եթե այդ չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտել,

ց) սույն Կանոնակարգի 14 հոդվածի 5-րդ կետում նախատեսված դեպքերում, եթե առարկությունը հաստատվել է 14 հոդվածի 7-րդ կամ 8-րդ կետերով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

2. Գլխավոր տնօրինում գրանցամատյանից հանելու յուրաքանչյուր փաստաթրի վավերացված պատճենն անմիջապես ուղարկում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին և բոլոր այն պետություններին, որոնք ստացել են արժեքները գրանցամատյանում գրանցելու մասին պատճենը: Դանելն ուժի մեջ է մտնում այդ պատճեններն ուղարկելուց երեսուն օր հետո:

#### Գ լ ու խ III. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽՎԴՐՈՒՄԸ

##### 3 ո դ վ ա ծ 17

##### ԱՆՃԵՌՆՆՅԻՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՆԱԼՈՒ ԾՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Կոնվենցիայի 12 հոդվածի 1-ին կետով նախատեսված խնդրանքն ուղղվում է մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարին: Խնդրանքում պետք է շարադրվեն որա պատճառները և փոխադրման ենթակա մշակութային արժեքների մոտավոր քանակությունն ու նշանակությունը, տվյալ պահին դրանց գտնվելու վայրը, ենթադրվող նոր տեղաբաշխությը, փոխադրման փոխադրման դրամական համար նախատեսված ամսաթիվը և ցամկացած այլ ամերաժեշտ տեղեկություն:

2. Եթե Գլխավոր հանձնակատարն այն կարծիքները սպանալուց հետո, որոնք ինըն անհրաժեշտ է համարում, գտնում է, որ տվյալ փոխադրման արդարացված է, այդ փոխադրման նախատեսված եղանակների շրջու խորհրդակցում է Դուվանավոր պետությունների շահագրգիռ պատվիրակների հետ: Նման խորհրդակցությունից հետո նա ընդհարման մեջ գտնվող շահագրգիռ կողմերին տեղեկացնում է փոխադրման մասին իր հաղորդմանը կցելով անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը:

3. Գլխավոր հանձնակատարը նշանակում է մեկ կամ մի քանի տեսուչների, որոնք հավաստիանում են, որ փոխադրվում են միայն խնդրանքում նշված արժեքները, որ փոխադրումն իրականացվում է հավանության արժանացած եղանակով և որ փոխադրման փոխադրման մասին իր տարրերանշամբ: Այդ տեսուչը կամ տեսուչները փոխադրման ուղեկցում են մինչև նրա նշանակման վայրը:

##### 3 ո դ վ ա ծ 18

##### ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ԱՐՏԱՍԱՀԻՄԱՆ

Եթե հատուկ պաշտպանության ներքո փոխադրումն իրականացվում է դեպի այլ երկրի տարածք, այն կարգավորվում է ոչ միայն սույն Կոնվենցիայի 12 հոդվածի և սույն Կանոնակարգի 17 հոդվածի դրույթներով, այլև հետևյալ դրույթներով.

ա) մշակութային արժեքները այլ պետության տարածքում գտնվելու ժամանակ պետք է ասականվեն այդ պետության կողմից: Դրանց մասին նա պետք է հոգա ոչ պակաս, քան սեփական նույնարձույթ մշակութային արժեքների մասին,

բ) պետությունը, որի պահպանության ներքո են հիշյալ արժեքները, դրանք վերադառնում է միայն ընդհարման ավարտից հետո. արժեքների վերադառն իրականացվում է այդ մասին խնդրանքից հետո վեցամյա ժամկետում,

- c) այդ արժեքների փոխադրման տարբեր գործողությունների ընթացքում և որևէ այլ պետության տարածքում գտնվելու ժամանակ դրանք չեն կարող բռնագրավել. հանձնող պետությունը և ի պահ ընդունող պետությունը չեն կարող ազատորեն տնօրինել դրանք: Սակայն եթե արժեքների պահպանությունն այդ է պահանջում, դրանք ի պահ ընդունած պետությունը կարող է արժեքներն ի պահ հաճանած պետության համաձայնությամբ դրանք փոխադրել երրորդ երկրի տարածք՝ սույն հոդվածով նախատեսված պայմաններով:
- d) արժեքները հասուն պաշտպանության ներքո վերցնելու մասին խնդրանքում պետք է նախատեսված լինի, որ պետությունը, որի տարածք փոխադրումը կատարվում է, ընդունում է սույն հոդվածի դրույթները:

#### Հոդված 19

##### Գրավված տարածքը

Եթե մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմի տարածքը գրաված Բարձր պայմանավորվող կողմը մշակութային արժեքները փոխադրում է այդ տարածքի ուրիշ կետերում տեղադրված ապաստարանների ի վիճակի չիննելով պահպանելու Կանոնակարգի 17 հոդվածով նախատեսված ընթացակարգը, նշված փոխադրումը չի դիտվում իբրև Կոնվենցիայի 4 հոդվածի բովանդակությանց հակասող, եթե մշակութային արժեքների գծով Գլխավոր հանձնակատարը, արժեքների պաշտպանության անձնակազմի հետ խորհրդակցելուց հետո, գրավոր հավաստիացնում է, որ այդ փոխադրման անհրաժեշտությունը բխել է հանգանանքներից:

#### Գլուխ IV. ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԸ

#### Հոդված 20

##### Տարբերանշանի տեղադրությունը

1. Տարբերանշանի տեղադրությունը և տեսանելիության աստիճանը վերապահվում են Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի իրավասու իշխանությունների հայեցողությանը: Տարբերանշանը կարող է գտնվել դրոշների կամ թևապերի վրա: Այն կարող է նկարված կամ ցանկացած այլ հարմար եղանակով պատկերված լինել որևէ առարկայի վրա:

2. Զիվված ընդհարման ժամանակ Կոնվենցիայի 12 և 13 հոդվածներում նշված դեպքերում, փոխադրամիջոցների վրա տարբերանշանը պետք է (չքացառելով նշանակման ցանակացած այլ, առավել արդյունավետ եղանակների հնարավորությունը) տեղադրված լինի այնպես, որ ցերեկը պարզ տեսանելի լինի հնչածիս օդից, այնպես էլ երկրի մակերևույթից:

Երկրի մակերևույթից այն պարզ տեսանելի պետք է լինի նաև այս դեպքերում, եթե տեղադրված է:

- a) պատշաճ հեռավորությամբ, որը հնարավորություն կտա հստակորեն որոշել հասուն պաշտպանության ներքո կտնվող հուշարձաններ ընդգրկող կենտրոնների սահմանները,
- b) հասուն պաշտպանության ներքո գտնվող այլ անշարժ մշակութային կենտրոնների մուտքի մոտ:

Շխակ երես

	
<b>ՎԿԱՅԱԿԱՆ</b>	
մշակութային արժեքների պահպանության անձնակազմի համար	
Ազգանուն	-----
Անուն	-----
Ծննդյան թվական	-----
Կոչում կամ աստիճան	-----
Պաշտոն	-----
<p>Իհանդիսական է սույն վկայականի տեր Զինված ընդհարման ղեկավառ մշակութային արժեքների պահպանության մասին Դատադիր 1954 թ. մայիսի 14-ի կոնվենցիայի ուժով</p>	
Երբ է տրվել	Վկայականի N
-----	-----

Դակարակ երես

Տիրոջ լուսանկարը	Ստորագրություն կամ մատնահետքեր. կամ և մեկը, և մյուսը	
 Վկայականը տված իշխանությունների կոիք		
Դասակը	Աչերը	Մազերը
-----	-----	-----
Այլ նշաններ		
-----	-----	-----
-----	-----	-----
-----	-----	-----

## Հոդված 21

### Անձանց ժամանակագրություն

1. Կոնվենցիայի 17 հոդվածի 2-րդ կետի (b) և (c) ենթակետերով նախատեսված անձինք կարող են կրել տարբերանշամի պատկերով թևկապ, որոնք տրվում են իրավասու իշխանությունների կողմից ու կրու վերջինների դրոշմակնիքը:

2. Այդ անձինք ունեն անձը հաստատող հատուկ վկայականներ՝ տարբերանշամի պատկերով: Վկայականում նշվում են նրա տիրոջ, առնվազն անունն ու ազգանունը, ծննդյան թվականը, կոչումը կամ աստիճանը և պաշտոնը: Անձը հաստատող վկայականում տեղ է գտնում տիրոջ լուսանկարը, նրա ստորագրությունը կամ մատնահետքերը, կամ երկուսը միասին: Վկայականը կնքվում է իրավասու իշխանությունների դրոշմակնիքով:

3. Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ սահմանում է անձը հաստատող վկայականի իր նմուշը՝ ինքը ընդունելով սույն Կանոնակարգի հավելվածում նշված ծեր: Բարձր պայմանավորվող կողմերը միմյանց են փոխանցում իրենց կողմից օգտագործվող նմուշը: Յուրաքանչյուր անձի վկայական պատրաստվում է, հնարավորության դեպքում, առնվազն երկու օրինակով, որոնցից մեկը պահպանվում է այն հանձնաժ պետությունում:

4. Կերպիչայլ անձինք առանց օրինական հիմքերի չեն կարող գլուխել ոչ իրենց անձը հաստատող վկայականից, ոչ թևկապ կրելու իրավունքից:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԶԻՆՎԱԾ ԸՆԴԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵԲՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնեցին ենթակիշյալին.

### I

1. Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ պարտավորվում է կանխել այն մշակութային արժեքների դուրս բերումը զինված ընդհարման ժամանակ իր կողմից գրավված տարածքից, որոնք սահմանված են 1954 թ. մայիսի 14-ին Հաազայում ստորագրված Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին Կոնվենցիայի 1 հոդվածում:

2. Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ պարտավորվում է իր պահպանության մեջ վերցնել այն մշակութային արժեքները, որոնք իր տարածք են ներկրվել ուղղակի կամ անողղակի ճանապարհով, ցանկացած գրավյալ տարածքից: Դա կատարվում է կամ ինքնաբերաբար, ներկրման պահին, կամ, եթե այդ չի արվել, գրավյալ տարածքի իշխանությունների խնդրանքով:

3. Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ պարտավորվում է ռազմական գործողությունների դադարեցումից հետո նախկինուն

գրավված տարածքի իրավասու իշխանություններին վերադարձնել իր տարածքում գտնվող մշակութային արժեքները, եթե դրանք ներկրվել են ի խախտում 1-ին կետում սահմանված սկզբունքի: Այդ արժեքները երեք չեն կարող պահպանվել իրեն ռազմական տուգանք:

4. Այն Բարձր պայմանավորվող կողմը, որը պարտավոր էր կանխել մշակութային արժեքների դուրս բերումը իր գրաված տարածքից, վճարում է փոխհատուցում նախորդ կետին համապատասխան վերադարձնան ներակա մշակութային արժեքները բարեխղճորեն պահպանողներին:

### II

5. Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ պարտավորվում է ռազմական գործողությունների ավարտից հետո մյուս Բարձր պայմանավորվող կողմի իրավասու իշխանություններին վերադարձնել այն մշակութային արժեքները, որոնք, զինված ընդհարման վտանգից պաշտպանելու նպատակով, վերջինիս տարածքից ի պահ են տրվել Բարձր պայմանավորվող կողմի տարածքը:

### III

6. Սույն Արձանագրությունը թվագրվելու է 1954 թ. մայիսի 14-ի ամսաթվով և մինչև 1954 թ. դեկտեմբերի 31-ը բաց կլինի ստորագրության բոլոր այն պետությունների կողմից, որոնք հրավիրվել են 1954 թ. ապրիլի 21-ից մինչև մայիսի 14-ը Հաազայում անցկացված կոնֆերանսին:

7. ա) Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման այն ստորագրած պետությունների կողմից նրանց սահմանադրական ընթացակարգին համապատասխան,

բ) Վավերագրերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին:

8. Ուժի մեջ մտնելու օրից սույն Արձանագրությունը միանալու համար բաց կլինի 6 կետում նշված բոլոր այն պետությունների համար, որոնք այն չեն ստորագրել, ինչպես նաև ցանկացած այլ պետության համար, որը կիրավիրվի միանալու Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գործադիր խորհրդի կողմից: Միանալու իրականացվում է միանալու մասին փաստաթուղթ հիշյալ Կազմակերպության Գլխավոր տնօրենին ի պահ տալու միջոցով:

9. 6 և 8 կետերում նշված պետությունները ստորագրելու, վավերացնելու և միանալու պահին կարող են հայտարարել, որ իրենք կապված չեն լինի սույն Արձանագրության առաջին և երկրորդ բաժների դրույթներով:

10. ա) Սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում հիմգերորդ վավերագիրն ի պահ տրվելուց երեք ամիս անց,

- b) հետագայում Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի համար այն ուժի մեջ է մտնում երեք ամս այն օրից, երբ այդ կողմն ի պահ է տալիս իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը,
- c) 1954 թ. մայիսի 14-ին Հաագայում ստորագրված՝ Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին Կոնվենցիայի 18 և 19 հոդվածներում նախատեսված դեպքերում. ընդհարման մեջ գտնվող կողմերի ռազմական գործողություններից կամ գրավումից առաջ կամ հետո ի պահ տված վավերագրերը կամ միանալու ուժի մեջ են մտնում անհիշապես: Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը նաև վավերացումների կամ միանալու մասին տեղեկացնում է հնարավորին կարծ ժամկետում, 14 կետին հաճապատասխանան:
11. a) Արձանագրության ուժի մեջ մտնելու օրը յուրաքանչյուր մասնակից պետություն նրա՝ ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ձեռնարկում է Արձանագրությունը գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները,
- b) բոլոր այն պետությունների համար, որոնք վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են տալիս Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո, այդ ժամկետը կիաշվի վավերագրի կամ միանալու մասին փաստաթրի ի պահ տալու օրվանից:
12. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է վավերացման կամ միանալու պահին, կամ դրանից հետո ցանկացած ժամանակ, Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին ուղղված ծանուցման միջոցով հայտարարել, որ սույն Արձանագրությունը տարածվելու է միջազգային հարաբերություններում իր կողմից ներկայացվող բոլոր տարածքների կամ դրանցից որևէ մեկի վրա: Նշված ծանուցման ուժի մեջ է մտնում այն ստանալուց երեք ամս անց:
13. a) Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է իր անումից կամ միջազգային հարաբերություններում իր կողմից ներկայացվող ցանկացած տարածքի անումից չեղալ հայտարարել սույն Արձանագրությունը,
- b) հրաժարվելու մասին պետք է հայտարարվի գրավոր Միավորված

- ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին,
- c) հրաժարումն ուժի մեջ է մտնում հրաժարվելու մասին փաստաթղթի ստացվելուց մեկ տարի հետո: Սակայն, եթե այդ ժամկետի ավարտի պահին հրաժարվող կողմը ներքաշված է գինված ընդհարման մեջ, չեղալ հայտարարումն ուժի մեջ է մտնում մինչև ռազմական գործողությունների ավարտը և կամ այնքան ժամանակ, քանի դեռ չեն ավարտվել մշակութային արժեքները այն երկիրը վերադարձնելու գործողությունները, որտեղից դուրս են բերվել:
14. Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը 6-րդ և 8-րդ կետերում նշված պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը տեղեկացնում է Արձանագրությունը վավերացնելու, նրան միանալու կամ լրացումները ընդունելու մասին 7-րդ, 8-րդ և 15-րդ կետերում հիշատակված բոլոր փաստաթղթերի հանձնման, ինչպես նաև, հաճապատասխանաբար, 12-րդ և 13-րդ կետերով նախատեսված ծանուցումների ու հրաժարումների մասին:
15. a) Սույն Արձանագրությունը կարող է վերանայվել, եթե այդ պահանջում է Բարձր պայմանավորվող կողմերի ավելի քան մեկ երրորդը,
- b) Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենն այդ նպատակով հրավիրում է կոնֆերանս,
- c) սույն Արձանագրության փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում միայն այն բանից հետո, եթե կոնֆերանսին ներկայացած Բարձր պայմանավորվող կողմերը միաձայն ընդունում են և Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է դրանք,
- d) Բարձր պայմանավորվող կողմերը Արձանագրության՝ (b) և (c) ենթակետերում հիշատակված կոնֆերանսի հավանությանն արժանացած փոփոխություններն ու լրացումներն ընդունում են Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի

կազմակերպության Գլխավոր տնօրենին պաշտոնական փաստաթուղթ ներկայացնելու միջոցով.

ե) սույն Արձանագրության փոփոխությունների ու լրացումների՝ ուժի մեջ մտնելուց հետո Արձանագրության այդ կերպ ուղղված տեքստն է միայն, որ բաց է մնում վավերացման կամ միանալու համար:

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածին համապատասխան, սույն Արձանագրությունը գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի խնդրանքով:

**Ի հավաստիացումն որի՝** պատշաճորեն լիազորված ներքոստորագրյաները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է 1954 թ. մայիսի 14-ին, Դաագայում, մեկ օրինակով, անգլերեն, իսպաներեն, ռուսերեն ու ֆրանսերեն, ընդ որում բոլոր չորս տեքստերն օժտված են միևնույն ուժով: Այդ օրինակը պահպանվելու է Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արխիվում, և նրա վավերացրած պատճեններն ուղարկվելու են 6-րդ և 8-րդ կետերում նշված բոլոր պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը:

**ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՂԵՊԹՈՒՄ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵԲՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1954 թ. ՀԱՍԳԱՅԻ ՄԻԶԿԱՌՎԱՐԱՎԿԱՆ  
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ**

**ԲԱՆԱԳԵՐԸ**

**Բանաձև I**

Կոնֆերանսը ցանկություն է հայտնում, որպեսզի Միավորված ազգերի կազմակերպության հրավասու մարմինները որոշում ընդումեն, որ կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ծեռարկված ռազմական գործողությունների դեպքում Միավորված ազգերն այնպես անեն, որպեսզի այդ գործողություններին մասնակից գինված ուժերը կիրառեն սույն Կոնվենցիայի դրույթները:

**Բանաձև II**

Կոնֆերանսը ցանկություն է հայտնում, որպեսզի Կոնվենցիային միանալու պահից Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իր սահմանադրական և վարչական համակարգերի շրջանակներում ստեղծի խորհրդատվական, ազգային կոմիտե կազմված սահմանափակ թվով անձանցից, որոնք են հուշարձանների, հնագիտական տեղավայրերի,

թանգարանների և այլին պահպանության ծառայության պատասխանատու աշխատակիցները, Գլխավոր շտաբի ներկայացուցիչը, արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչը, միջազգային իրավունքի մասնագետը և Կոնվենցիայի ընդգրկած բնագավառներում աշխատող կամ հրավասու երկու - երեք այլ անդամներ:

Այդ Կոմիտեն, որը պետք է աշխատի այն նախարարության կամ պատասխանատու աշխատողի ղեկավարությամբ, որի տնօրինությանը է ենթակա մշակութային արժեքների մասին հոգացող ազգային հիմնարկությունները, կարող է ունենալ, մասնավորապես, հետևյալ գործառույթները:

- ա) խորհրդատվություն կառավարությանը օրնեսդրական, տեխնիկական կամ ռազմական բնույթի այն միջոցների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է ծեռնարկել խաղաղ կամ գինված ընդհարման ժամանակ Կոնվենցիան կիրառելու համար,
- բ) նման ընդհարման ծագման կամ անխուսափելիության դեպքում դիմել սեփական կառավարությանը, որպեսզի ազգային և այլ երկրների տարածքներում գտնվող մշակութային արժեքները երկորի գինված ուժերի կողմից արժանանան հարգանքի ու պաշտպանության, Կոնվենցիայի դրույթներին համապատասխան,
- ս) սեփական կառավարության համաձայնությամբ կապ ու համագործակցություն ապահովել նման կարգի ազգային այլ կոմիտեների և միջազգային ցանկացած այլ մարմնի հետ:

**Բանաձև III**

Կոնֆերանսը ցանկություն է հայտնում, որպեսզի Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո հնարավորին շուտ հրավիրի Բարձր պայմանավորվող կողմերի խորհրդակցություն:

**ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՂԵՊԹՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԱՐԺԵԲՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԳԱՅԻ  
1954 թ. ԿՈՆՖԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ  
1999 թ. ՄԱՐՏԻ 26-Ի ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Կողմերը,**

**Գիտակցելով** գինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կատարելագործման և հատուկ նշանակված

մշակութային արժեքների պաշտպանության ուժեղացված համակարգի ստեղծման անհրաժեշտությունը,

**Վերահստառելով** «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Դատագյում 1954 թ. մայիսի 14-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կարևորությունը և ընդգելով դրանք լրացնելու անհրաժեշտությունը այնպիսի միջոցներով, որոնք ուժեղացնում են դրանց իրազրությունը,

**Յանկամալով** զինված ընդհարման դեպքում Կոնվենցիայի Բարձր պայմանավորվող կողմերին տրամադրել մշակութային արժեքների պաշտպանության ավելի անմիջականորեն մասնակցելու հնարավորություն, համապատասխան ընթացակարգեր ստեղծելու միջոցով,

**Նկատի ունենալով**, որ զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանությունը կարգավորող կանոնները պետք է արտացոլեն միջազգային իրավունքի գարգացումները,

**Դաստիարելով**, որ միջազգային սովորության իրավունքի կանոնները կշարունակեն կարգավորել այն հարցերը, որոնք սույն Արձանագրությամբ չեն կարգավորվում,

Դամաձայնեցին հետևյալի մասին.

## Գ լ ու խ 1. Ներածություն

### Հ ո դ վ ա ծ 1

#### Սահմանումներ

Սույն Արձանագրության նպատակների համար՝

- «Կողմ» նշանակում է սույն Արձանագրության Կողմ պետություն,
- «մշակութային արժեք» նշանակում է մշակութային արժեք, ինչպես այն սահմանված է Կոնվենցիայի 1 հոդվածում,
- «Կոնվենցիա» նշանակում է «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիան, ընդունված 1954թ. մայիսի 14-ին Դատագյում,
- «Բարձր պայմանավորվող կողմ» նշանակում է Կոնվենցիայի Կողմ պետություն,
- «Ուժեղացված պաշտպանություն» նշանակում է սույն Արձանագրության 10 և 11 հոդվածներով հաստատված ուժեղացված պաշտպանության համակարգ,

- «Ուղամական օբյեկտ» նշանակում է այն օբյեկտը, որն իր բնույթով, տեղակայությամբ, նպատակներով կամ օգտագործմամբ կարող է եականորեն նպաստել ուղամական գործողություններին, և որի ամբողջական կամ մասնակի ոչնչացումը, բռնագավրումը կամ չեզոքացումը տվյալ պահին հանգեցնում է որոշակի ռազմական առավելության,
- «ապօրինի» նշանակում է բռնի կերպով կամ այլ գրավյալ տարածքի ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի կիրառելի կանոնների խախտմամբ,
- «Ցուցակ» նշանակում է Ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների Միջազգային ցուցակ, որը հաստատվում է սույն Արձանագրության 27 հոդվածի 1-ին կետի (b) ենթակետի համաձայն,
- «Գլխավոր տնօրեն» նշանակում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրեն,
- «ՅՈՒՆԵՍԿՕ» նշանակում է Միավորված ազգերի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն,
- «Առաջին Արձանագրություն» նշանակում է «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954թ. մայիսի 14-ին ընդունված Դատագյայի կոնվենցիայի Առաջին Արձանագրությունը:

### Հ ո դ վ ա ծ 2

#### Դարարերությունը Կոնվենցիայի հետ

Սույն Արձանագրությունը լրացնում է Կոնվենցիան՝ Կողմերի միջև հարաբերություններում:

### Հ ո դ վ ա ծ 3

#### Կիրառման շրջանակը

1. Բացի այն դրույթներից, որոնք կիրարվում են խաղաղ ժամանակ, սույն Արձանագրությունը կիրավում է նաև Կոնվենցիայի 18 հոդվածի 1-ին և 2-րդ կետերում և սույն Արձանագրության 22 հոդվածի 1-ին կետում նշված իրավիճակներում:

2. Եթե ընդհարման կողմերից որևէ մեկը կապված չէ սույն

Արծանագրությամբ, Արծանագրության Կողմերը մնում են նրանով կապված իրենց փոխադարձ հարաբերություններում: Նրանք, բացի այդ, սույն Արծանագրությամբ կապված կլինեն ընդհարման կողմ որևէ պետության հետ հարաբերություններում, եթե վերջինս ընդունում է Արծանագրության դրույթները և այնքան ժամանակ, որքան նա կիրառում է դրանք:

#### Հ ո դ վ ա ծ 4

##### Արծանագրության 3 գլխի առնչությունը Կոնվենցիայի և սույն Արծանագրության դրույթների հետ

Սույն Արծանագրության 3 գլխի դրույթների կիրառումը չի ազդում.

- Կոնվենցիայի 1 գլխի և սույն Արծանագրության 2 գլխի դրույթների կիրառման վրա,
- Կոնվենցիայի 2 գլխի դրույթների կիրառման վրա՝ ինչպես սույն Արծանագրության Կողմերի միջև, այնպես էլ Արծանագրության Կողմի և մի պետության միջև, որն ընդունում է Արծանագրության դրույթները Արծանագրության 3 հոդվածի 2-րդ կետին համապատասխան, նկատի ունենալով, որ եթե մշակութային արժեքը միաժամանակ գտնվում է թե՛ հատուկ պաշտպանության, թե՛ ուժեղացված պաշտպանության ներքո, ապա կիրառվում են միայն ուժեղացված պաշտպանության վերաբերյալ դրույթները:

#### Գ լ ու խ 2. Պաշտպանության առնչվող հիմնական դրույթները

#### Հ ո դ վ ա ծ 5

##### Մշակութային արժեքների պահպանությունը

Զիմված ընդհարման հնարավոր ազիցություններից մշակութային արժեքի պահպանության համար Կոնվենցիայի 3 հոդվածի համաձայն խաղաղ ժամանակ ծեռնարկվող միջոցառումներն ընդգրկում են, անհրաժեշտության դեպքում, գույքագրումը, հրեհի կամ շինությունների փլուզման վտանգի դեպքում պաշտպանությունն ապահովող արտակարգ միջոցառումների ծրագրումը, շարժական մշակութային արժեքի տեղափոխման նախապատրաստումը կամ, ըստ իրադրության *in situ* մշակութային արժեքների համարժեք պաշտպանության մախսապարասումը, և մշակութային արժեքի պահպանության համար պատասխանատու իրավասու նարմինների նշանակումը:

#### Հ ո դ վ ա ծ 6

##### Նախագգունական միջոցներ հարձակման ընթացքում

Կոնվենցիայի 4 հոդվածին համապատասխան մշակութային արժեքի նկատմամբ հարգանքը երաշխավորելու նպատակով.

- Կոնվենցիայի 4 հոդվածի 2-րդ կետի իմաստով հրամայական ռազմական անհրաժեշտության հիմնավորմանը թշնամական գործողություն կարող է ուղղվել ընդէմ մշակութային արժեքի երբ, կամ այնքան ժամանակ, որքան
- i. մշակութային արժեքը, իր գործառություվ, վերածվել է ռազմական օբյեկտի, և
- ii. գոյություն չունի գործնականում հնարավոր որևէ այլ լուծում, որը կիամգեցնի համարժեք ռազմական առավելության, քան այդ օբյեկտի դեմ ուղղակի հարձակում գործելը,
- b. Կոնվենցիայի 4 հոդվածի 2-րդ կետի իմաստով հրամայական ռազմական անհրաժեշտության հիմնավորմանը մշակութային արժեքները կարող են օգտագործվել այնպիսի նպատակների համար, որոնց հետևանքով դրանք կարող են ավերվել կամ վնասվել, եթե և այնքան ժամանակ, որքան մշակութային արժեքը նման ձևով օգտագործելուց բացի ուրիշ այլընտրանքային միջոց չկա համարժեք ռազմական առավելություն ստանալու համար,
- c. հրամայական ռազմական անհրաժեշտության հիմնավորմանը որոշումը պետք է կայացվի զիմված ուժերի գումարտակին հավասար կամ ավելի բարձր միավորի հրամանատարի մակարդակով, կամ ավելի փոքր ռազմական միավորի մակարդակով, եթե հանգամանքները թույլ չեն տալիս վարվել այլ կերպ,
- d. (a) Ենթակետին համապատասխան որոշման հիման վրա հարձակման դեպքում, կատարվում է արդյունավետ նախագգունական միջոցների համարժեքը այդ թույլ են տալիս:

#### Հ ո դ վ ա ծ 7

##### Նախագգունական միջոցներ հարձակման ընթացքում

Չաղդելով հանդերձ միջազգային մարդասիրական իրավունքով

նախատեսված բոլոր նախագուշական միջոցների վրա, ռազմական գործողություններ իրականացնելիս, ընդհարնան յուրաքանչյուր Կողմ պարտավոր է:

- a. անել այն, ինչ գործնականում հնարավոր է համոզվելու համար, որ հարձակման ներական օբյեկտները կոնվենցիայի 4 հոդվածի ներքո պաշտպանվող մշակութային արժեքներ չեն,
- b. ձեռնարկել գործնականում հնարավոր բոլոր նախագուշական միջոցները հարձակման եղանակների և միջոցների ընտրության առումով, խուսափելու, կամ գոնե առավելագույն նվազեցնելու համար այն վճարը, որը կարող է պատահականորեն հասցվել կոնվենցիայի 4 հոդվածի պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքներին,
- c. ձեռնապահ մնալ այնպիսի հարձակում իրականացնելուց, որի հետևանքով կարող է այնպիսի պատահական վճար հասցվել կոնվենցիայի 4 հոդվածի ներքո պաշտպանվող մշակութային արժեքին, ինչը չափազանցված է սպասվող կոնկրետ և ուղղակի ռազմական առավելություն ստանալու տեսանկյունից,
- d. դադարեցնել կամ ընդհատել հարձակումը, եթե ակնհայտ է դառնում, որ
  - i. օբյեկտը կոնվենցիայի 4 հոդվածի ներքո պաշտպանվող մշակութային արժեք է,
  - ii. հարձակումը կարող է պատահականորեն վճար պատճառը կոնվենցիայի 4 հոդվածի ներքո պաշտպանվող մշակութային արժեքին, ինչը չափազանցված է սպասվող կոնկրետ և ուղղակի ռազմական առավելություն ստանալու տեսանկյունից:

#### Հոդված 8

Նախագուշական միջոցառումներ հարձակումների հետևանքների դեմ

Ընդհարնան կողմերը պարտավոր են, գործնականում հնարավոր չափով.

- a. հեռացնել շարժական մշակութային արժեքները ռազմական օբյեկտների շրջակայթից կամ ապահովել նրանց in situ համարժեք պաշտպանությունը,

- b. խուսափել մշակութային արժեքների մոտակայքում ռազմական օբյեկտներ տեղադրելուց:

#### Հոդված 9

Մշակութային արժեքների պաշտպանությունը գրավյալ տարածքներում

1. Զարգելով հանդերձ կոնվենցիայի 4 և 5 հոդվածների դրույթների վրա, յուրաքանչյուր կողմ, մեկ այլ կողմի տարածքը ամբողջապես կամ մասնակիորեն գրավելու դեպքում, պետք է գրավյալ տարածքներուն արգելի կամ խոչընդոտի:

- a. մշակութային արժեքի անօրինական արտահանումը, տեղափոխումը կամ պատկանելության փոփոխությունը,
- b. որևէ հնագիտական պեղում, բացառությամբ, եթե այն բացարձակապես անհրաժեշտ է մշակութային արժեքները պահպանելու, գրանցելու կամ կոնսերվացնելու համար,
- c. մշակութային արժեքի որևէ ձևափոխություն կամ օգտագործման փոփոխություն, ինչը կարող է ոչնչացնել այն կամ կերպարանափոխել նրա մշակութային, պատմական և գիտական պատկանելության ապացույցները:

2. Գրավյալ տարածքներում մշակութային արժեքների ցանկացած հնագիտական պեղում, վերափոխություն կամ օգտագործման փոփոխություն պետք է իրականացվի գրավյալ տարածքների ազգային իրավասու մարմինների հետ սերտ համագործակցությամբ, բացառությամբ, եթե հանգամանքները այդ թույլ չեն տալիս:

#### Գլուխ 3. Ուժեղացված պաշտպանություն

#### Հոդված 10

Ուժեղացված պաշտպանություն

Մշակութային արժեքը կարող է դրվել ուժեղացված պաշտպանության ներքո, եթե այն բավարարում է հետևյալ երեք պայմանները.

- a. այն մարդկության համար մեծագույն կարևորություն ունեցող մշակութային ժառանգություն է,

- b. այն պաշտպանվում է ներպետական համարժեք իրավական և վարչական միջոցներով, որոնցով ճանաչվում է մշակութային արժեքի բացարկի մշակութային և պատմական նշանակությունը և երաշխավորվում է վերջինիս պաշտպանվածության ամենաբարձր մակարդակը,
- c. այն չի օգտագործվում ռազմական նպատակներով կամ ռազմական օբյեկտները քողարկելու համար և այն կողմը, որը վերահսկողություն ունի տվյալ արժեքի նկատմամբ, հանդես է եկել սույն հուշարձանը երեկոյ ռազմական նպատակներով չօգտագործելու հայտարարությամբ:

### Հ ո դ վ ա ծ 11

#### Ուժեղացված պաշտպանության տրամադրումը

1. Յուրաքանչյուր կողմ պետք է Կոմիտեին ներկայացնի այն մշակութային արժեքների ցուցակը, որոնց նկատմամբ նա մտադիր է խնդրել ուժեղացված պաշտպանության տրամադրում:

2. Կողմը, որը իրավագործություն և վերահսկողություն ունի տվյալ մշակութային արժեքի նկատմամբ կարող է խնդրել այն ընդգրկել Ցուցակի մեջ, որը հաստատվելու է համարձայն 27 հոդվածի 1-ին կետի (b) ենթակետի: Այդ խնդրանքը պետք է տեղեկություններ պարունակի 10 հոդվածում նշված բոլոր չափանիշների վերաբերյալ: Կոմիտեն կարող է հրավիրել որևէ կողմի, որպեսզի վերջինս այդ մշակութային արժեքը Ցուցակի մեջ ընդգրկելու խնդրանք ներկայացնի:

3. Մյուս կողմերը, կապույտ վահանի միջազգային կոմիտեն և այլ ոչ կառավարական կազմակերպությունները, համապատասխան փորձաքննության հիմնա վրա, կարող են առաջարկել Կոմիտեին հատուկ մշակութային արժեքներ: Այդպիսի դեալերում Կոմիտեն կարող է Կողմին առաջարկել տվյալ մշակութային արժեքը Ցուցակում գրանցելու խնդրանք ներկայացնել:

4. Որևէ մշակութային արժեքի, որի գտնվելու տարածքը նկատմամբ ինքնիշխանությունը և իրավագործությունը վիճարկվում է մեկից ավելի պետությունների կողմից, ընդգրկման խնդրանքը և ոչ էլ նրա ընդգրկումը ոչ մի կերպ չեն ազդում կողմերի վիճարկման իրավունքի վրա:

5. Ցուցակի մեջ գրանցելու լու խնդրանքը ստուանալուն պես, Կոմիտեն պետք է այդ մասին տեղեկացնի բոլոր կողմերին: Կողմերը վարսում օրվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում են իրենց կարծիքները տվյալ խնդրանքի վերաբերյալ: Այդ կարծիքները հիմնվում են միայն 10 հոդվածում նշված չափանիշների վրա: Դրանք պետք է լինեն հատկանշական և հիմնվեն փաստերի վրա: Կոմիտեն քննարկում է ներկայացված կարծիքները մինչև որոշում կայացնելը խնդրանք

ներկայացրած կողմին պատասխանի հնարավորություն տալով: Եթե այդպիսի կարծիքները ներկայացված են Կոմիտեին, ապա Ցուցակի մեջ գրանցելու վերաբերյալ որոշումը, չնայած 26 հոդվածի, ընդունվում է Կոմիտեի ներկա և քվեարկող ամրամների 4/5-ի մեծամասնությամբ:

6. Խնդրանքը քննարկելիս, Կոմիտեն պետք է խնդրի կառավարական և կառավարական, ինչպես նաև անհատ փորձագետների կարծիքը:

7. Ուժեղացված պաշտպանություն տրամադրելը կամ մերժելը կարող է հիմնվել միայն 10 հոդվածում նշված չափանիշների վրա:

8. Քացարիկ դեպքերում, եթե Կոմիտեն եզրակացնում է, որ մշակութային արժեքի Ցուցակում գրանցելու մասին խնդրանք ներկայացրած կողմը ի վիճակի չէ բավարարել 10 հոդվածի (b) ենթակետի չափանիշը, Կոմիտեն կարող է տրամադրել ուժեղացված պաշտպանություն, միաժամանակ առաջարկելով կողմին միջազգային աջակցության խնդրանք ներկայացնել՝ համարձայն 32 հոդվածի:

9. Ուազնական գործողությունների սկզբուն պես, ընդհարման կողմը կարող է խնդրել, արտակարգ իրադրության հիմնավորմանը, իր իրավագործության կամ վերահսկողության ներք գտնվող մշակութային արժեքին տրամադրել ուժեղացված պաշտպանություն: Կոմիտեն պետք է անմիջապես այդ խնդրանքի մասին հաղորդի ընդհարման բոլոր կողմերին: Այդ դեպքերում Կոմիտեն քննարկում է տվյալ կողմերի ներկայացրած կարծիքներն անհապաղ: Ժամանակավոր կարգավիճակով ուժեղացված պաշտպանություն տրամադրելը որոշումը պետք է կայացվի հնարավորին չափ արագ և, չնայած 26 հոդվածին, Կոմիտեի ներկա և քվեարկող անդամների 4/5-ի մեծամասնությամբ: Կոմիտեն կարող է ժամանակավոր ուժեղացված պաշտպանություն տրամադրել, առկախելով ուժեղացված պաշտպանություն տրամադրելու սովորական ընթացակարգի ելքը, պայմանով որ 10 հոդվածի (a) և (c) ենթակետներում նշված չափանիշները բավարարված ինեն:

10. Մշակութային արժեքին Կոմիտեի կողմից ուժեղացված պաշտպանություն է տրամադրվում Ցուցակի մեջ գրանցելու պահից:

11. Գլխավոր տնօրենը պետք է անհապաղ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և բոլոր կողմերին ծանուցի մշակութային արժեքը Ցուցակի մեջ գրանցելու վերաբերյալ կոմիտեի որոշման մասին:

### Հ ո դ վ ա ծ 12

#### Ուժեղացված պաշտպանության ներք գտնվող մշակութային արժեքի անձեռնմխելությունը

Ընդհարման կողմերը պետք է ապահովեն ուժեղացված պաշտպանության ներք գտնվող մշակութային արժեքի անձեռնմխելությունը, ծեռնպակ մնալով այն հարձակման թիրախ դարձնելուց կամ այն և նրա մերժավոր շրջակարգը ուազնական գործողություններին օժանդակելու նպատակով օգտագործելուց:

### Հոդված 13

#### Ուժեղացված պաշտպանության կորուստը

1. Ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքը կորցնում է այդ պաշտպանությունը միայն հետևյալ դեպքում:

- Եթե այդահիմ պաշտպանությունը կասեցված է կամ վերացված 14 հոդվածին համապատասխան, կամ
  - Եթե, և այնքան ժամանակ, որքան, մշակութային արժեքը, իր օգտագործմամբ, վերածվել է ռազմական օբյեկտի:
2. Կետ 1 (b) ենթակետում նշված հանգամանքների դեպքում նման արժեքը կարող է դառնալ հարձակման թիրախ, եթե-
- հարձակումը միակ հնարավոր միջոցն է դադարեցնել դրա օգտագործումը 1-ին կետի (b) ենթակետի նպատակով,
  - հարձակման եղանակի և ձևերի ընտրության առումով՝ ձեռնարկվել են բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները, որպեսզի վերջ դրվի տվյալ մշակութային արժեքի որպես ռազմական օբյեկտի օգտագործմանը, խուսափելով, կամ ծայրահետ դեպքում նվազագույնի հասցնելով վերջինիս պատճառած վնասը,
  - Եթե հանգամանքները չեն թույլատրում, անհապաղ ինքնապաշտպանության անհրաժեշտությունից ելնելով.
    - հարձակման հրամանը տրվել է հրամանատարական բարձագույն մակարդակով,
    - հակառակորդի ուժերին արդյունավետ միջոցներով նախազգուշացվել է տվյալ արժեքը 1-ին կետի (b) ենթակետի նպատակով օգտագործումից հրաժարվելու մասին,
    - հակառակորդին տրվել է բավարար ժամանակ իրադրությունը շտկելու համար:

### Հոդված 14

#### Ուժեղացված պաշտպանության կասեցումը կամ դադարեցումը

1. Եթե մշակութային արժեքը դադարում է համապատասխանել սույն Արձանագրության 10 հոդվածում նշված չափանիշներին, Կոմիտեն կարող է կասեցնել կամ վերացնել տվյալ արժեքի ուժեղացված պաշտպանության կարգավիճակը այն համելով Ցուցակից:

2. Հոդված 12-ի լուրջ խախտման դեպքում ռազմական գործողություններին օժանդակելու նպատակով ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքն օգտագործելու համար, Կոմիտեն կարող է կասեցնել այդ արժեքի ուժեղացված պաշտպանության կարգավիճակը: Եթե այդ խախտումները դառնում են շարունակական, Կոմիտեն կարող է բացառության կարգով դադարեցնել ուժեղացված պաշտպանության կարգավիճակը՝ տվյալ մշակութային արժեքը Ցուցակից հանելով:

3. Գլխավոր մեծորեն պետք է անհապաղ տեղեկացնի ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և սույն Արձանագրության բոլոր Կոմիտեին մշակութային արժեքի ուժեղացված պաշտպանությունը կասեցնելու կամ վերացնելու Կոմիտեի որոշման մասին:

4. Սինչ որոշում ընդունելու Կոմիտեն պետք է հնարավորություն տա Կոմիտեին արտահայտելու իրենց տեսակետները:

### Գլուխ 4. Քրեական պատասխանատվություն և իրավագորություն

#### Հոդված 15

##### Սույն Արձանագրության լուրջ խախտումներ

1. Սույն Արձանագրության բովանդակության իմաստով հանցանք է համարվում այն արարքը, եթե որևէ անձ, միտումնավոր և խախտելով Կոնվենցիան կամ սույն Արձանագրությունը, իրականացնում է հետևյալ գործողություններից որևէ մեկը.

- ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող որևէ մշակութային արժեքը հարձակման օբյեկտ դարձնելը,
- ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքը կամ նրա անմիջական շրջակայքը ռազմական գործողություններին օժանդակելու նպատակով օգտագործելը,
- Կոնվենցիայով և սույն Արձանագրությամբ պաշտպանվող մշակութային արժեքին հսկայական վնաս պատճառելը կամ յուրացնելը,
- Կոնվենցիայով և սույն Արձանագրությամբ պաշտպանվող մշակութային արժեքը հարձակման օբյեկտ դարձնելը,

e. Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքի գործությունը, բայլանը կամ ապօրինի յուրացումը կամ դրա հանդեպ բարբարոսական գործողությունները:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է այնպիսի միջոցներ ընդունի, որոնք անհրաժեշտ են իր ներպետական իրավունքում սույն հոդվածում նշված հանցանքները որպես հանցագործություն անրագրելու և դրանց համար համապատասխան պատժամիջոցներ սահմանելու նպատակով։ Կողմերն, այդ անելիս, պետք է գործն իրավունքի և միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին, նաև ապահովագիր այն կանոններին համապատասխան, համաձայն որոնց քրեական անհատական պատասխանատվությունը տարածվում է ոչ միայն հանցանքը ուղղակիորեն կատարած անձանց վրա։

### Հոդված 16 Իրավագորություն

1. Չափելով հանդերձ 2-րդ կետի դրույթների վրա, յուրաքանչյուր Կողմ ծեռնարկում է օրենսդրական միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են 15 հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավագորությունը հաստատելու համար, ստորև նշված դեպքերում։

- Եթե նման հանցագործությունը կատարվել է այդ պետության տարածքում,
- Եթե ենթադրյալ հանցագործ տվյալ պետության քաղաքացին է,
- 15 հոդվածի (a) – (c) ենթակետերում նշված հանցանքների դեպքում, եթե ենթադրյալ հանցագործը գտնվում է տվյալ պետության տարածքում։

2. Իրավագորության իրականացման կապակցությամբ և չափելով Կոնվենցիայի 28 հոդվածի վրա.

- Սույն Արձանագրությունը չի կանխորոշում ոչ անհատական քրեական պատասխանատվության պարտավորությունը, ոչ կիրառելի ներպետական և միջազգային իրավունքի համաձայն իրավագորության իրականացումը, և չի ազդում միջազգային սովորությային իրավունքի համաձայն իրավագորության իրականացման վրա,
- բացառությամբ այն դեպքի, եթե պետությունը, Արձանագրության Կողմ չլինելով, սույն Արձանագրության 3 հոդվածի 2-րդ կետի համաձայն ընդունում է և կիրառում է նրա դրույթները,

Արձանագրության Կողմ չի հանդիսացող պետության գիրված ուժերի անդամները և քաղաքացիները, բացի այն քաղաքացիներից, որոնք ծառայում են Արձանագրության Կողմ հանդիսացող պետության գիրված ուժերում, չեն կարող աճնական քրեական պատասխանատվության ենթարկվել ըստ սույն Արձանագրության, ոչ էլ սույն Արձանագրությունը կարող է պարտադրվել այդ անձանց նկատմամբ իրավագորություն հաստատելու կամ նրանց հանձնելու համար։

### Հոդված 17

#### Նետապնդում

1.Կողմը, որի տարածքում հայտնաբերվել է 15 հոդվածի (a) – (c) ենթակետերում նշված հանցագործություն կատարած ենթադրյալ հանցագործը, եթե չի հանձնում նրան, պետք է, առանց որևէ բացառության և առանց անհիմն ուշացման, ներկայացնի գործը համապատասխան ազգային իրավասու մարմիններին՝ հետապնդում հարուցելու նպատակով, իր ներքին դատավարական իրավունքին համապատասխան, կամ անհրաժեշտության դեպքում, միջազգային իրավունքի համապատասխան կանոնների հիման վրա։

2. Չափելով հանդերձ, կիրառման դեպքում, միջազգային իրավունքի համապատասխան կանոնների վրա, յուրաքանչյուր անձ, որի նկատմամբ ըննություն է իրականացվում՝ ելնելով Կոնվենցիայից կամ սույն Արձանագրությունից, օգտվում է արդարացի վերաբերմունքի և քննության երաշխիքից՝ ներպետական և միջազգային իրավունքին համապատասխան, և ոչ մի դեպքում չի օգտվում առավել նվազ երաշխիքներից, քան ընդունված է միջազգային իրավունքով։

### Հոդված 18

#### Հանձնում

1. Հոդված 15-ի (a) – (c) ենթակետերով նախատեսված հանցանքները համարվում են հանձնում առաջացնող հանցագործություններ մինչև սույն Արձանագրության ուժի մեջ մտնելը Կողմերի միջև կնքված հանձնման մասին յուրաքանչյուր պայմանագրի համաձայն։ Կողմերը պարտավորվում են հետագայում միջանց միջև հանձնման մասին կնքվող պայմանագրերում ընդգրկել այդ հանցագործությունները։

2. Եթե Կողմը, որը հանձնումը պայմանավորվում է պայմանագրի առկայությամբ, մեկ այլ Կողմից ստանում է հանձնման մասին պահանջ, որի հետ հանձնման մասին պայմանագրի չունի, ապա նա կարող է, իր հայեցողությամբ, սույն Արձանագրությունը համարել որպես հանձնման

համար պետության ինքնիշխանության կամ կառավարության պատասխանատվության վիճ բոլոր օրինական միջոցներով պահպանելու պաշտպանության վիճ բոլոր օրինական միջոցներով պահպանելու կամ կամ վերահստատելու հասարակական կարգը պետությունում, կամ վերահստատելու համար պետության ազգային միասնությունը և տարածքային ամբողջականությունը:

4. Սույն Արձանագրության ոչ մի դրույթ չի ազդում այն պետության իրավագործության առաջնայնության վրա, որի տարածքում ընթանում է ոչ միջազգային բնույթի ընդհարում 15 հոդվածում նշված խախտումների կապակցությամբ:

5. Սույն Արձանագրության ոչ մի դրույթ չի կարող կիրառվել որպես արդարացում որևէ պատճառաբանությամբ, ուղղակիրեն կամ անուղղակիրեն միջամտելու համար գինված ընդհարմանը կամ այն Կողմի ներքին կամ արտաքին գործերին, որի տարածքում ընդհարումն ընթանում է:

6. Սույն Արձանագրության կիրառումն 1-ին կետում նշված իրավության պարագայում չպետք է ազդի ընդհարման կողմերի իրավական կարգավիճակի վրա:

7. ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարող է առաջարկել իր ծառայություններն ընդհարման կողմերին:

## Գ Լ ՈՒ Խ 6. Ինստիտուցիոնալ խնդիրներ

### Հ ո դ Վ ա ծ 23

#### Կողմերի Համաժողովը

1. Կողմերի Համաժողովը գումարվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր խորհրդաժողովի հետ միաժամանակ և Բարձր պայմանավորվող կողմերի հրավիրվել է Գլխավոր տնօրենի կողմից:

2. Կողմերի Համաժողովը ընդունում է իր կանոնակարգը:
3. Կողմերի Համաժողովը ունի հետևյալ լիազորությունները.
  - a. ընտրել Կոմիտեի անդամներին՝ 24 հոդվածի 1-ին կետին համապատասխան,
  - b. հաստատել Կոմիտեի կողմից՝ 27 հոդվածի 1-ին կետի (a) ենթակետին համապատասխան մշակված Ռեկավար ցուցումները,
  - c. տրամադրել ցուցումներ Կոմիտեի կողմից Հիմնադրամի օգտագործման վերաբերյալ և իրականացնել դրա նկատմամբ վերահստատություն,
  - d. քննարկել Կոմիտեի կողմից 27 հոդվածի 1-ին կետի (d) ենթակետին համապատասխան ներկայացված գեկույցը,

e. քննարկել սույն Արձանագրության կիրառման հետ առնչվող ցանկացած խնդիր և, անհրաժեշտության դեպքում, կատարել առաջարկություններ:

4. Գլխավոր տնօրենը հրավիրում է Կողմերի արտահերթ Համաժողով, եթե դա պահանջում է Կողմերի առնվազն 1/5:

### Հ ո դ Վ ա ծ 24

#### Զինված ընդհարման դեպքում մշակությաին արժեքների պաշտպանության կոմիտե

1. Սույնով հիմնադրվում է Զինված ընդհարման դեպքում մշակությաին արժեքների պաշտպանության կոմիտե: Այն կազմված է տասներկու Կողմերից, որոնք ընտրվում են Կողմերի Համաժողովի կողմից:

2. Կոմիտեն հավաքվում է տարին մեկ անգամ հերթական նստաշրջանի և ամեն անգամ, եթե անհրաժեշտ գտնի՝ արտահերթ նստաշրջանի:

3. Կոմիտեի կազմը որոշելիս Կողմերը պետք է ձգտեն ապահովել աշխարհի տարբեր տարածաշրջանների և մշակույթների արդարացի ներկայացուցությունը:

4. Կոմիտեի անդամ Կողմերը պետք է որպես իրենց ներկայացուցիչներ ընտրեն անձանց, որոնք որպակավորված են մշակությաին ժառանգության, պաշտպանության կամ միջազգային հրավունքի բնագավառներում, և նրանք պետք է ծգուն, մեկը նյութի հետ խորհրդակցությունների միջոցով, ապահովել, որ Կոմիտեն ամբողջովին ներկայացված լինի բոլոր այս պահանջելի առաջարկերը տարածաշրջաններում կատարվուի անձանցով:

### Հ ո դ Վ ա ծ 25

#### Լիազորույթունների ժամկետը

1. Կոմիտեի կազմում Կողմն ընտրվում է չորս տարի ժամկետով և կարող է անընթեց վերանորուվել միայն մեկ անգամ:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին, առաջին ընտրության ժամկետը լրանում է իրենց ընտրված անդամների կեսի անդամության ժամկետը լրանում է իրենց ընտրությանը հաջորդած Կողմերի առաջին հերթական Համաժողովի վերջում: Այդ անդամներն ընտրվում են վիճակահանությամբ՝ առաջին ընտրությունից հետո, այդ Համաժողովի նախագահի կողմից:

### Հ ո դ Վ ա ծ 26

#### Կանոնակարգ

1. Կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:
2. Կողմերի մեծամասնությունը կազմում է քվորում: Կոմիտեի

որոշումները պետք է ընդունվեն իր քվեարկող անդամների երկու երրորդի մեծամասնությամբ:

3.Կոմիտերը չպետք է մասնակցեն այն մշակութային արժեքների հետ կապված որոշման վերաբերյալ քվեարկությամբ, որոնք ազդեցություն են կրել գինված ընդհարման արդյունքում, որի կողմ են իրենք հանդիսանում:

### Հ ո դ կ ա ծ 27

#### Լիազորությունները

1. Կոմիտեն ունի հետևյալ լիազորությունները.
  - a. սույն Արձանագրության կիրառման համար մշակել Ղեկավար ցուցումներ,
  - b. տրամադրել, կասեցնել կամ վերացնել մշակութային արժեքի համար ուժեղացված պաշտպանությունը և հաստատել, պահպանել ու ապահովել ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների Ցուցակի տարածումը,
  - c. դիտարկել և վերահսկել սույն Արձանագրության կիրառումը և նպաստել ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքների ճանաչման գործին,
  - d. քննության առնել Կոմիտեի գեկույցները և դիտողություններ ներկայացնել դրանց վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ստանալ պարզաբանումներ և Կոմիտեի համաժողովի համար նախապատրաստել իր իսկ գեկույցը սույն Արձանագրության կիրառման վերաբերյալ,
  - e. 32 հոդվածի համաձայն ստանալ և քննարկել միջազգային օգնության վերաբերյալ դիմումները,
  - f. որոշել Հիմնադրամի օգտագործումը,
  - g. կատարել ցանկացած այլ պարտականություններ, որոնք կարող են իրեն հանձնարարվել Կոմիտեի Համաժողովի կողմից:

2. Կոմիտեի գործառույթներն իրականացվում են Գլխավոր տնօրենի հետ համագործակցության միջոցով:

3. Կոմիտեն համագործակցում է միջազգային և ազգային կառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ, որոնց նպատակները համընկնում են Կոմիտեի համաձայն 23 հոդվածի 3-րդ կետի (c) ենթակետում սահմանված ցուցումների: Կոմիտեն կարող է ընդունել մուծումներ, որոնց օգտագործումը կատարվում է միայն որոշակի ծրագրի կամ նախագծի համար, եթե այդ ծրագրի կամ նախագծի կատարման որոշումն ընդունված է Կոմիտեի կողմից :

կարող է իր նիստերին խորհրդատվական կազմակիցակով հրավիրել այնպիսի հայտնի մասնագիտացված կազմակերպություններ, որոնք ունեն պաշտոնական հարաբերություններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ, ներառյալ Կապույտ վահանի միջազգային կազմակերպությունը (ԿՎՍԿ) և նրա ստորաբաժանումները: Մշակութային արժեքների պահպանության ու վերականգնման ուսումնաժիրման միջազգային կենտրոնի (Քոմիտեի կենտրոն) (ԱՄՊԿՈՒՍԿ) և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՍԿ) ներկայացնեցիները նույնական կարող են հրավիրվել մասնակցելու խորհրդատվական կազմակիցակով:

### Հ ո դ կ ա ծ 28

#### Քարտուղարություն

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քարտուղարությունն աջակցում է Կոմիտեին: Նախապատրաստում է Կոմիտեի փաստաթղթերը և նիստերի օրակարգը և պատասխանառու է նրա որոշումների կատարման համար:

### Հ ո դ կ ա ծ 29

#### Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության հիմնադրամը

1. Սույնով ստեղծվում է Հիմնադրամ՝ հետևյալ նպատակներով.
  - a. տրամադրել ֆինանսական կամ այլ աջակցություն խաղաղ ժամանակ նախապատրաստական կամ այլ միջոցներ ծեռնարկելու համար՝ inter alia 5 հոդվածին, 10 հոդվածի (b) ենթակետին և 30 հոդվածին համապատասխան, և
  - b. տրամադրել ֆինանսական կամ այլ աջակցություն գինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության համար արտակարգ միջոցառումներ, ժամանակավոր կամ այլ միջոցառումներ ծեռնարկելու համար, կամ գինված գործողությունների ավարտից հետո անմիջապես վերականգնման համար, inter alia 8 հոդվածի (a) ենթակետին համապատասխան:
2. Հիմնադրամը կազմված է ավանդի միջոցներից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆինանսական կանոնակարգի դրույթներին համապատասխան:
3. Հիմնադրամից հատկացները պետք է օգտագործվեն միայն այնպիսի նպատակով, ինչպիսին կորոշի Կոմիտեն, համաձայն 23 հոդվածի 3-րդ կետի (c) ենթակետում սահմանված ցուցումների: Կոմիտեն կարող է ընդունել մուծումներ, որոնց օգտագործումը կատարվում է միայն որոշակի ծրագրի կամ նախագծի համար, եթե այդ ծրագրի կամ նախագծի կատարման որոշումն ընդունված է Կոմիտեի կողմից :

4. Հիմնադրամի միջոցները գոյանում են.

- a. Կողմերի կամավոր մուծումներից,
- b. մուծումներից, դրամաշնորհներից կամ կտակներից, որոնք կատարվել են:
  - i. այլ պետությունների կողմից,
  - ii. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամ Միավորված ազգերի կազմակերպության համակարգի այլ կազմակերպությունների կողմից,
  - iii. այլ միջկառավարական կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից, և
  - iv. հանրային կամ մասնավոր մարմինների կամ անհատների կողմից,
- c. Դիմադրամի միջոցների վրա հաշվարկված տոկոսներից,
- d. այնպիսի հավաքներից և գումարներից, որոնք ստացվել են Դիմադրամի օգտին կազմակերպված միջոցառումներից, և
- e. ցանկացած այլ միջոցներից, որոնք թույլատրված են Դիմադրամի հանդեպ կիրառելի ցուցումներով:

**Գ լ ու խ 7. Տեղեկատվության տարածում և  
միջազգային օգնություն**

**Հ ո դ վ ա ծ 30**

**Տարածում**

1. Կողմերը կօգտեն ամրապնդել համապատասխան միջոցներով և մասնավորապես, կրթական ու տեղեկատվական ծրագրերի միջոցով, իրենց անբողջ բնակչության կողմից՝ նշակութային արժեքների լավագույն գնահատումը և հարցանքը:

2. Կողմերը պետք է հնարավորին չափ լայնորեն տարածեն սույն Արձանագրությունը, ինչպես խաղաղ, այնպես էլ գինված ընդհարման ժամանակ:

3. Զինվորական կամ քաղաքացիական իրավասու մարմինները, որոնք գինված ընդհարման ժամանակ ստանձնում են սույն Արձանագրության կիրառման առնչվող պարտականությունները, պետք է կատարելապես

իմանան Արձանագրության տեքստը: Այդ նպատակով Կողմերը պետք է, համապատասխանաբար:

- a. ընդգրկեն մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ ցուցումներն ու հրահանգներն իրենց Զինվորական կանոնակարգերում,
- b. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և համապատասխան կառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ մշակեն և իրագործեն խաղաղ ժամանակի համար վերապատրաստման ու կրթական ծրագրեր,
- c. Գլխավոր տնօրենի միջոցով միմյանց հաղորդեն տեղեկատվություն օրենքների, վարչական դրույթների և (a) և (b) ենթակետերի գործադրումն ապահովելու համար ծեռնարկված միջոցառումների մասին,
- d. Գլխավոր տնօրենի միջոցով, հնարավորին չափ շուտ, միմյանց հաղորդեն այն օրենքներն ու վարչական դրույթները, որոնք իրեն կարող են ընդունել սույն Արձանագրության կիրառումն ապահովելու համար:

**Հ ո դ վ ա ծ 31**

**Միջազգային համագործակցություն**

Սույն Արձանագրության լուրջ խախտումների դեպքերում, Կողմերը պարտավորվում են գործել համատեղ՝ Կոմիտեի միջոցով, կամ անհատապես, համագործակցելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Միավորված ազգերի կազմակերպության հետ՝ Միավորված ազգերի կազմակերպության առնելի կամաց համապատասխան:

**Հ ո դ վ ա ծ 32**

**Միջազգային աջակցություն**

1. Կողմը կարող է Կոմիտեից միջազգային աջակցություն խնդրել ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող մշակութային արժեքի համար, ինչպես նաև աջակցություն՝ 10 հոդվածում նշված օրենքների, վարչական դրույթների ու միջոցառումների մշակման, կենսագործման կամ կիրառման համար:

2. Ընդհարման կողմը, որը սույն Արձանագրությանը Կողմ չէ, սակայն ընդունում է ու կիրառում վերջինիս դրույթները՝ 3 հոդվածի 2-րդ կետի

համաձայն, կարող է Կոմիտեից խնդրել համապատասխան միջազգային աջակցություն:

3. Կոմիտեն ընդունում է կանոններ՝ միջազգային աջակցության վերաբերյալ խնդրանքների ներկայացման համար և սահմանում է այն ծները, որ կարող է ընդունել միջազգային աջակցությունը:

4. Կողմերը խրախուսվում են, Կոմիտեի միջոցով ամեն տեսակի տեխնիկական աջակցություն ցուցաբերել այն Կողմերին կամ ընդհարման կողմերին, որոնք դիմում են այդպիսի աջակցություն ստանալու համար:

#### Հոդված 33

##### ՅՈՒՆԵՍԿՕ-ի օժանդակությունը

1. Կողմը կարող է դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին տեխնիկական օժանդակություն ստանալու համար իր մշակութային արժեքի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով, մասնավորապես, մշակութային արժեքի պահպանությունը ապահովելու համար նախապատրաստական միջոցների, կանխարգելիչ ու կազմակերպչական միջոցառումների արտակարգ իրավիճակներում և մշակութային արժեքների ազգային ցուցակներ կազմելու վերաբերյալ, կամ սույն Արձանագրության կիրառմից բխող որևէ այլ խնդրի կապակցությամբ: ՅՈՒՆԵՍԿՕ-ն այդ օժանդակությունը տրամադրում է իր ծրագրի և իր հնարավորությունների սահմաններում:

2. Կողմերը խրախուսվում են տրամադրել տեխնիկական օժանդակություն ինչպես երկկողմ, այնպես էլ քազմակողմ մակարդակով:

3. ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրավասու է, իր սեփական նախաձեռնությամբ, առաջարկություններ կատարել Կողմերին այս հարցերի վերաբերյալ:

#### Գլուխ 8. Սույն Արձանագրության իրականացումը

##### Հոդված 34

##### Յովանավոր պետություններ

Սույն Արձանագրությունը կիրավում է ընդհարման կողմերի շահերը պաշտպանելու համար պատասխանատու Յովանավոր պետությունների աջակցությամբ:

##### Հոդված 35

##### Հաշտարար ընթացակարգ

1. Յովանավոր պետությունները տրամադրում են իրենց բարի ծառայությունները այն բոլոր դեպքերում, երբ նրանք դա օգտակար են 80

համարում մշակութային արժեքի շահերի համար, հատկապես, եթե հակամարտության կողմերի միջև անհամաձայնություն կա սույն Արձանագրության դրույթների կիրառման կամ մեկնարանման վերաբերյալ:

2. Այդ նպատակով՝ Յովանավոր պետություններից յուրաքանչյուրը, Կողմերից որևէ մեկի կամ Գլխավոր տնօրենի առաջարկությամբ, կամ իր իսկ նախաձեռնությամբ առաջարկում է ընդհարման կողմերին նրանց ներկայացուցիչների հանդիպում, մասնավորապես, մշակութային արժեքի պաշտպանության համար պատասխանատու իրավասու մարմինների մասնակցությամբ, նպատակահարմար համարելու դեպքում, ընդհարման կողմ շիանդիսացող պետության տարածքում: Ընդհարման կողմերը պատակավոր են ընթացք տալ հանդիպման ընթացքում իրենց տրված առաջարկություններին: Յովանավոր պետությունները ընդհարման կողմերի հաստատման են ներկայացմուն ընդհարման կողմ շիանդիսացող պետության կամ Գլխավոր տնօրենի կողմից ներկայացված անձին, որը իրավիրվելու է մասնակցելու հանդիպմանը որպես նախագահուղ:

##### Հոդված 36

##### Յաշտեցումը Յովանավոր պետությունների բացակայության դեպքում

1. Այնպիսի ընդհարման դեպքում, եթե Յովանավոր պետությունները նշանակված չեն, Գլխավոր տնօրենը կարող է տրամադրել իր բարի ծառայությունները կամ միջամտել հաշտեցման կամ միջնորդության որևէ այլ ձևով, նպատակ ունենալով կարգավորել անհամաձայնությունը:

2. Որևէ Կողմի կամ Գլխավոր տնօրենի իրավերով, Կոմիտեի նախագահը կարող է առաջարկել ընդհարման կողմերին՝ նրանց ներկայացուցիչների հանդիպում, և, մասնավորապես, մշակութային արժեքի պաշտպանության համար պատասխանատու իրավասու մարմինների մասնակցությամբ, նպատակահարմար համարելու դեպքում, ընդհարման կողմ շիանդիսացող պետության տարածքում:

##### Հոդված 37

##### Թարգմանություններ և գեկույցներ

1. Կողմերը պետք է թարգմանեն սույն Արձանագրությունն իրենց պաշտոնական լեզուներով և հանձնեն այդ պաշտոնական թարգմանությունները Գլխավոր տնօրենին:

2. Կողմերը յուրաքանչյուր չորս տարին մեկ սույն Արձանագրության իրագործման վերաբերյալ Կոմիտեին գեկույց են ներկայացնում:

### Հոդված 38

#### Պետության պատասխանատվությունը

Սույն Արձանագրության ոչ մի դրույք՝ կազմած ամհատական քրեական պատասխանատվության հետ չի ազդում միջազգային իրավունքի համաձայն պետությունների պատասխանատվության, ներառյալ ռեպարացիայի պարտավորության վրա:

### Գլուխ 9. Եզրափակիչ դրույթներ

#### Հոդված 39

##### Եեղուները

Սույն Արձանագրությունը կազմված է անգլերեն, արաբերեն, իսլամերեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով, բոլոր վեց տեքստերն էլ հավասարագոր են:

#### Հոդված 40

##### Ստորագրումը

Սույն Արձանագրությունը կազմված է 1999 թ. մարտի 26-ին: Այն բաց է ստորագրման համար բոլոր Բարձր պայմանավորվող կողմերի համար ՝ աճագայում 1999թ. մայիսի 17-ից մինչև 1999 թ. դեկտեմբերի 31-ը:

#### Հոդված 41

##### Վավերացում, ընդունում կամ հաստատում

1. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման Բարձր պայմանավորվող կողմերի կողմից, որոնք ստորագրել են սույն Արձանագրությունը, համաձայն իրենց համապատասխան սահմանադրական ընթացակարգերի:

2. Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը պետք է ի պահ տրվեն Գլխավոր տնօրենին:

#### Հոդված 42

##### Միացում

1. Սույն Արձանագրությունը բաց կլինի միացման համար այլ Բարձր պայմանավորվող կողմերի համար՝ 2000թ. հունվարի 1-ից սկսած:

2. Միացումը կատարվում է Գլխավոր տնօրենին միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ տալու միջոցով:

#### Հոդված 43

##### Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում քսաներորդ վավերագրի, ընդունման կամ հաստատման փաստաթղթի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ տրվելու օրվանից երեք ամիս անց:

2. Հետագայում, այն յուրաքանչյուր Կողմի համար ուժի մեջ է մտնում իր վավերագրի, ընդունման կամ հաստատման փաստաթղթի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ տրվելու օրվանից երեք ամիս անց:

#### Հոդված 44

##### Զինված ընդհարման իրավիժակներում ուժի մեջ մտնելը

Հոդված 18-ում և 19-ում ներկայացված իրավիժակներն անմիջապես ընթացք են տալիս սույն Արձանագրության վավերացումներին, ընդունումներին կամ հաստատումներին կամ միացումներին, որոնք ընդհարման կողմերն ի պահ են տվել ինչպես մինչև գինված գործողությունների սկիզբը կամ գրավումը, այնպես էլ դրանցից հետո: Այդ դեպքերում Գլխավոր տնօրենը ամենաարագ ուղղեներով կատարում է 46 հոդվածով նախատեսված հաղորդումները:

#### Հոդված 45

##### Չեղյալ հայտարարումը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը:

2. Չեղյալ հայտարարումը ծանուցվում է Գլխավոր տնօրենին ի պահ տրված գրավոր փաստաթղթի միջոցով:

3. Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման փաստաթղթի ստացումից մեկ տարի անց: Եթե, այնուամենայնիվ, այդ ժամկետի լրացնության ժամանակ, չեղյալ հայտարարող Կողմը ներգրավված է գինված ընդհարման մեջ՝ չեղյալ հայտարարումը կասեցվում է մինչև գինված գործողությունների վերջը և, ամեն դեպքում, այնքան ժամանակ, մինչև մշակութային արժեքների հայրենադարձման գործողությունների ավարտվեն:

#### Հոդված 46

##### Ծանուցումներ

Գլխավոր տնօրենը կտեղեկացնի բոլոր Բարձր պայմանավորվող կողմերին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությունը, համաձայն 42 և 43 հոդվածների՝ վավերագրերի, ընդունման, հաստատման

փաստաթղթերի կամ միացման հայտարարագրերի ի պահ տալու մասին,  
ինչպես նաև 45 հոդվածով չեղյալ հայտարարման մասին:

#### Հ Պ Դ Վ Ա Ծ 47

#### Գրանցումը Միավորված ազգերի կազմակերպությունում

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածի համապատասխան, սույն Արձանագրությունը Գլխավոր տնօրինի դիմումի հիման վրա գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում:

Ի հավաստումն վերօշարադրյալի պատշաճորեն լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Հասագայում 1999թ. մարտի 26-ին, մի բնօրինակով, որը կպահվի Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արխիվում և որի համապատասխան հավաստված պատճենները կիանձնվեն բոլոր Բարձր պայմանավորվող կողմերին:

ԿՈՆՎԵՆՑԻԱ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵԲՈՒՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ,  
ԱՐՏԱՐԱՍՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՑՑ ՆԿԱՏՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԿԱՆԽԵԼՈՒ  
ՄԻՋՈՑԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(1970 թ. նոյեմբերի 14)

Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսը՝ իրավիրված 1970թ. հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 14-ը Փարիզում, իր տասնվեցերորդ նստաշղուանում:

Ի հիշեցնելով Գլխավոր կոնֆերանսի կողմից իր տասնչորսերորդ նստաշղուանում ընդունված Միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների հոչակագործ դրույթների կարևորության մասին,

Ի համարելով, որ կրթության, գիտության և մշակույթի նպատակների համար ազգերի միջև մշակութային արժեքների փոխանակումը ընդլայնում է մարդկային քաղաքակրթության մասին գիտելիքները, հարստացնում է բոլոր ժողովուրդների մշակութային կյանքը և ազգերի միջև հիմք դնում փոխադարձ հարգանքի և ընբօնման,

Ի համարելով, որ մշակութային արժեքները քաղաքակրթության ու ազգային մշակույթի հիմնական տարրերից են և որ դրանց իրական արժեքը կարող է գնահատվել միայն այն դեպքում, եթե ստույգ հայտնի են դրանց ծագումը, պատմությունը և ավանդական միջավայրը,

Ի համարելով, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է իր տարածքում գտնվող մշակութային արժեքները պաշտպանել գողության, գաղտնի պեղունների և ապօրինի արտահաննան վտանգներից,

Ի համարելով, որ այդ վտանգների կանխարգելման համար անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր պետություն էլ ավելի գիտակցի ինչպես իր, այնպես էլ բոլոր ժողովուրդների մշակութային ժառանգության նկատմամբ բարոյական պարտավորությունները,

Ի համարելով, որ մշակութային հաստատությունները թանգարանները, գրադարաններն ու արխիվները պետք է երաշխավորեն, որ իրենց հավաքածուները ստեղծվեն համընդհանուր ճանաչում գտած բարոյական սկզբունքների հիման վրա,

Ի համարելով, որ մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը խոչընդոտում է ազգերի միջև փոխըմբռնմանը, ինչին Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը պարտավոր է նպաստել մասնավորապես,

շահագրգիռ պետություններին ներկայացնելով համապատասխան միջազգային կոնվենցիաների միանալու առաջարկություններ,

**համարելով**, որ մշակութային ժառանգության պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել, եթե այն կազմակերպվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մասշտաբով, ինչը պահանջում է պետությունների միջև սերտ համագործակցություն,

**հաշվի առնելով**, որ Միավորված ազգերի կորության, գիտության և մշակությի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսը 1964 թ. ընդունել է այդ հարցի վերաբերյալ հանձնարարական,

**ստանալով** մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելող ու կանխարգելող միջոցառումների վերաբերյալ նոր առաջարկներ (նստաշրջանի օրակարգի 19 կետ),

**որոշելով** իր տասնինգերորդ նստաշրջանում, որ տվյալ հարցը միջազգային կոնվենցիայի առարկա է,

**ընդունում է** սույն Կոնվենցիան 1970 թ. նոյեմբերի 14-ին:

### Հ Ա Դ Վ Ա Ծ 1

Սույն Կոնվենցիայի նպատակների համար մշակութային արժեքներ են համարվում կրոնական կամ աշխարհիկ բնույթի այն արժեքները, որոնք յուրաքանչյուր պետության կողմից դիտվում են որպես հնագիտության, նախապատմական ժամանակաշրջանի, պատմության, գրականության, արվեստի և գիտության համար նշանակություն ունեցող արժեքներ և որոնք պատկանում են ներքոհիշյալ խմբերին:

- բուսական և կենդանական աշխարհի, հանքարանության, անտառմիայի հազվագյուտ հավաքածուներ ու նմուշներ, հնէաբանության համար հետաքրքրություն ներկայացնող առարկաներ,
- պատմությանը վերաբերող, ներառյալ գիտության և տեխնիկայի պատմությունը, պատերազմների և հասարակությունների պատմությունը, ինչպես նաև ազգային գործիչների, մտածողների, գիտնականների ու արվեստագետների կյանքի և ազգային նշանավոր իրադարձությունների հետ կապված արժեքները,
- հնագիտական գտածոներ (սովորական ու գաղտնի) և հնագիտական հայտնագործություններ,
- գեղարվեստական ու պատմական մասնատված հուշարձանների և հնագիտական վայրերի բաղկացուցիչ մասեր,

- ավելի քան հարյուրամյա հնության առարկաներ, ինչպիսին են արձանագրությունները, դրամները և տպագիր իրատարակությունները,
- ազգաբանական նշանակության նյութեր,
- գեղարվեստական նշանակության արժեքներ, ինչպիսին են:
  - ցանկացած հիմքի վրա և ցանկացած նյութերով կատարված ամբողջությին ծեռքի աշխատանք հանդիսացող կտավները, նկարները և գծանկարները (բացառությամբ արդյունաբերական ծեավորումների և ծեռքի աշխատանքով գարողարված արդյունաբերական արտադրանքների),
  - ցանկացած նյութից ստեղծված յուրօրինակ քանդակները,
  - յուրօրինակ փորագրությունները, էստամպներն ու վիճագրությունները,
  - ցանկացած նյութից պատրաստված գեղարվեստական յուրօրինակ հավաքածուները և մոնտաժները,
- հատուկ հետաքրքրություն (պատմական, գեղարվեստական, գիտական, գրական և այլ) ներկայացնող հազվագյուտ ծերագրեր և սկզբնատիպ գրքեր, հնագույն գրքեր, փաստաթղթեր և հրատարակություններ՝ առանձին կամ հավաքածուներով,
- փոստային նամականիշեր, հարկային և համանման նամականիշեր՝ առանձին կամ հավաքածուներով,
- արխիվներ, ներառյալ ծայնագրությունների, լուսանկարների արխիվները և կինո արխիվները,
- ավելի քան հարյուրամյա հնության կահույք և երաժշտական հնագույն գրքերներ:

### Հ Ա Դ Վ Ա Ծ 2

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետություններն ընդունում են, որ մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այդ արժեքների ծագման պետությունների մշակութային ժառանգության աղքատացման գլխավոր պատճառներից են, և որ միջազգային համագործակցությունը առավել գործուն միջոցներից մեկն է ապահովելու համար յուրաքանչյուր

Երկրի մշակութային արժեքների պաշտպանությունը նման վտանգներից:

2. Այդ նպատակով մասնակից անտուրյունները պարտավորվում են իրենց տրամադրության տակ եղած միջոցներով հակազդել նման պրակտիկային, մասնավորապես, վերացնելով դրա պատճառները, վերջ դնելով գոյություն ունեցող պրակտիկային և օգնելով կատարելու անհրաժեշտ փոխհատուցումներ:

### Հոդված 3

Մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիային համապատասխան ընդունված դրույթներին հակառակ կատարվող մշակութային արժեքների ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության փոխանցումն ապօրինի է:

### Հոդված 4

Սույն Կոնվենցիայի մասնակից պետություններն ընդունում են, որ սույն Կոնվենցիայի նպատակների համար յուրաքանչյուր պետության մշակութային ժառանգությունը ներքոի համապատասխան մշակութային արժեքները, որոնք ստեղծվել են այդ պետության տարածքում՝ այդտեղ բնակվող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից,

- տվյալ պետության քաղաքացիների կողմից անհատապես կամ կոլեկտիվ ստեղծված մշակութային արժեքները և տվյալ պետության համար կարևոր նշանակություն ունեցող այն մշակութային արժեքները, որոնք ստեղծվել են այդ պետության տարածքում՝ այդտեղ բնակվող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից,
- ազգային տարածքում հայտնաբերված մշակութային արժեքներ,
- հնագիտական, ազգագրական և բնագիտական արշավախմբերի մշակութային արժեքների ծագման երկրի իրավասու իշխանությունների համաձայնությամբ ծեռք բերած արժեքներ,
- կամավոր փոխանակումների արդյունքում ծեռք բերված մշակութային արժեքներ,
- որպես նվիրատվություն ստացված կամ արժեքների ծագման երկրի իրավասու իշխանությունների համաձայնությամբ օրինական կարգով գնված մշակութային արժեքներ:

### Հոդված 5

Սույն Կոնվենցիայի մասնակից պետություններն իրենց մշակութային

արժեքների պաշտպանությունն ապօրինի ներմուծումից, արտահանումից և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումից ապահովելու նպատակով պարտավորվում են իրենց տարածքում, յուրաքանչյուր երկրի պայմանները հաշվի առնելով, ստեղծել մշակութային ժառանգության պաշտպանության մեկ կամ մի քանի ազգային ծառայություններ, եթե նման ծառայություններ դեռևս ստեղծված չեն ապահովված որպես անհակազմի այնպիսի թվաքանակով, որն անհրաժեշտ է ներքոի համար:

- նպաստել մշակութային ժառանգության պաշտպանությունն ապահովող, և, մասնավորապես, կարևոր մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումն ու դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի մշակմանը,
- պաշտպանվող արժեքների ազգային գրանցանայտյանի հիման վրա կազմել և նորացնել պետական և մասնավոր կարևոր մշակութային արժեքների ցուցակը, որոնց արտահանումը կնշանակեր ազգային մշակութային ժառանգության գգալի աղքատացում,
- նպաստել մշակութային արժեքները պահապանելու և հանրամատչելի դարձնելու համար անհրաժեշտ գիտական ու տեխնիկական հաստատությունների (բանգարաններ, գրադարաններ, արխիվներ, լաբորատորիաներ, արվեստանոցներ և այլն) զարգացմանը և ստեղծմանը,
- կազմակերպել վերահսկողություն հնագիտական պեղումների նկատմամբ, ապահովել որոշակի մշակութային արժեքների «in situ» (իրենց տեղում) պահպանումը և պաշտպանել հնագիտական հետազա պեղումների համար նպատեսված որոշ շրջաններ,
- շահագրգու անձանց (պահուների, կոլեկցիոներների, հնահավաքների և այլոց) համար սահմանել սույն Կոնվենցիայում ծևակերպված երկայի սկզբունքներին համապատասխանող կանոններ և քայլեր ծեռնարկել դրանց կատարումն ապահովելու համար,
- ծեռնարկել կրթական միջոցառումներ բոլոր պետությունների մշակութային ժառանգության նկատմամբ հարգանք ծևակերպված ու ամրապնդելու և սույն Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ

գիտելիքներ տարածելու նպատակով,

- g) հետևել, որպեսզի մշակութային արժեքի անհետացման յուրաքանչյուր դեպքի տրվի համապատասխան հրապարակայնություն:

### Հ ո դ Վ ա ծ 6

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են

- a) սահմանել համապատասխան հավաստագիր, որով արտահանող պետությունը հավաստում է, որ տվյալ մշակութային արժեքի արտահանումը բռնվարդված է: Այդ վկայականը պետք է կցվի գործող կանոններին համապատասխան արտահանվող բոլոր մշակութային արժեքներին,
- b) արգելել սեփական տարածեքի մշակութային այն արժեքների արտահանումը, որոնց կցված չէ վերոհիշյալ հավաստագիրը,
- c) սույն արգելքի մասին համապատասխան կարգով տեղեկացնել հասարակությանը և, մասնավորապես, այն անձանց, որոնք կարող են արտահանել կամ ներմուծել մշակութային արժեքներ:

### Հ ո դ Վ ա ծ 7

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են

- a) ազգային օրենսդրությանը համապատասխան ծերնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ուղղված իրենց տարածում գտնվող թանգարանների և նման ուրիշ հաստատությունների կողմից Կոնվենցիայի մասնակից այլ պետությունից ծագող այն մշակութային արժեքների ծեռք բերումը կանխելուն, որոնք ապօրինաբար արտահանվել են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո: Ամեն անգամ, երբ դա հնարավոր է, մշակութային արժեքի ծագման սույն Կոնվենցիայի մասնակից պետությանը տեղեկացնել երկու պետություններում Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո այդ պետությունից ապօրինաբար արտահանված մշակութային արժեքը վերադարձնելու առաջարկության մասին,
- b) (i) արգելել սույն Կոնվենցիայի մասնակից այլ պետության թանգարանից կամ կրոնական և աշխարհիկ հանրային

հուշարձանից կամ նման հաստատությունից՝ շահագրգիռ պետություններում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո հայշտակված մշակութային արժեքների ներմուծը, պայմանով, որ այդ արժեքն առկա է տվյալ հաստատությանը պատկանող առարկաների ցուցակում,

(ii) մասնակից պետության պահանջով համապատասխան քայլեր ծեռնարկել երկու շահագրգիռ պետություններում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո ներմուծված ցանկացած նման մշակութային արժեքի հայտնաբերման և վերադարձման համար, պայմանով, որ խնդրանք ներկայացրած պետությունը բարեխիղ գնորդին կամ անձին, որն այդ արժեքի նկատմամբ ունի օրինական իրավունք, վճարի արդարացի փոխհատուցում: Դետախուզման և վերադարձման խնդրանքներն ուղարկվում են դիվանագիտական ուղիներով: Խնդրանք ներկայացրած կողմն իր հաշվին ներկայացնում է փաստարդիքը և այլ ապացույցներ, որոնք անհրաժեշտ են հետախուզման և վերադարձման պահանջի իրավունքի հաստատման համար: Կողմերը սույն հոդվածին համապատասխան վերադարձվող մշակութային արժեքներից մաքսատուրքը կամ այլ տուրքեր չեն գանձում: Մշակութային արժեքի վերադարձման և փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է խնդրանք ներկայացնող կողմը:

### Հ ո դ Վ ա ծ 8

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են թեական կամ վարչական պատասխանատվության ենթարկել բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են 6 և 7 բ) հոդվածներում նշանակված արգելվելու խախտման համար:

### Հ ո դ Վ ա ծ 9

Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն, որի մշակութային ժառանգությունը ենթարկվում է հնագիտական կամ ազգարանական նյութերի հավաքածուներին, որոնց դա առնչվում է: Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները նման դեպքերում պարտավորվում են մասնակցել շահագրգիռ միջոցառումների սահմանմանը ու իրականացմանը, ներայալ, համապատասխան կոնկրետ մշակութային արժեքների արտահանման,

ներմուծման և միջազգային առևտորի նկատմամբ հսկողությանը: Յուրաքանչյուր շահագրգիռ պետություն, նախքան համաձայնությունը, հնարավոր սահմաններում նախնական միջոցներ է ծեռնարկում խնդրանք ներկայացրած պետության մշակութային ժառանգությանն անուղղելի վնասի պատճառումը կանխելու համար:

### Հոդված 10

- Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են՝
- a) կրթության, տեղեկատվության և գգոնության միջոցով սահմանափակել սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետությունից ապօրինաբար արտահանված մշակութային արժեքների տեղափոխումը և, յուրաքանչյուր երկրի պայմաններին համապատասխան, հնահավաքներին պարտավորեցնել քրեական պատժամիջոցների սպառնալիքի ներքո վարելու գրանցամատյան այնտեղ նշելով մշակութային արժեքի ժագումը, մատակարարի ազգանունն ու հասցեն, վաճառված ամեն մի առարկայի նկարագրությունն ու արժեքը, ինչպես նաև մշակութային արժեքների գնորդներին տեղեկացնել այդ արժեքների վրա արտահանման արգելքի տարածման հնարավորության մասին,
  - b) ձգտել կրթական միջոցների օգնությամբ հասարակության գիտակցության մեջ ծևավորել ու զարգացնել մշակութային արժեքների նշանակության և մշակութային ժառանգությանը գողությամբ, գաղտնի պեղումներով և ապօրինի արտահանմամբ սպառնացող վտանգի գիտակցում:

### Հոդված 11

Ապօրինի են համարվում մշակութային արժեքների այնպիսի հարկադիր արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, որոնք ուղղակի կամ անուղղակի բխում են օտարերկոյա ուժերի կողմից պետության օկուպացումից:

### Հոդված 12

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է հարգեն այն տարածքների մշակութային ժառանգությունը, որոնց արտաքին հարաբերությունների համար նրանք պատասխանատու են, և համապատասխան միջոցներ պետք է կիրառեն այդ տարածքներում

ապօրինի ներմուծումը, արտահանումը և սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու համար:

### Հոդված 13

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են նաև յուրաքանչյուր պետության օրենսդրությանը համապատասխան՝

- a) բոլոր պատշաճ միջոցներով կանխարգելել մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, որը նպաստում է այդ արժեքների ապօրինի ներմուծմանը կամ արտահանմանը,
- b) ձեռնարկել միջոցներ, որպեսզի իրենց իրավասու ծառայությունները համագործակցեն ապօրինի արտահանված մշակութային արժեքներն օրինական սեփականատերներին հնարավորինս արագ վերադարձնելու նպատակով,
- c) բոլույատրել օրինական սեփականատիրոջ կողմից կամ անունից հայցի հարուցում կորսված կամ գողացված մշակութային արժեքների վերադարձման համար,
- d) ճանաչել սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետության անկապտելի իրավունքը՝ որոշ մշակութային արժեքներ որակելու և հայտարարելու անօտարելի, որոնք դրանից ելնելով չափությունը է ipso facto արտահանվեն, և նպաստել շահագրգիռ պետություններ այդպիսի մշակութային արժեքների վերադարձին այն դեպքում, եթե դրանք ավելի վաղ էին արտահանվել:

### Հոդված 14

Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն, որպեսզի կանխի ապօրինի արտահանումը և կատարի սույն Կոնվենցիայի կատարման հետ կապված պարտավորությունները, իր հնարավորությունների սահմաններում մշակութային ժառանգության պաշտպանության ազգային ծառայություններին պետք է տրամադրի բավարար միջոցներ և անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծել հիմնադրամներ այդ նպատակով:

### Հոդված 15

Սույն Կոնվենցիան ոչ մի կերպ չի խոչընդոտում մասնակից

աետություններին միմյանց միջև կնքելու հատուկ համաձայնագրեր կամ շարունակելու կիրառել արդեն կնքված համաձայնագրերը նախքան շահագրգիռ պետություններում սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը իրենց ծագման պետության տարածքից որևէ պատճառով արտահանված մշակութային արժեքների վերադարձման առնչությամբ:

### Հոդված 16

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր Կոնֆերանսին, նրա սահմանած ժամկետում և կարգով ներկայացվող պարբերական գեկուցյուններով, կիաղորդեն սույն Կոնվենցիայի կատարման նպատակով ընդունված օրենսդրական ու վարչական դրույթների և ծեռարկված այլ միջոցառումների մասին, ինչպես նաև կտեղեկացնեն այդ բնագավառում իրենց կուտակած փորձի մասին:

### Հոդված 17

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները կարող են դիմել Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը տեխնիկական աջակցության համար, մասնավորապես, հետևյալի կապակցությամբ:

- տեղեկատվության և կրթության,
- խորհրդատվության և փորձագետների ծառայությունների,
- համակարգման և բարի ծառայությունների:

2. Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը կարող է իր նախաձեռնությամբ կատարել հետազոտություններ և իրապարակել ուսումնասիրություններ մշակութային արժեքների ապօրինի տեղափոխման վերաբերյալ:

3. Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը այդ նպատակով կարող է նաև համագործակցել ոչ կառավարական ցանկացած իրավասու կազմակերպության հետ:

4. Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը կարող է իր նախաձեռնությամբ մասնակից պետություններին անել առաջարկություններ ուղղված սույն Կոնվենցիայի կատարմանը:

5. Կոնվենցիայի առնվազն երկու մասնակից պետությունների խմբանքով, որոնց միջև Կոնվենցիայի կատարման վերաբերյալ տարածայնություններ են ծագել, ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարող է առաջարկել իր բարի ծառայությունները՝ նրանց միջև համաձայնություն հաստատելու համար:

### Հոդված 18

Սույն Կոնվենցիան կնքվել է անգլերեն, իսպաներեն, ռուսերեն և ֆրանսերեն, բոլոր չորս տեքստերն ել հավասարագոր են:

### Հոդված 19

1. Սույն Կոնվենցիան եթեակա է վավերացման կամ ընդունման Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետությունների կողմից իրենց սահմանադրություններով նախատեսված կարգով:

2. Կավերացրեց կամ ընդունման փաստաթղթերուն ի պահ են հանձնված Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին:

### Հոդված 20

1. Սույն Կոնվենցիային կարող է միանալ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ չիանդիսացող ցանկացած պետություն, որը կազմակերպության գործադիր խորհրդի կողմից կստանա միանալու մասին հրավեր:

2. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթղթուղթը Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու միջոցով:

### Հոդված 21

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում երրորդ վավերագիրը կամ ընդունման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց, բայց միայն անելությունների համար, որոնք վավերացման, ընդունման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվել նշված օրը կամ ավելի վաղ: Ցանկացած այլ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ միանալու մասին իր փաստաթղթուն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

### Հոդված 22

Սույն Կոնվենցիայի մասնակից պետություններն ընդունում են, որ նրա գործողությունը տարածվում է ոչ միայն իրենց մետրոպոլիսի տարածքների, այլև այն տարածքների վրա, որոնց արտաքին հարաբերությունների համար պատասխանատու են. նրանք պարտավորվում են, եթե անհրաժեշտ է, վավերացման, ընդունման կամ միանալու պահին կամ ավելի վաղ խորհրդակցել նշված տարածքների կառավարությունների կամ իրավասու իշխանությունների հետ, որպեսզի ապահովեն այդ տարածքներում Կոնվենցիայի կատարումը, ինչպես նաև Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի

կազմակերպության Գլխավոր տնօրինին ծանուցել այն տարածքների մասին, որտեղ Կոնվենջիան պետք է կատարվի: Այդ ծանուցագրությունն ուժի մեջ է մտնում ստացվելուց երեք ամիս անգ:

ମୁଦ୍ରଣ ପାତା 23

1. Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է այն չեղյալ հայտարարել իր անունից կամ ցանկացած տարածքի անունից, որի արտաքին հարաբերությունների հաճար նա պատասխանատու է:
  2. Չեղյալ հայտարարելը ծանուցվում է գրավիր փաստաթուղթվ, որը հանձնվում է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրինության:
  3. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու մասին փաստաթուղթ ստանալուց տասներեսու ամիս ամաց:

Հոդված 24

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրինը կազմակերպության անդամ պետություններին և 20 հոդվածում հիշատակված անդամ չիանդիսացող պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը հայտնում է 19 և 20 հոդվածներում հիշատակված վավերացման, ընդունման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու, ինչպես նաև 22 և 23 հոդվածներում նշված ժանուցման և չեղյալ հայտարարման մասին:

Հոդված 25

1. Սույն Կոնվենցիան կարող է վերանայվել Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի կողմից: Սակայն վերանայված տեքստը կպարտավորեցնի միայն այն պետություններին, որոնք կդատան վերանայված Կոնվենցիայի կողմեր:
  2. Այն դեպքում, եթե Գլխավոր կոնֆերանսը սույն Կոնվենցիայի լրիվ կամ նաև վերանայման արդյունքում ընդունի նոր կոնվենցիա և եթե նոր Կոնվենցիան չպարունակի այլ կարգ, ապա սույն Կոնվենցիան վավերացնան, ընդունման կամ միանալու համար փակ կլինի նոր վերանայված Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը առանձին:

Запущено 26

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածի համաձյան սույն Կոնվենցիան Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի խնդրանքով կրթանցվի Միավորված ազգերի կազմակերպության քաղաքականությունը:

96

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Մշակութային եկ բնութազա յասաշեարժան  
ժամանակացա պարտասութա սպան

(1972 թ. նոյեմբերի 16)

Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսը հրավիրված 1972 թ. հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 21-ը Փարիզում, իր տասնյոթերորդ նստաշրանքում:

ՃԵՂՈՎ, որ մշակութային և բնության ժառանգությանը զնալով պահելի մեծ պահում է սպառնում, ոչ միայն վնասումների ավանդական պատճառներով, այլև սոցիալական ու տնտեսական պայմանների փոփոխությամբ, որը իրավիճակը խորացնում է վնասի և պերծման էլ ավելի վլաճացնուր երևություններով,

համարելով, որ ճշգկութային կամ բնության ժառանգության ցանկացած օբյեկտի վճասվելը կամ անհետանալը հանդիսանում է աշխարհի բոլոր ժողովորդների ժառանգության կործանարար այլօպագում,

համարելով, որ այդ ժառանգության պահպանությունն ազգային մակարդակով հաճախ լինում է ոչ լիարժեք՝ դրա համար պահանջվող մեծ ժամանակի և այն երկրի տնտեսական, գիտական ու տեխնիկական ռեսուրսների պակասի պատճառով, որի տարածքում գտնվում է սահմանադրամական ենթակա արժեքը,

**հիշեցնելով**, որ Կազմակերպության կանոնադրությունը նախատեսում է, որ այն կը նույնի և կտարածի գիտելիքներ մարդկության հաճընդհանուր ժառանգության պահպանումն ու պաշտպանությունը ապահովելու, ինչպես նաև շահագրդի ազգերին միջազգային համապատասխան կոնվենցիաներ առաջարկելու նիշոցով,

համարելով, որ մշակութային և բության արժեքների վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային կոնվենցիաները, հանձնարարականներն ու բանաձեռնությունը պահպանում են բոլոր ժողովուրդների հաճար այս եզակի և անփոխարինելի արժեքների կարևորության մասին անկախ նրանից, թե որ ժողովորդին են դրանք պատկանում,

համարելով, որ մշակութային և բնության ժառանգության որոշ արժեքներ ներկայացնում են բացառիկ հետաքրքրություն և այդ պատճառով պետք է պահպանվեն որպես համայն մարդկության համաշխարհային ժառանգության մաս,

համարելով, որ դրանց լրությունը հաշվի առնելով սպառնացող նոր վտանգների ծավալն միջազգային ողջ հանրության պարտըն

մասնակցել բացառիկ համընդգրկուն արժեք ունեցող բնության և մշակութային ժառանգության պահպանությամբ տրամադրելով կոլեկտիվ գործունեությանը, որը, չփոխարինելով շահագրգիռ պետության գործունեությանը, արդյունավետ կերպով կրացնի այն,

համարելով, որ այդ նպատակով անհրաժեշտ է ընդունել կոնվենցիայի տեսքով նոր դրույթներ՝ ստեղծելով բացառիկ համընդգրկուն արժեքների մշտական հիմքով և ժամանակակից գիտական մեթոդներին համապատասխան կազմակերպված կոլեկտիվ պաշտպանության արդյունավետ համակարգ,

որոշելով իր տասնվեցերորդ նստաշրջանում, որ այդ հարցը միջազգային կոնվենցիայի առարկա է,

Եմունեց 1972 թ. նոյեմբերի 16-ին սույն Կոնվենցիան:

## I. Մշակութային և բնության ժառանգության սահմանումը

### Հոդված 1

Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշակութային ժառանգություն» է համարվում.

հուշարձանները՝ ճարտարապետական, մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության ստեղծագործությունները, հնագիտական բնույթի տարրերը կամ կառուցվածքները, արձանագրությունները, աճապային կացարանները և տարրերի խմբերը, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացարձիկ համընդգրկուն արժեք,

համալիրները՝ մեկուսացված կամ միավորված կառույցների խմբերը, որոնք ճարտարապետության, միասնորության կամ բնապատկերում իրենց տեղի շնորհիվ հանդիսանում են պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացարձիկ համընդգրկուն արժեք,

տեսարժան վայրերը՝ ճեռակերտ աշխատանքները կամ մարդու և բնության համատեղ ստեղծագործությունները, ինչպես նաև հնագիտական տեսարժան վայրեր ընդգրկող գտնվությունները, որոնք հանդիսանում են պատմության, գեղագիտության, ազգագրության կամ մարդաբանության տեսանկյունից բացարձիկ համընդգրկուն արժեք :

### Հոդված 2

Սույն Կոնվենցիայի նպատակների համար «բնության ժառանգություն» է համարվում.

բնության հուշարձանները՝ կազմված ֆիզիկական և կենսաբանական կազմավորումներից կամ նման կազմակերումների խմբերից, որոնք

հանդիսանում են գեղագիտության կամ գիտության տեսանկյունից բացարձիկ համընդգրկուն արժեք,

երկրաբանական և ֆիզիոգրաֆիական կազմավորումները և հստակ սահմանազավածք գտնվությունները, որոնք ներկայացնում են գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից բացարձիկ համընդգրկուն արժեք ունեցող և վտանգի ենթակա կենդանիների ու բույսերի տեսանկյունից արեալներ,

բնության տեսարժան վայրերը կամ խիստ սահմանազավածք բնական գոտիները, որոնք ունեն գիտության, կոնսերվացման կամ բնության գեղեցկության տեսանկյունից բացարձիկ համընդգրկուն արժեք :

### Հոդված 3

Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն պետք է որոշի և սահմանազատի իր տարածքում գտնվող և վերոհիշյալ 1 և 2 հոդվածներով նախատեսվող տարբեր արժեքները :

## II. Մշակութային և բնության ժառանգության ազգային պաշտպանությունն ու միջազգային պաշտպանությունը

### Հոդված 4

Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն ընդունում է, որ 1 և 2 հոդվածներում հիշատակված և իր տարածքում գտնվող մշակութային ու բնության ժառանգության հայտնաբերումը, պաշտպանությունը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին հանձնումն ապահովելու պարտավորությունը դրվում է նախատար իր վրա: Այդ նպատակով նա պետք է անի ամեն ինչ իր ռեսուրսների ընծեռած հնարավորությունների շրջանակում և անհրաժեշտության դեպքում, միջազգային օգնության և համագործակցության միջոցով, մասնավորապես, ֆինանսական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական օգնության միջոցով, որը նա կարող է ծեռը բերել:

### Հոդված 5

Սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից պետություն երաշխավորելու համար, որ իր տարածքում գտնվող մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու հանրավորությունների, ծգտում է ըստ հնարավորին իր պայմաններին համապատասխան:

- a) Վարել ընդհանուր քաղաքականություն մշակութային և բնության ժառանգությանը հասարակական կյանքում որոշակի գործառույթներ հաղորդելու նպատակով, և այդ ժառանգության պաշտպանությունը ներառել ընդհանուր պլանավորման ծրագրերում,
- b) իրենց տարածքում ստեղծել, եթե դեռևս ստեղծված չեն, մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու մեկ կամ մի քանի ծառայություններ՝ հաճապատասխան անձնակազմով և միջոցներով, որոնք թույլ կտան իրականացնելու դրանց գործառույթները,
- c) գարգանել գիտական և տեխնիկական ուսումնասիրություններ ու հետազոտություններ և կատարելագործել աշխատանքի այն մերուները, որոնք պետությանը հնարավորություն են տալիս հակագեղեցի իր մշակութային և բնության ժառանգությանը սպառնացող վտանգներին,
- d) ծեռնարկել իրավական, գիտական, տեխնիկական, վարչական և ֆինանսական հաճապատասխան միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են այդ ժառանգության հայտնաբերման, պաշտպանության, պահպանության, հանրամատչելի դարձնելու և վերականգնման համար, և
- e) աջակցել մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու բնագավառում կաղրերի վերապատրաստման ազգային կամ տարածաշրջանային կենտրոնների ստեղծմանը կամ գարգանմանը, ինչպես նաև խրախուսել այդ բնագավառուն գիտական հետազոտությունները:

### Հոդված 6

1. Լիովին հարգելով այն պետությունների ինքնիշխանությունը, որոնց տարածքում գտնվում է 1 և 2 հոդվածներում նշված մշակութային և բնության ժառանգությունը և չխոչընդոտելով ազգային օրենսդրությամբ նախատեսված սեփականության իրավունքին՝ սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ընդունում են, որ այն համընդհանուր ժառանգություն է, որի պաշտպանությունը միջազգային ողջ հանրության պարտը է:

2. Մասնակից պետությունները, պարտավորվում են սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան օգնություն տրամադրել 11 հոդվածի 2 և 4 կետերում հիշատակված մշակութային և բնության ժառանգության հայտնաբերմանը, պաշտպանությանը, պահպանությանն ու հանրամատչելի դարձնելուն, եթե այդ մասին կիսորեն պետությունները, որոնց տարածքում այն գտնվում է:

3. Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է չկատարել որևէ դիտավորյալ գործողություն, որը կարող է ուղղակի կամ անուղղակի վնաս պատճառել 1 և 2 հոդվածներում հիշատակված, սույն Կոնվենցիայի մյուս մասնակից պետությունների տարածքում գտնվող մշակութային և բնության ժառանգությանը:

### Հոդված 7

Սույն Կոնվենցիայի նպատակների համար մշակութային և բնության համաշխարհային ժառանգության միջազգային պաշտպանություն ասելով համականում ենք միջազգային համագործակցության և օգնության համակարգի ստեղծում Կոնվենցիայի մասնակից պետությունների այդ ժառանգության պահպանմանը ու հայտնաբերմանը ուղղված ջանքերին օգնություն ցույց տալու համար:

### III. Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության միջկառավարական կոմիտե

#### Հոդված 8

1. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակության շրջանակներում հիմնադրվում է Բացառիկ համընդգրկում արժեք ունեցող մշակութային և բնության ժառանգության պաշտպանության միջկառավարական կոմիտե, որն անվանվում է «Յանաշխարհային ժառանգության կոմիտե»: Այս կազմված է Կոնվենցիայի մասնակից տասնինգ պետություններից, որոնք ընտրվում են Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակության կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի հերթական նստաշրջանում՝ ընդհանուր ասամբլեայի հրավիրված սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից: Կոմիտեի կազմի մեջ մտնող պետությունների թիվը կիսասվեր քանանունի սկսած Գլխավոր կոնֆերանսի այն հերթական նստաշրջանից, որը կանցկացվի սույն Կոնվենցիայի առնվազն քառասուն պետությունների համար ուժի մեջ մտնելուց հետո:

2. Կոմիտեի անդամների ընտրության ժամանակ պետք է ապահովվի աշխարհի տարբեր տարածաշրջանների և մշակութների արդարացի ներկայացուցչությունը:

3. Կոմիտեի նիստերին խորհրդակցական ծայնի իրավունքով կարող են ներկա գտնվել Մշակութային արժեքների պահպանության և վերկանգնման միջազգային հետազոտական կենտրոնի ներկայացուցիչը (Դոմիի կենտրոն), Դուշաբանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի ներկայացուցիչը (ԻԿՈՍՈՒ) և Բնության ու բնական պաշարների պահպանության միջազգային միության ներկայացուցիչը (ՍՍՈՊ), որոնց, Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակությի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի հերթական նստաշրջանում ընդհանուր ասամբլեայի հրավիրված սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների խնդրանքով, կարող են միանալ համաման խնդիրներ հետապնդող միջկառավարական կամ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

### Հ ո դ վ ա ծ 9

1. Դամաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ պետություններ իրենց լիազորություններն իրականացնում են՝ սկսած Գլխավոր կոնֆերանսի այն հերթական նստաշրջանի ավարտից, որի ժամանակ իրենց նրանք են, մինչև դրան հաջորդող երրորդ հերթական նստաշրջանի ավարտը:

2. Առաջին ընտրությունների ժամանակ նշանակված անդամների մեկ երրորդի լիազորություններն ավարտվում են Գլխավոր կոնֆերանսի այն առաջին հերթական նստաշրջանի վերջում, որը հաջորդում է այն նստաշրջանին, որի ժամանակ նրանք ընտրվել են, իսկ այդ նույն ժամանակ նշանակված անդամների երկու երրորդի լիազորություններն ավարտվում են Գլխավոր կոնֆերանսի՝ իրենց ընտրությանց հաջորդող երրորդ հերթական նստաշրջանի վերջում։ Կոմիտեի այդ անդամների անունները վիճակահանությամբ որոշվում են Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի նախագահի կողմից առաջին ընտրություններից հետո։

3. Կոմիտեի անդամ պետությունները որպես ներկայացուցիչներ ընտրում են մշակույթի կամ բնության ժառանգության բնագավառի որակյալ մասնագետների։

### Հ ո դ վ ա ծ 10

1. Դամաշխարհային ժառանգության կոմիտեն ընդունում է իր ընթացակարգի կանոնները։

2. Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իր նիստերին հրավիրել հասարակական կամ մասնավոր կազմակերպությունների կամ առանձին անձանց կոնկրետ հարցերով խորհրդատվության համար։

3. Կոմիտեն կարող է ստեղծել խորհրդակցական մարմիններ, որոնք անհրաժեշտ է համարում իր գործառությունների իրականացման համար։

### Հ ո դ վ ա ծ 11

1. Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն, ըստ հնարավորության, Դամաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացնում է իր տարածքում գտնվող մշակութային և բնության ժառանգության այն արժեքների ցանկը, որոնք կարող են ընդգրկվել սույն հոդվածի 2 կետում նախատեսված ցուցակում։ Այդ ցանկը, որը չպետք է սպահի համարել, պետք է բովանդակի փաստաթղթեր տվյալ արժեքների գտնվելու վայրի և դրանց նշանակության վերաբերյալ։

2. Պետությունների կողմից 1-ին կետին համապատասխան ներկայացվող ցանկերի հիման վրա Կոմիտեն կազմում, համալրում և «Դամաշխարհային ժառանգության ցուցակ» անվամբ հրատարակում է մշակութային և բնության ժառանգության մաս կազմող արժեքների ցուցակ, ինչպես դրանք սահմանված են սույն Կոնվենցիայի 1 և 2 հոդվածներում, որոնք Կոմիտեն համարում է բացառիկ համարնգրկուն արժեք իր սահմանած չափանիշներին համապատասխան։ Դամալրված ցուցակն ուղարկվում է ոչ ուշ, քան 2 տարին մեկ անգամ։

3. Դամաշխարհային ժառանգության ցուցակում արժեքի ընդգրկումը չի պահանջում է շահագրգիռ պետության համաձայնությունը։ Այն տարածքում գտնվող արժեքի ընդգրկումը, որի նկատմամբ ինքնիշխանությունը կամ հրավագործությունը մի քանի պետությունների կողմից վիճարկվում է, ոչ մի կերպ չի անդրադառնում վիճող կողմերի իրավունքների վրա։

4. Կոմիտեն, եթե պահանջում են հանգամնքները, կազմում, համալրում և «Վտանգված համաշխարհային ժառանգության ցուցակ» անվամբ հրատարակում է Դամաշխարհային ժառանգության ցուցակում հիշատակված այն արժեքների ցուցակը, որոնց պահպանության նպատակով պահանջվում են զգայի աշխատանքներ և որոնց համար սույն Կոնվենցիայի շրջանակներում օգնություն է խնդրվել։ Այդ ցուցակում նշվում է գործողությունների նոտավոր արժեքը։ Ցուցակում կարող են ընդգրկվել մշակութային և բնության ժառանգության մաս կազմող այն արժեքները միայն, որոնց սպառնում են լուրջ և կոնկրետ վտանգներ, ինչպես, օրինակ, ուժեղացող ավերման հետևանքով անհետացման վտանգը, հասարակական կամ մասնավոր խորհրդանշացության արագ զարգացման ծրագրերը, քաղաքացիների և գրուստաշրջան արագ զարգացման ծրագրերը, հողի նշանակության կամ սեփականության իրավունքի փոփոխման հետևանքով ավերածությունները, անհայտ պատճառով լքվածությունը, զինված ընդհարումների ծագումն ու սպառնակիքը, տարերային ալեսներու և կատակիզմները, մեծ հրեհները, երկարաժամկետ սողանքները, հրաբխային ժայթքումները, ջրի մակարդակի փոփոխությունը, ջրհեղեղները և մակընթացությունները։ Անհետածգելի անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է ցանկացած պահի Կոնվենցիային ժառանգության ցուցակում ընդգրկվել նոր արժեք և անհապաղ հայտնել այդ մասին։

5. Կոմիտեն սահմանում է այն չափանիշները, որոնց հիման վրա մշակութային կամ բնության ժառանգությանը պատկանող արժեքը կարող է

ընդգրկվել սույն հոդվածի 2 և 4 կետերում նախատեսված երկու ցուցակներ:

6. Նախաքան արժեքը սույն հոդվածի 2 և 4 կետերում հիշատակված երկու ցուցակներից որևէ մեկը ընդգրկելու խնդրանքը մերժելը, Կոմիտեն խորհրդակցում է այն նաևնակից պետության հետ, որի տարածում է գտնվում մշակութային կամ բնության ժառանգության տվյալ արժեքը:

7. Կոմիտեն, շահագրգիռ պետությունների հետ պայմանավորածության համաձայն, համակարգում և խրախուսում է սույն հոդվածի 2 և 4 կետերում նշված ցուցակները կազմելու համար անհրաժեշտ ուսումնասիրությունների և հետազոտությունների անցկացումը:

### Հոդված 12

Այն փաստը, որ մշակութային կամ բնության ժառանգության այս կամ այն արժեքը չի ընդգրկվել 11 հոդվածի 2 և 4 կետերում հիշատակված երկու ցուցակներից որևէ մեկը, ոչ մի դեպքում չի նշանակում, թե ադ օրենքությունի բացառիկ համընդգրկում արժեք որևէ այլ առումով, քան այդ ցուցակներ ընդգրկելը:

### Հոդված 13

1. Համաշխարհային ժառանգության կոմիտեն ստանում և ուսումնասիրում է միջազգային օգնություն տրամադրելու վերաբերյալ Կոնվենցիայի նաևնակից պետությունների ներկայացրած դիմումները իրենց տարածքում գտնվող մշակութային և բնության ժառանգության նաև կազմով այն արժեքների առնությանը, որոնք ներառված են կամ կարող են կազմող այն արժեքների առնությանը, որոնք ներառված են կամ կարող են կազմող այն արժեքների առնությանը: Ներկայել 11 հոդվածի 2 և 4 կետերում հիշատակված ցուցակներում: Նաև դիմումների նախատակը կարող է լինել այդ արժեքների պաշտպանության, պահպանության, հաճրամատչելի դարձնելու կամ վերականգնման պահպանությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան միջազգային օգնության վերաբերյալ դիմումները կարող են վերաբերել նաև 1 և 2 հոդվածներում սահմանված մշակութային կամ բնության ժառանգության հայտնաբերմանը, այն դեպքում, եթե նախնական հետազոտությունները վկայում են, որ հետագա հարցումները կարդարացվեն:

3. Կոմիտեն որոշում է, թե ինչ գործողություններ պետք է իրականացվեն այդ դիմումների կապակցությամբ, անհրաժեշտությամ դեպքում սահմանում է իր օգնության բնույթը ու ժամանակը լիազորում անհրաժեշտ համաձայնագրերի կնքումը շահագրգիռ կառավարության հետ:

4. Կոմիտեն սահմանում է իր գործողությունների առաջնահերթության կարգը: Ընդ որում նա հաշվի է առնում պաշտպանություն պահանջող արժեքի կարևորությունը մշակութային և բնության համաշխարհային ժառանգության համար, շրջակա միջավայրի աշխարհի ժողովուրդների հանճարի ու պատմության առավել ներկայացրուցական արժեքներին

միջազգային աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունը և ծեռնարկվելիք աշխատանքների հրատապությունը, այն պետությունների ռեսուրսների ժամանակը, որոնց տարածքում են գտնվում վտանգված արժեքները և, մասնավորապես, որքանով նրանց կարողանան պահպանվել այդ արժեքների պահպանությունն իրենց միջոցներով:

5. Կոմիտեն կազմում, համալրում և հրապարակում է այն արժեքների ցուցակը, որոնց համար միջազգային օգնություն է տրամադրվում:

6. Կոմիտեն որոշում է ընդունում սույն Կոնվենցիայի 15 հոդվածին համապատասխան ստեղծված հիմնադրամի միջոցների օգտագործման վերաբերյալ: Նա փնտորում է այդ միջոցները պետական աղյուրներ և այդ նպատակով ծեռնարկում բոլոր անհրաժեշտ միջոցները:

7. Կոմիտեն համագործակցում է միջազգային և ազգային, կառավարական և ոչ կառավարական այն կազմակերպությունների հետ, որոնք հետապնդում են սույն Կոնվենցիայի նպատակներին համանման նպատակներ: Կոմիտեն իր ծրագրերի և մախագծերի կատարման համար կառող է, մասնավորապես, դիմել Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման միջազգային հետազոտական կենտրոնի (Քոռմի կենտրոն), Հուշարձանների և տեսարժան վայրերի (ԻԿՈՒՌՈ) ու Բնության և բնական պահպանության միջազգային միուրիդ (ՄՍՈՊ) ժառայությունները նրանց իրավասությունների և համապատասխան հնարավորությունների ոլորտներում, պատրաստում է Կոմիտեի փաստաթղթերը, նրա նիստերի օրակարգը և ապահովում նրա որոշումների կատարումը:

### Հոդված 14

1. Համաշխարհային ժառանգության կոմիտեին օգնում է քարտուղարությունը՝ նշանակված Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից:

2. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը, առավելագույն օգտագործելով Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման միջազգային հետազոտական կենտրոնի (Քոռմի կենտրոն), Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (ԻԿՈՒՌՈ) ու Բնության և բնական պահպանների պահպանության միջազգային միուրիդ (ՄՍՈՊ) ժառայությունները նրանց իրավասությունների և համապատասխան հնարավորությունների ոլորտներում, պատրաստում է Կոմիտեի փաստաթղթերը, նրա նիստերի օրակարգը և ապահովում նրա որոշումների կատարումը:

#### **IV. Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության հիմնադրամ**

Հոդված 15

1. Սույնով հիմնվում է Քաջարիկ համբենդրկուս արժեքի մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության հիմնադրամ, որն անվանվում է «Դամաշխարհային ժառանգության հիմնադրամ»:

2. Այդ հիմնադրամը, Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության ֆինանսական կանոնադրության համապատասխան հողվածների համաձայն, հանդիսավորվում է նպատակային հիմնադրամ:

3. Դիմնադրամի միջոցները կազմված են

(ա) սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների պարտադիր և կամավոր մուտքումներից,

(բ) ավանդներից, նվերներից և կտակված գումարներից, որոնք կարող են արվել՝

(ի) այլ պետությունների կողմից,

(ii) Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության համակարգի այլ կազմակերպությունների, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության օարգացման ծրագրի և այլ միջկառավարական կազմակերպությունների կողմից,

(iii) պետական կամ մասնավոր մարմինների կամ առանձին անձանց կողմից,

(c) Դիմնադրամից փոխառված գումարների տոկոսներից,

(d) Դիմնադրամի օգտին կազմակերպված միջոցառություններից ստացված տուրքերի և մուտքերի գումարներից,

(e) ցանկացած այլ աղբյուրներից, որոնք թույլատրվում են Դիմնադրամի կանոնադրությամբ՝ մշակված Դամաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից:

4. Սույնում նշված Դիմնադրամը և Կոմիտեին տրամադրվող օգնության մյուս ծենյոր կարող են օգտագործվել միայն Կոմիտեի սահմանած նպատակներով։ Կոմիտեն կարող է ընդունել մուտքումներ, որոնք նախատեսված են միայն որոշակի ծրագրի կամ նախագծի համար,

106

—

այմանով, որ նա որոշում կայացրած լինի այդ ծրագրի կամ նախազծի ստարժան վերաբերյալ: Սութումները ՝իմնադրամ չեն ուղեկցվում սղաքական որևէ պայմանով:

புதுவூஷ 16

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, առանց սոցընդունելու ցանկացած կամավոր մուժմանը, պարտավորվում են երկու ուղարին մեկ անգամ կանոնավոր Դամաշխարհային ժառանգության իմբնադրամ վճարել մուծումներ, որոնց չափը, բոլոր պետությունների ամար կազմելով միևնույն տոկոսը, կսահմանի Կոնվենցիայի մասնակից պետությունների Գլխավոր ասամբլեան հրավիրված Միավորված ազգերի քրոթայան, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր ոնքերանի նատաշարջանի ժամանակ: Գլխավոր ասամբլեայի այդ որոշման նորունումը պահանջում է ներկա գտնվող և քետարկող այն մասնակից լինելու վեհականությունը, որոնք չեն կատարել սույն ողբածի 2 կետով նախատեսված հայտարարությունը: Կոնվենցիայի ասամակից պետությունների պարտադիր մուծումը ոչ մի դեպքում չի կարող երազանցել Միավորված ազգերի՝ կրօթայան, գիտության և մշակույթի ամանակերպության սովորական բյուջե կատարվող նրանց մուժման մեկ ոկոսը:

2. Սակայն, սույն Կոնվենցիայի 31 կամ 32 հոդվածում նշված լրաբանը պետություն կարող է Կոնվենցիան վավերացնելու, ողունենալու կամ նրան միանալու մասին իր փաստարդերը ի պահ սնծնելու պահին հայտարարել, որ ինքը սույն հոդվածի 1 կետի ուժը ներով կապված է:

3.Սույն հոդվածի 2 կետով նախատեսված հայտարարությունը ստարած Կոնվենցիայի մասնակից պետությունը կարող է ցանկացած միջ չեղյալ հայտարարել վերոհիշյալ հայտարարությունը Միավորված գետերի կրության, գիտության և ճշգրիտության Գլխավոր օրենքին ձանուցելու միջոցով։ Սակայն, հայտարարության չեղյալ ստարարումն այդ պետության պարտադիր մուժման վրա ազդեցություն նենա մասնակից պետությունների հերթական Գլխավոր կոնֆերանսի լանից միամբ։

4.Որպեսիս Կոմիտեն կարողանա արդյունավետորեն ժրագրավորել իր ծխունելության իրականացումը, սույն հոդվածի 2 կետով նախատեսված տարարություններ կատարած սույն Կոնվենցիայի մասնակից ուժքումների մուտքամբ պետք է կատարվեն կանոնավոր, առնվազն տարին մեկ անգամ, և պետք է կատարվեն մուտքամբ այն գումարից կաս, որ նրանք պետք է մուտքին այն դեպքում, եթե կապված լինեն ն հոդվածի 1 կետի դրույթներով:

5. Կոնվենցիայի մասնակից աշխատաժ պետություն, որն ընթացիկ արվա և դրան անմիջականորեն նախորդած օրացուցային տարվա սմար իր պարտադիր կամ կամավոր մուծումների պարտք ունի, չի կարող տրվել ։ Յամաշխառհային ժառանգության հիմնադրամի կոմիտեում

Հնայած սույն դրույթը չի կիրավում առաջին ընտրությունների ընթացքում: Կոմիտեի անդամ հանդիսացող նձան պետության լիազորությունները դադարում են սույն Կոնվենցիայի 8 հոդվածի 1 կետով նախատեսված ընտրությունների ժամանակ:

#### Հոդված 17

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները խրախուսում են ազգային, պետական կամ մասնավոր հիմնադրամների կամ ընկերակցությունների ստեղծմանը, որոնց նպատակն է նվիրատվություններ ներդրավել մշակութային և բնության ժառանգության պաշտպանության համար, ինչպիսին սահմանված է սույն Կոնվենցիայի 1 և 2 հոդվածներում:

#### Հոդված 18

Սույն Կոնվենցիայի մասնակից պետություններն օգնում են Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության հովանու ներքո համաշխարհային ժառանգության հիմնադրամի կողմից կազմակերպվող միջոցների հավաքածան միջազգային միջոցառումներին: Նրանք այդ նպատակով աջակցում են 15 հոդվածի 3 կետում նշված մարմինների կողմից անցկացվող դրամահավաքներին:

### V. Միջազգային օգնություն տրամադրելու պայմանները և ձևերը

#### Հոդված 19

Սույն Կոնվենցիայի մասնակից ցանկացած պետություն կարող է դիմել իր տրամադրում գտնվող՝ բացառիկ համընդգրկում արժեք ունեցող և մշակութային կամ բնության ժառանգության մաս կազմող արժեքին միջազգային օգնություն տրամադրելու խնդրանքով: Իր դիմումի հետ միասին նա պետք է ներկայացնի 21 հոդվածում նախատեսված տեղեկատվություն և փաստաթղթեր, որ ունի իր տրամադրության ներքո և որոնք անհրաժեշտ են Կոմիտեին որոշում ընդունելու համար:

#### Հոդված 20

Սույն Կոնվենցիային համապատասխան, միջազգային օգնությունը կարող է տրամադրվել մշակութային և բնության ժառանգության մաս կազմող միայն այն արժեքների համար, որոնք Կամաշխարհային ժառանգության կոմիտեն որոշել է կամ կարող է որոշել ներառել 11 հոդվածի 2 և 4 կետերում հիշատակված որևէ ցուցակում, 13 հոդվածի 2 կետի, 22 հոդվածի (c) կետի և 23 հոդվածի համաձայն:

#### Հոդված 21

1. Կամաշխարհային ժառանգության կոմիտեն սահմանում է միջազգային օգնություն տրամադրելու վերաբերյալ ստացվող դիմումների ընթացքանի բովանդակությունը ջշտելու ընթացակարգը, որով պետք է որոշվի ենթադրյալ գործողությունների բնույթը, անհրաժեշտ աշխատանքների ծավալը, վերջինների մոտավոր արժեքը, իրատապարագան աստիճանը և այն պատճառները, որոնք օգնության խնդրանքով դիմած պետությանը թույլ չեն տալիս ինքնուրույն կատարել բոլոր անհրաժեշտ ծախսերը: Ամեն անգամ, եթե ուա հնարավոր է, դիմումներին կցվում են փորձագետների եղրակացությունները:

2. Աղետների և տարերային աղետների կապակցությամբ ներկայացված օգնության վերաբերյալ դիմումները, այն աշխատանքների իրատապարագան արումով, որոնք, հնարավոր է, անհրաժեշտ լինի իրականացնել, Կոմիտեն պետք է քննի առաջնահերթ, ընդ որում նա իր տրամադրության ներքո պետք է ունենա նման դեպքերի համար նախատեսված պահուստային հիմնադրամ:

3. Նախքան որոշում ընդունելը Կոմիտեն կարող է անցկացնել հետազոտություններ կամ խորհրդակցություններ, որոնք ինքն անհրաժեշտ կիամարդի:

#### Հոդված 22

Կամաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից տրամադրվող օգնությունը կարող է ունենալ հետևյալ ձևերը:

- Գեղարվեստական, գիտական ու տեխնիկական այնպիսի հիմնահարցերի վերաբերյալ հետազոտություններ, որոնք բխում են մշակութային և բնության ժառանգության պաշտպանությունից, պահպանությունից: հանրամատչելի դարձնելուց և վերականգնումից, ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայի 11 հոդվածի 2 և 4 կետերում,
- Փորձագետների, տեխնիկական մասնագետների և որակյալ մասնագետների գործուղում հաստատված նախագծի բավարար կատարումն ապահովելու համար,
- Մշակութային և բնության ժառանգության հայտնաբերման, պաշտանության, պահպանության, վերականգնման և հանրամատչելի դարձնելու բնագավառի բոլոր մակարդակների անձնակազմերի մասնագետների պատրաստում,
- Սարքավորման տրամադրում, որը շահագրգիռ պետությունը չունի կամ ի վիճակի չէ ծնոք բերելու,

- e) Երկարաժամկետ փոխառությունների տրամադրում ցածր տոկոսադրույքով կամ առանց տոկոսադրույքի,
- f) բացառիկ և հատուկ հիմնավորված դեպքերում անհատույց նպաստների տրամադրում:

#### Հոդված 23

Համաշխարհային ժառանգության կոմիտեն կարող է նաև միջազգային օգնություն տրամադրել մշակութային և բնության ժառանգության հայտնաբերման, պաշտպանության, պահպանության, վերականգնման և հանրամատչելի դարձնելու բնագավառի բոլոր մակարդակների անձնակազմերի և մասնագետների պատրաստման ազգային կամ տարածաշրջանային կենտրոններին:

#### Հոդված 24

Մեծ ծավալի օգնություն տրամադրելուն պետք է նախորդեն գիտական, տնտեսական ու տեխնիկական մանրակրկիտ հետազոտություններ: Այդ հետազոտություններում անհրաժեշտ է օգտագործել մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության, վերականգնման ու հանրամատչելի դարձնելու համար ամենաառաջատար մեթոդները, և դրանք պետք է համապատասխանեն սույն կոնվենցիայի նպատակներին:

Հետազոտություններում պետք է ծգտել նաև մատմանշել շահագրիռ պետության առկա ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղղությունը:

#### Հոդված 25

Ընդհանուր կանոնի համաձայն, անհրաժեշտ աշխատանքների ֆինանսավորումը միայն մասսամար պետք է դրվի միջազգային համության վրա: Միջազգային օգնությունից օգտվող պետության ֆինանսական մասնակցությունը կազմում է յուրաքանչյուր ծրագրի կամ նախագծի համար տրամադրվող միջոցների գույքի մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա ռեսուրսներն այդ չեն թույլատրում:

#### Հոդված 26

Համաշխարհային ժառանգության կոմիտեն և օգնություն ստացող պետությունն իրենց կմքած համաձայնագրով սահմանում են այն պայմանները, որոնց հիմն վրա պետք է իրականացվի սույն ծրագիրը կամ նախագիծը, որի համար սույն Կոնվենցիայի պայմաններին համապատասխան միջազգային օգնություն է տրամադրվում: Այդ միջազգային օգնությունից օգտվող պետության պարտականությունն է

համաձայնագրում՝ սահմանված պայմաններին համապատասխան շարունակել պաշտպանել, պահպանել և հանրամատչելի դարձնել պահպանության ենթակա արժեքները:

#### VI. Կորթական ծրագրեր

##### Հոդված 27

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ծգտում են կիրառելով բոլոր համապատասխան միջոցները և, մասնավորապես, կրթական ու տեղեկատվական ծրագրերը, ամրապնդել իրենց ժողովուրդների հարգանքը ու կապվածությունը Կոնվենցիայի 1 և 2 հոդվածներում սահմանված մշակութային և բնության ժառանգության նկատմամբ:

2. Նրանք պարտավորվում են հասարակությանը լայնորեն տեղեկացնել այդ ժառանգությանը սպառնացող վտանգների, ինչպես նաև սույն Կոնվենցիային համապատասխան կիրառվող միջոցառումների մասին:

##### Հոդված 28

Սույն Կոնվենցիային համապատասխան միջազգային օգնություն ստացող Կոնվենցիայի մասնակից պետությունները համապատասխան միջոցներ են ծեռնարկում նման օգնություն ստացած ժառանգության կարևորությանը և օգնության դերին ժանոբացնելու նպատակով:

#### VII. Զեկույցներ

##### Հոդված 29

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսին, Վերջինիս սահմանած ժամկետներով և ձևով ներկայացրած զեկույցներով, տեղեկացնում են սույն Կոնվենցիայի կատարման նպատակներով իրենց ընդունած օրենսդրական ու վարչական դրույթների և այլ գործողությունների, ինչպես նաև այդ բնագավառում իրենց կուտակած փորձի մասին:

2. Այդ զեկույցները համձնվում են Համաշխարհային ժառանգության կոմիտեին:

3. Կոմիտեն իր գործունեության մասին զեկույց է ներկայացնում Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի յուրաքանչյուր հերթական նստաշրջանում:

## VIII. Եզրափակիչ դրույթներ

### Յոդած 30

Սույն Կոնվենցիան կազմված է անգերեն, արաբերեն, իսպաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, ընդ որում բոլոր հինգ տեքստերն եւ հավասարազոր են:

### Յոդած 31

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման կամ ընդունման Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետությունների կողմից իրենց սահմանադրություններով նախատեսված կարգով:

2. Վավերագրերը կամ ընդունման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին:

### Յոդած 32

1. Սույն Կոնվենցիան բաց է միանալու Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետության համար, որը Կազմակերպության Գլխավոր կոնֆերանսից կստանա միանալու իրավեր:

2. Միանալը կատարվում է միանալու փաստաթղթը Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու միջոցով:

### Յոդած 33

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քսաներորդ վավերագրի կամ ընդունման կամ միանալու փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց, բայց միայն այն պետությունների համար, որոնք իրենց վավերացման, ընդունման կամ միանալու փաստաթղթերն ի պահ են հանձնել նշված օրը կամ ավելի վաղ: Ցանկացած այլ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ միանալու փաստաթղթերն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

### Յոդած 34

Նետելալ դրույթները կիրառվում են սույն Կոնվենցիայի մասնակից այն պետությունների նկատմամբ, որոնք ունեն դաշնային կամ ոչ ունիտար սահմանադրական համակարգ:

ա) Սույն Կոնվենցիայի այն դրույթների առջությամբ, որոնց կատարումը գտնվում է դաշնային կամ կենտրոնական

օրենսդրական իշխանության իրավագորության ներք, դաշնային կամ կենտրոնական կառավարության պարտականությունները կիմեն նույնը, ինչ և դաշնային պետություններ չհանդիսացող մասնակից պետություններին:

բ) Սույն Կոնվենցիայի այն դրույթների առջությամբ, որոնց կատարումն գտնվում է յուրաքանչյուր առանձին նահանգի, երկրի, մարզի, կանտոնի իրավագորության ներք, որոնք դաշնության սահմանադրական համակարգին համապատասխան պարտավոր չեն ծեռնարկել օրենսդրական միջոցներ, դաշնային կառավարություններ նման նահանգների երկրների, մարզերի և կանտոնների իրավասու իշխանություններին տեղեկացնում է նշված դրույթների մասին հանձնարարելով ընդունել դրանք:

### Յոդած 35

1. Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է չեղյալ հայտարարել Կոնվենցիան:

2. Չեղյալ հայտարարելը ծանուցվում է գրավոր փաստաթղթով, որն ի պահ է հանձնվում Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենին:

3. Չեղյալ հայտարարելը ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման փաստաթուղթը ստանալու 12 ամիս անց: Այն ոչ մի դեպքում չի անդրադարձում չեղյալ հայտարարող պետության ստանձնած Փինանսական պարտավորությունների վրա մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

### Յոդած 36

Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը Կազմակերպության անդամ պետություններին, 32 հոդվածում հիշատակված Կազմակերպության անդամ չհանդիսացող պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը հաղորդում է 31 և 32 հոդվածներում հիշատակված վավերացման, ընդունման կամ միանալու վերաբերյալ բոլոր փաստաթղթերն ի պահ հանձնելը, ինչպես նաև 35 հոդվածում նշված չեղյալ հայտարարելու մասին:

### Յոդած 37

1. Սույն Կոնվենցիան կարող է վերանայել Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր

կոնֆերանսի կողմից: Սակայն վերանայված տեքստը կպարտավորեցնի միայն այն պետություններին, որոնք կդառնան վերանայված կոնվենցիայի մասնակից կողմեր:

2. Այն դեպքում, եթե Գլխավոր կոնֆերանսը սույն կոնվենցիայի լրիվ կամ մասնակի վերանայման արդյունքում ընդունի նոր կոնվենցիա և եթե նոր կոնվենցիան չըսկանդակի այլ կարգ, սույն կոնվենցիան վավերացնան, ընդունման կամ միանալու համար փակ կլինի վերանայված կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից:

### Յ ո դ վ ա ծ 38

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102 հոդվածի համաձայն, սույն կոնվենցիան կգրանցվի Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում՝ Միավորված ազգերի կրթության, գիտության և ճշգրիտության կազմակերպության Գլխավոր տնօրենի խնդրանքով:

### Տ Ա Ն Կ

- ◆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1960 թ ներկայի 14) 4
- ◆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1989թ. նոյեմբերի 10) 12
- ◆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՄԱՆ ԴԵՊԲՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵԲԵՆԵՐԻ ՊԱՇՏՈՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ (1954թ. մայիսի 14) 23
- ◆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵԲԵՆԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԹՈՒՄ, ԱՐՏԱՎԱՍԻՒՄ ԵՎ ԴՐԱՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆԵՒՓՈԽԱՍՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԿԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1970թ. նոյեմբերի 14) 85
- ◆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԱՇԽԱՐՁԱՅԻՆ ԺԱՌԱՏԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (1972թ. նոյեմբերի 16) 97

## իրավական հիմք 15 հոդվածի 1-ին կետի (ա) – (c) Ենթակետերում նշված հանցագործությունների համար:

3.Կողմերը, որոնք հանձնում են չեն պայմանավորում պայմանագրի գոյությամբ, 15 հոդվածի 1-ին կետի (ա) – (c) Ենթակետերում նշված հանցագործությունները ճանաչում են միջյանց միջև որպես հանձնում առաջանող հանցագործություններ, հայցվող Կողմի օրենսդրությամբ նախատեսված կարգով:

4. Եթե անհրաժեշտ է, 15 հոդվածի 1-ին կետի (ա) – (c) Ենթակետերում նշված հանցագործությունները, Կողմերի միջև հանձնման նպատակով, համարվում են որպես կատարված ինչպես դրանց կատարման վայրում, այնպես էլ այն տարածքում, որտեղ Կողմերը հաստատել են իրենց իրավագործությունը 16 հոդվածի 1-ին կետին համապատասխան:

### Հոդված 19

#### Իրավական փոխօգնություն

1. Կողմերը պետք է միջյանց ամենայն փոխօգնություն տրամադրեն 15 հոդվածում նշված հանցագործությունների վերաբերյալ քննության կամ քրեական ընթացակարգերի կամ հանձնման առումով, ներառյալ իրենց տրամադրության տակ գտնվող և քննության նպատակներով անհրաժեշտ ապացույնների տրամադրում:

2. Կողմերը 1-ին կետից բխող պարտավորություններն իրականացնում են իրենց միջև իրավական փոխօգնության վերաբերյալ ցանկացած համաձայնագրին կամ պայմանագրին համապատասխան: Նման համաձայնագրերի կամ պայմանագրերի բացակայության դեպքում, Կողմերը փոխօգնությունը իրականացնում են իրենց ներքին իրավունքին համապատասխան:

### Հոդված 20

#### Մերժման հիմնավորումները

1. Դանձնման և իրավական փոխօգնության համապատասխան նպատակներով, մի կողմից 15 հոդվածի 1-ին կետի (ա) – (c) Ենթակետերում նշված հանցագործությունները, մյուս կողմից 15 հոդվածում նշված հանցագործությունները չպետք է համարվեն ոչ քաղաքական հանցագործություններին առնչվող հանցագործություններ և ոչ էլ քաղաքական շարժառիթներով կատարված հանցագործություններ: Դետեկտար, այդպիսի հանցագործությունների համար հանձնման կամ փոխադարձ օգնության պահանջը չպետք է մերժվի այն միակ պատճառով, որ այն վերաբերում է քաղաքական հանցագործություններին, կամ կապ ունի քաղաքական հանցագործությունների հետ, կամ ունի քաղաքական շարժառիթներ:

2. Սույն Արձանագրության ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես

հանձնելու կամ փոխօգնություն տրամադրելու պարտականություն պարտադրող, եթե հայցվող Կողմը լուրջ հիմքեր ունի կարծելու, որ ըստ 15 հոդվածի 1-ին կետի (ա) – (c) Ենթակետերում նշված հանցագործությունների համար հանձնման պահանջը կամ 15 հոդվածում նշված հանցագործությունների համար իրավական փոխօգնության խնդրանջը ներկայացվել են ռասայական, կրոնական, քաղաքացիության, եթենիկ ծագման կամ քաղաքական հայացքների շարժառիթներով տվյալ անձին հետապնդելու կամ պատժելու նպատակով, կամ այդ խնդրանջն ընթացք տալը կազդի այդ անձի վիճակի վրա վերոհիշյալ պատճառներից որևէ մեկի համար:

### Հոդված 21

#### Միջոցառումներ այլ խախտումների դեպքում

Զագրելով հանդերձ Կոնվենցիայի 28 հոդվածի վրա, յուրաքանչյուր կողմ պետք է ընդունի համապատասխան օրենսդրական, վարչական և կարգապահական միջոցառումներ, դադարեցնելու համար հետևյալ միտումնավոր գործողություններից որևէ մեկը.

- Կոնվենցիայի կամ սույն Արձանագրության խախտմամբ մշակութային արժեքի ցանկացած օգտագործում,
- գրավյալ տարածքներից մշակութային արժեքի ցանկացած ապօրինի արտահանում, տեղաշարժ կամ պատկանելության փոփոխություն՝ Կոնվենցիայի կամ սույն Արձանագրության խախտմամբ:

### Գլուխ 5. Ոչ միջազգային բնույթի գինված ընդհարման դեպքում մշակութային արժեքի պաշտպանությունը

### Հոդված 22

#### Ոչ միջազգային բնույթի գինված ընդհարումներ

1. Սույն Արձանագրությունը կիրառվում է ոչ միջազգային բնույթի ընդհարման դեպքում, որն ընթանում է Կողմերից մեկի տարածքում:

2. Սույն Արձանագրությունը չի կիրառվում ներքին անհանգստությունների և լարված իրադրությունների դեպքում, ինչպիսիք են խոռվությունները, բռնության առանձին կամ եզակի գործողությունները և նման բնույթի այլ գործողությունները:

3. Սույն Արձանագրության ոչ մի դրույթ չի կարող վկայակոչվել ազդելու